ՕՐԱԳՐԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ·

1859.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑՔ·

ԱՄՍԱԳԵՏՐԱԿ 10.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

Մեռելահարցուկ· գրած Մ· Նալբանդեանց· · · ·

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1859 ԹՈՒԱԿԱՆԻ

ՌԸՆԿԵՍԻՐԱԿԱՆԿ·

—

ՄԵՒԻԼԸՀԱՐՅՈՒԿ·

ԳՈՐԾ

ՄՒՔԱՅԷԼԻ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ·

(Շարունակութիւն·)

Ժ·

Այն քաղաքի մէջ, ուր անցանուամէին վերևւում պատմած անցքերը, վաղուց տհա բնակվումէր Պ· Յովհաննեանցը: Այս անունը առաջին անգամ պատահումէ մեր ընթերցողներին, ուստի պարտականութիւն ենք համարում մի փոքր տեղեկութիւն տալ նորա մասին, որ յետոյ կարողանանք նորա տանել մեր ընթերցողքը նորա տունը· այն րոպէին երբ կոմս Չմմինտուէլը անձնատուր եղած վերամղձութեան ուղղումէր ընթացքը դէպ ի իր օթևանը:

Պ. Յովհաննեանցը, որպէս, Հայկի աչքով, մի փոքր ի շատէ հարուստ վաճառականի դործակալ, դեռ ևս իւր երիտասարդութեան ժամանակ ուղարկված էր այս տեղ: Նա բաւական միջոց յառաջ վարելով իւր պարոնի դործերը այս քաղաքում, ի հարկէ ոչ առանց անձնական օգտի, վերջապէս դարձել էր նոյան ընկերակից: Ընութեան մէջ կայ մի օրէնք, եթէ միաւորումէ կամ խանդարվումէ որ և իցէ զգայարանը մարդու, կամ այլ կենդանու կաղմուածքի, իսկոյն մի այլ զգայարան աւելի զօրութիւն և նրբութիւն ստանալով կատարումէ, դոնէ կիսով չափ, այն խանդարված զգայարանի պաշտօնը: Կոյր մարդերի ձեռքի մատները կամ առ հասարակ շօշափողական ջլերը այնպէս զօրանումեն և նրբանումեն, որ մի մաշված դրամ ևս շօշափելով կարող են հասկացնել կուրին դրամի որպիսութիւնը և արժէքը: Տեսողութիւնը խուլ մարդերի նրբանումէ և զօրանումէ մինչև այն աստիճան, որ առանց մի ձայն լսելու, միմիայն նայելով խօսողի բերանի, դէմքի և ձեռքերի շարժողութիւններին, խուլը կարողանումէ հասկանալ թէ ի՛նչ էր ասում նորա հանդէպ կանդնած մարդը: Այս օրէնքը, բնական և բժշկական դիտութիւնների մէջ, յայտնի է անուններս անտագոնիսմոս (Antagonismus).

Չնայեւ թէ այս, կամ սորա նման մի օրէնքի հիմքի վերայ, կամ դուցէ մի այլ բնական պատճառից, Պ. Յովհաննեանցը, ամենևին զուրկ լինելով կրթութիւնից և դաստիարակութիւնից, շատ վարժ և յաջող կերպով սկսեց իւր առևտրական դործողութիւնքը: Նա ձեռք էր զարկում դործերի նոյն վստահութեամբ, ինչ վստահութեամբ հմուտ և վարժ որսորդը ուղղումէ իւր հրացանը որսի վերայ, հաւատալով որ շուտով պիտի դեամին ընկնի որսը որսորդի օգտի համար: Պ. Յովհաննեանցի բազդից, ժամանակը ձեռնտու էր նորան, բաների կարդը ևս յաջողումէր.... Մի քանի ժամանակից յետոյ սկսեց նա ձեռք զարկել մեծ մեծ դործերի. սկսեց իւր վերայ առնուլ զանազան տէրութիւնական պաշարներ պատրաստելու պարտականութիւնք:

Ո՛վ ճնաչէն նորա նախկին պարոնը կամ ընկերակիցքը. նա սկսեց նայել նորա վերայ այնպէս, ինչպէս մի մարդ կը նայէր բարձր աշտարակից դէպ ի վայր, փոքր ինչ յառաջ, իւր հետ միասին մի յատակի վերայ կանդնող մարդերի վերայ: Զար լինէր ասումէին.... ի՛նչ ասումէին.... ասումէին, թէ.... ին-

չէր չէն ասում չար լեզուները.... Նա հասարակ պիտի իմանալ, որ այսպիսի գործողութիւնների մէջ մտանող մարդը, եթէ հետևում այն վարդապետութեան, թէ նպաստակը կը սրբէ հնարը, ապա ուրեմն շատ հեշտութեամբ կարող է կարճ ժամանակից միլիոնների մասին խօսք բանալ. ըստ որում, որքան քայլ, այնքան շահասացութիւն: Այլ ձշմարիտը պիտոյ է ասել, ինչո՞ւ չէ պիտոյ օգուտ քաղել դիպուածներից, օգուտը գողութիւն չէ, յափշտակութիւն չէ, այլ յառաջ է բղխում գործերը օրինաւոր և խելացի կերպով յառաջ վարելուց: Գնենք, թէ ես պարտականութիւն էի առել իմ վերայ Տէրութեան ղօլքի համար պատրաստել մի բան, ասենք թէ կօշիկներ: Նա այսպէս, ինձ յանձնած է երկու հարիւր հազար կօշիկ պատրաստել. իւրաքանչիւր կօշկի համար ես պիտի ստանամ, դնենք թէ մի և կէս մանէթ: Այլ այն կօշիկը, որ ցոյց էին տուել ինձ որպէս գաղափար, որի նմանը ես պարտական էի հատուցանել կառավարութեանը, ինձ նստելու էր մի մանէթ և մի քառորդ, և այս կերպով ամեն մի կօշկից իմ ստանալին էր մի քառորդ, այսինքն է քսան և հինգ կոպէկ ալծաթ. միթէ յիմարութիւն չէ լինելու իմ կողմից, եթէ աւելի ստոր արժանաւորութեան նիւթերից չպատրաստեմ կօշիկները, այնպէս որ իւրաքանչիւրը ինձ մի մանէթ նստելով, կէս կէս մանէթ ղուտ օգուտ բերէին:

Նա այսպէս պ. Յովհաննեանը յառաջ գնալով, արդէն վաղուց և ընտանիքի տէր դարձած էր: Ունէր բաւական մեծ գերդաստան, կին, որդիք, դստերք, որոնց բաց ի նիւթական հարստութենից ոչինչ ունէր թողնելու, ըստ որում հոգաբարձու չէր եղած իւր զաւակների կրթութեան մասին: Պարոնը ապրուստի բաւական լաւ, և նորա մօտ ել ու մուտ ունէին ոչ թէ միայն նորա նման մարդիկ, այլև.... զանազան խորհուրդներով: Պ. Յովհաննեանցի տեսութեամբ, բոլոր աշխարհը շարժող և կառավարող ոյժը և զօրութիւնը էր ալծաթը, և նա այնպիսի մարդկերից էր որոնք դեռ ևս զարմանում են, թէ ինչպէս Աստուած ստեղծել է աշխարհը առանց մի օգտի ակնկալութեան, և թէ ինչպէս ամենայն օր երկնքի լուսաւորիչը լուսաւորում երկիրը առանց մի բան ստանալու: Այս պարոնը ունէր նոյնպէս մի քանի եղբայրք, որոնցից փոքրը աւելի մօտ յարակցութիւն ունէր մեր նկարագրած պարոնին քան թէ միւսքը: Անունը և ազգ

տերքը տէր լինելով աւելի հարստութեան, քան թէ իւրեանց կարգի շատ մարդիկ, դատապարտելի հպարտութեամբ նայուածքին ուրիշներուն վերայ, և նոցա հայեացքի մէջ կար մի թողնաւոր բան, որ հանդիպողին երեսին էր զարկում սորա չքաւորութիւնը, իսկ իւրեանց հարստութիւնը։ Պատերքը, այսպիսի ուղղութեամբ և այսպիսի խանդաղմած բարոյականութեամբ ատմոսֆերայի մէջ աճելով և կրթվելով, դեռ ևս երեխայութենից սկսեցին մարդու երջանկութիւնը որոնել ամենայն տեսակ զեղխութեան մէջ։ Որդիքը, միանգամայն մարմնից բաղկացած, բթացած ուղեղներով և առ թէ արբեցած իւրեանց հօր հարստութեամբ, բոլորովին անզգայացած դէպ ի ամենայն մարդկային և վայելչական բան, իւրեանց անուսումնասիրութեան և անընդունակութեան պատճառով, դուրս քշվեցան դպրոցից, ուր գրել էր նոքանց նոցա հայրը, ոչ այն դիտաւորութեամբ, որ բան ուսանէին, (պ. Յովհաննեանեանցը, իւր տրտում, առեցող էր ամենայն լուսաւորութեան), այլ մանաւանդ, ուրիշներին բամբասանքի տեղիք չտալու համար, որպէս թէ զանցառու էր զաւակներին կրթութեան մասին։

Ինքը պարոնը, ինչպէս տեսոր լինելոյն չնչին դրութենից վեր բարձրացող մարդիկը, (թէպետև պ. Յովհաննեանեանցը զգրկ էր ամենայն բարոյական բարձրութենից) սեպհականել էր ինքեան մի յիմար հպարտութիւն, և ամենայն հասարակութեան մէջ կամենում էր խելացի մարդու պաշտօն վարել։ Նորա ամեն մի քայլը, ամեն մի շարժուածքը հաշուած ու համարած էին, որպէս զի, մի փոքր ծանրութիւն բոլքի տալով ինքեան, դրաւէ տեսողների համարումը։ Նա նա սխալված չէր իւր հաշուում։ Նոյոց ազգի մէջ դժուարին չէ ստանալ մեծարողականն պատուանունները, որովհետև նախ և յառաջ տուողքը չգիտեն իւրեանց արժանաւորութիւնը. երկրորդ, այդ պատուանունների արժանաւորութիւնքը։ Աւրկ չկայ ասելու, որ այս ձանձալարհով առաջացը լինում բոլորովին անխորհուրդ։

Մինչ պարոնը, մանաւանդ խաժամուժ ամբոխի աչքերը ներկելու համար, աղքատիութիւն էր գոյց տալիս այնպիսի տեղերում և դիպուածներում, ուր հարկ չկար իւր ցանկութիւնը խոկոյն գործով ապացուցանելու։ Ինչ մի դժուար բան է խօսքերով միայն լինել ազգասէր և այնպիսի տուր շատախօսու-

թեամբ, առանց ամենայն ըմհաբելութեան, ուծնացուցի մէջ գըրուելու արժանի համարվել . . . . Ա՛ր մէջ, ինչ ասես կարելի է: Պ. Յովհաննէսեանցը խօսումէր դպրոցների վերայ և բերան սերտած բառերով հաստատումէր նոցա օգուտը, առանց ամենևին զաղափար ունենալու, թէ ի՛նչ ասել է դպրոց, և թէ ինչպէս պիտի լինէր նա, որ լցուցանէր իւր խորհուրդը: Պարոնը կը լինէր այսպէս մօտ յիսուն տարեկան, միջակահասակ, հաստափոր և ձաղատ ձակատով. նորա յօնքերի և ընչացքների սևութիւնը մանաւանդ աւելի որոշակի յայտնի էր լինում նկատողին, ոլքան անսանական անհոդութենից ուռած թշերը կարմրութիւն նորա անխորհուրդ երեսի վերայ:

Նթէ ինձանից հարցանէին, թէ ո՛ր բանից մանաւանդ զզվուելեմ աշխարհի երեսին, ասլա, պատասխանելու էի, թէ մի երեսից ոչ ոչինչ մարդկային բան չէր ցոյց տալիս: Նրեսը արդարև հոդու պատկեր է. հոդու ամեն մի շարժուածքը ջնջրի անբացատրելի միջնորդութեամբ երեսումեն երեսի գծերի վերայ: Նս երեսը, որ ոչինչ էր ցոյց տալիս, վկայումէ ոչնչութիւնը հոդու, որ նրսուած էր մի կաղմուածքի մէջ: Նս գերազասութեամբ չքութիւնը, քան թէ լինելութիւնը, նթէ մարդը պիտոյ է լինէր ու ապրէր որպէս մի լոկ բուսական կամ շնչական արարած: Նս անգութ չեմ դէպ ի որ և իցէ արարած, բայց դորա վոխանակ յարգուելեմ նորանց իւրեանց տեղում: մարդկային պատկերի տակ անասնութի՞ն . . . . կղկղանք մարդկութեան:

Բայց պ. Յովհաննէսեանցի համար, այսպիսի մտածութիւնք երազի նման էս չէին, մինչ ամբողջ դիշերը թաւալվուելիս իւր անկողնի մէջ խռխռալով: Նա քնած ժամանակը էս մտածութեր շահատացութեան վերայ. առաւօտը զարթնուելիս և նորա կիսաբաց աչքերին երևնումէին ոսկեղէն տոլեր: Նա հաց էր ուտում առանց մուանալու ձիշդ մաթեմատիկական հաշիւը, թէ այն օրվայ ձաշի համար ծախված արծաթից, ոլքան բաժին հասանումէր այն վերջին, ամենափոքրիկ հացի փշրանքին, որի տասը կտորը միասին կալող էր տանել մի մրջիւն դէպ ի իւր բունը:

Նա ստացել էր քարնայ, երկու յարկով բուսական ընդարձակ տուն, և այս տան գլխաւոր արժանաւորութիւնը էր այն, որ մի և նոյն ժամանակ պատկանումէր երկու փողոցի. նորա պատու-

հանքը նայուածքին դէպի արևելք և արևմուտք։ Ծովը ոլքան կամին զըպաւտեն Պ. Յովհաննեանցին, որպէս թէ նա հոդաբարձու չէր իւր ընտանիքի երջանկութեանը։ Նորա այսպիսի տուն ընտրելը արդէն հիմնաւորապէս ապացուցանուած, թէ ոլքան շատ մտածուած էր և հոգս էր առնում իւր ընտանիքի մասին։ Մի խօսք տան մէջ նորա ընտանիքը կարող էին ձանձրանալ, բայց մի այդպիսի տան մէջ, որի պատուհանքը նայուածքին դէպ ի զանազան փողոցները, երբէք չէր կարելի ձանձրոյթի ղաղալ, որովհետև մանկահասակ զաւակները երբեմն այս և երբեմն այն պատուհանից կարող էին մի անմեղ հայեացք ձգել անցաւորի վերայ։ Ո՛ւր թողունք այն մեծախոհութիւնը Պ. Յովհաննեանցի, որով մի ապահովագրմ սենեակ ևս յատկացուց իւր տան կողքին, որի ծաղկազարդ վայելչութիւնը կարող էր տրամադրել պատանի օրիորդների սիրտը և հոգին դէպ ի մի օրհնական կեանք ....

Պ. Յովհաննեանցի մասին այսքան տեղեկութիւն տալուց յետոյ, շտապումեմ սկսանել իմ պատմութիւնը այն րոպէից, երբ, ինչպէս ասացի, կոմս Նմմինոուէլը գնում էր իւր օթևանը։

Ընդհէն բաւական ուշ էր, և Պ. Յովհաննեանցը միայնակ նստած իւր առանձնասենեակում նայուածքը ձրագին, որ չգիտէ ոչինչ անտեսութիւն և անխնայ վառվում տան տիրոջ վճասի համար։

Գոնաթափած էր երեսը և քրտինքը դուրս էր գալիս ճաղատ ճակատի վերայ կաթ կաթ, ամենևին նոյն կերպով, ինչ կերպով իւղոտ ամանի մէջ կանգնում սրսկած ջուրը։ Նեղութեան կամ բարկութեան ժամանակ ձեռքերը ճնշել և տրորել ժառանգութիւն է փոքրոգի մարդերի, պարոնը վեր կացաւ սոֆայի վերայից, ուր ընկած էր որպէս մի շնչաւոր և ձեռքերը տրորելով սկսեց մեն գալ սենեկի մէջ զանազան ուղղութեամբ, անհաւասար քայլերով։

«Չէ», ասաց նա,» պիտի այս բանի առաջը առնում։ անշուշտ վատ կը լինի սորա վերջը և կը խայտառակվի իմ տունը այս քաղաքի մէջ մինչ ի սպառ։ Նա շատ անբաղդ մարդ է մի,» շարունակեց նա, «անբաղդ, որպէս եղբայր, անբաղդ, որպէս ամուսին, անբաղդ, որպէս հայր։ Նա այս քանի տարու մէջ ինչ բաներ անց կացան իմ դլխից. և այդ բոլոր անախորժութիւնների, վատահամբաւութիւնների պատճառքը ծովքեր են. եղբայր, եղբօր

կին, դատելք, փեսայ, որդիք և վերջապէս ամուսին։ Ստոյգ է, որ ասուածն, թէ աշխարհի երեսին, ամենայն լաւութիւն վճարուած ապերախտութեամբ։ Նշեալս որ, եթէ ես չլինէի պիտի ծառայ լիներ ուրիշին, դլխատուր պատճառն է այս բոլոր բաներին։ Նորա կինը, թէև գեղեցիկ հռչակուած, սակայն իմ ընտանիքի համար դարձաւ մի անախորժութեան անլուծանելի մակարդ։ Ո՛վ ձանձրալարհից հանեց իմ դուստրը, եթէ ոչ նա՝ ով սովորեցուց նորան.... ա՛հ, մոռնալը անգամ դառն.... իսկ որդիքս, որդիքս· ինչ առնեմ, ուր ասեմ, իմ երեսի կեղտը պիտի որ ես ինքս ծածկեմ օտարների աչքից....»

Մինչ դեռ այսպիսի մտածմունքով մեն էր գալիս նա տան մէջ, ներս մտաւ ծառան և յայտնեց բժշկապետի գալը։ Պ. Յովնաթանեանցը խոկոյն ընդունեց մի պատուաւոր դուրթիւն և, աշխատելով մի փոքր դործունեայ մարդու կերպարանք ցոյց տալ բժշկապետին, յօնքերը մօտ քարշեց աչքերին։

Դուռը բացվեցաւ, և բժշկապետը երևեցաւ շեմքի վերայ։

Սովորական ողջունատուութենից յետոյ, Պ. Յովնաթանեանցը հարց արեց·

«Ինչպէս դուաք»։

— Չէ կարելի դովել, — պատասխանեց բժշկապետը։ — Նորա հիւանդութիւնը խճճվում է վերահաս ախտաւոր յայտնութիւններով։ Վաչ գիտէք դուք, որ նա եղած չէ իմ բժշկական հոդաբարձութեան տակ իւր ամուսնութենից յառաջ· ես այն օրից տեսայ ձեր դուստրը, երբ նա կարօտեցաւ իմ մանկաբարձական օգնութեանը։ Նորա, յառաջուց ունեցած, հիւանդութեան մասին այսքան միայն լսած եմ բժշկող պարոններից, թէ յառաջանումէր արիւնի անկարգ շրջանառութենից սեռական գործարաններում։ Նա ընդունում եմ յարդելի բժիշկների վկայութիւնը, որպէս ստոյգ իրողութիւն։ Վարդկային կազմուածքը բաղկանում է զանազան գործարաններից, որոնք մեծ յարակցութիւն ունին միմեանց հետ. նոցանից մինը խանգարվելով, խանդարում է միւսը, որով շատ անգամ վտանգվում է ամբողջ կազմուածքը։ Դուք դանդատիլ էք ինձ շատ անգամ, թէ ձեր դուստրը երկար ժամանակ ունեցած էր Նպիլեպսիա, և թէ այժմ, թեպէտ և չէ երևում, սակայն ստէպ ստէպ սաստիկ ծանրանում նորա շնչառութիւնը։

Ինչ ասեմ. եթէ բժիշկ, կամ դէթ բնագէտ լինէիք, կարող էի հասկացնել ձեզ, թէ սեռական գործարանների մէջ արիւնի անկարգ շրջանառութիւնը, ինչ կերպով ծանրացնում է շնչառութիւնը: Այդ այժմ, ոչքան էլ բացայայտեմ, միևնոյն ժամանակ դուք հասկանալու չէք. այս էլ կայ, որ ձեզ այնքան հարկաւոր չէ ցուցի պատմութիւնը, ոչքան այդ տկարութեան դարմանն տանելու հնարը:

«Ընդհանուր ճշմարտութիւն է, որ խօսում էք», ասաց Պ. Յովնաթանեանցը, և էս մեծ յօժարութեամբ պատրաստ էի լսել ձեր մարդասիրական խորհուրդը»:

— Այո ասացիք, — պատասխանեց բժշկապետը. — իմ տալու խորհուրդը չէ միայն բժշկական, այլև բարոյական. տարակոյս չկայ, որ բարոյականութիւնը հիմնված է մարդասիրութեան վերայ:

«Ուղղն դրել էր, Ճռաքաղը էս հաստատեց....

— Ես չգիտեմ թէ ինչ է դրել մինը և ինչ է հաստատել միւսը, բայց իմ խորհուրդը, — շարունակեց բժշկապետը, ընդհատելով Պարոնի խօսքը:

Պ. Յովնաթանեանցը իւր կարգով ընդհատեց նորա խօսքը. «Պարոն բժշկապետ, ես բարեխղճութեամբ և գործակալ էի Ուղղին. Ճռաքաղը էս հետի չէ միացել իմ շնորհից, խնդրեմ չմոռանալ»:

— Այդ բաները այնքան աննշան են և մանաւանդ անխորհուրդ ձեր դասը բժշկութեան մասին. որ չգիտեմ, թէ ինչ մտածեմ, թէ ինչ պատճառով մէջ էք բերում այդ բաները:

«Դերողութիւն, ներողութիւն, ինձ թուեցաւ թէ աղդասիրութեան վերայ ենք խօսում ձեր հետ»:

— Ուրեմն դուք չգիտէք ձեր խօսածը, և ինչպէս վարձկան լալականը ննջեցեալը տունը տեսածի պէս սկսանում է իւր ողբը, այնպէս և դուք մեքենաբար խօսում էք այդպիսի բաներին վերայ, առանց դրա....

«Ես շատ պարապած եմ, ուստի շատ անգամ շփոթվում եմ», պատասխանեց Պ. Յովնաթանեանցը, ծածկելով իւր տհաճութիւնը: «Միայն խնդրում եմ լսել ձեր խորհուրդը, որի պատճառով այսքան խօսք յառաջացաւ»:

— Իմ առաջին և վերջին խորհուրդը այս է, որ յետ հրաւիրէք դուք ձեր փեսան.... Համաձայնեցէք ինքներդ ձեր դուս-

որը դատավոր մի պատանեկութեան հատակում նա սովորած լինելով քնքշութեան, ալուհատական կերպով դարձել է մի ջլային խառնուածքի աէր. կենակցութիւնը իւր վեհապի հետ այս դարման միակ հնար է կին մարդկի համար, ազատվելու իւրեանց ծնողների կամ ամուսինների խօսքերից և նկատողութիւններից. մանաւանդ որ ձեր դաստը, ամենայն օր շրջապատած է հրապոյրներով, ամենայն օր բոլբոքված է նորա ուղեղը .... ես կարճ եմ ասում ձեզ, որ ևթէ դուք չկատարէք եմ առաջարկութիւնը, ձեր դաստր բանը շատ և շատ վատթարանալու է:

«Վերկայումն այդ առաջարկութիւնը կատարել ինձ ամենևին անհնար է», պատասխանեց պ. Յովհաննեանցը:

— Նայց ձեր դաստր համար արդանդի կատաղութիւն (Nymphomania) ստանալը ամենևին հնարաւոր է, — պատասխանեց բժշկապետը գերմանական ստուգութեամբ:

«Դուք վաճառական չէք և ոչինչ հաշիւ չդիտէք. վաթսուն հազար մանէթ ....

— Լսէ ձեր համար բաց ի մանէթներից, այլ բան չկայ աշխարհի երեսին:

«Այնթէ դուք առանց օգտի կատարումէք ձեր բժշկական պարտքը»:

— Նա ոչ ոքին պարտական չեմ ձրի ծառայել. բայց իմ համար, իմ անձին համար, միշտ չնչին արժէք ունի արծաթը:

«Այդ կորստական սկզբունքը հերիք պատճառ է, որ դուք չհպատակայիք երբէք»:

— Դորա վոխանակ, դուք հպատակել էք. բայց արծաթի ժամդը նստել է ձեր ուղեղի վերայ: Երբէք ցանկանալու չէի այդպիսի հպատակութեան:

«Դուք չափից դուրս էք դնում»:

— Դորա համար, որ դուք երբէք չէք եղած չափի տակ. և ձեր այդպիսի անբարեխառնութիւնը ցոլանում ձեր ընտանիքի և ձեր զաւակների վերայ: Պարոն, խնդրեմ, թոյլ տուեցէք ինձ, որպէս բժշկապետի, մի քանի նկատողութիւնք առնել ձեր ընտանեկան կեանքի մասին, բարի խորհրդով:

«Լսէ ես, խնդրեմեմ, պարոն բժշկապետ, ևթէ հնար է աղատ թողուլ ինձ ձեր նկատողութիւններից. պատճառ ամենայն խրատ և խորհուրդ որ ուղղակի վերաբերվում էին իմ ընտանեկան

կեանքին որ մի բան ևս հաստատակաց չունի ձեր հետ, պատշաճ չեմ համարում լսել»։

— Ով ձեր ընտանեկան կեանքը մի բան ունի՞ հաստատակաց իմ հետ, կամ ինչպէս և ու՛ր չափով ունի, այդ եթէ դուք ուրանաք, քաղաքը վկայումէ.... ես այժմեան կամէի միայն վկայութիւններով և աշխարհի երեսին կատարված փորձերով ապացուցանել ձեզ, թէ մի ընտանիք, ինչպէս ձերն է, երբէք ձախակելու չէր երջանկութեան քաղցրութիւնը։

«Հնչու այդպէս խիստ պատժումէ Նախանձամոլութիւնը իմ ընտանիքը»։

— Ո՛հ, սխալվումէք, պարոն, այդ Նախանձամոլեան դրօծը չէ։ Նախանձամոլիւնը միօրինակ պահպանումէ և դարմանումէ ամբողջ տիեզերքը առանց խորութիւն առնելու թէ այս միևը մարդ էր, իսկ այն միւսը մի խեղճ ձկի։ Նախանձամոլեան դոդումն հաւասարապատիւ զաւակներ են բոլոր պարագաքը, որ դոյանումեն և պահպանվումեն բնութեան մէջ։

«Ես մի ժամ յառաջ ինձ համարումէի անբաղդ, բայց այժմ տեսանումեմ, որ դուք առաւել անբաղդ էք եղած, քան թէ ես։ Հաւասարութիւն որոնել այս աշխարհումն, արդէն թշուառութիւն է։ պատճառ մի մարդի չափով ևս խելք չկայ դորա մէջ։ Հնչպէս կարելի է, որ ես իմ պատուանունեներով և պատուանշանեներով հաւասար լինիմ իմ եղբօր հետ, որ ոչինչ ունէր։ դուք ուրանումէք մարդկային արժանաւորութիւնը, պարոն բժշկապետ»։

— Ես խոստովանումեմ և քարոզումեմ մարդկային արժանաւորութիւնը մարդութեան և ոչ արտաքին, պատահական, կամ դնած պատիւներին մէջ։ և դուք, դերադաս համարելով ձեզ քան թէ ձեր եղբայրը, տեղի՞ք ունէիք բամբասել Նախանձամոլութիւնը, թէ նա էր պատճառը, որ ձեր ընտանիքը ձախակելու չէր երջանկութեան քաղցրութիւնը։ Ուր չէ խոստովանվումէ մարդկային հաւասարութիւնը, ուր իւրաքանչիւր մարդ կցորդ չէ ազատութեան հաւասարապէս, այն տեղ թագաւորումէ մրցութիւնը։ Եվ ուր մրցութիւն է, չկայ հոդու խաղաղութիւն, այն տեղ տիրումէ մի դժոխային ամբոխումն և նախանձի որդերը եռ են գալիս այն ապականեալ սրտի վերայ։

«Աղեւոք այդ բաները յարակցութիւն ունէին՞ ի՛մ դատի հիւանդութեան կամ բժշկելու հնարի հետ»։

— Ընտարակոյս, այո՛։ Բժշկութեան մէջ գործածատար են ոչ միայն զանազան մարմինք, որ շատ անգամ պիտոյ էր ըզուշութեամբ ներս բերել հիւանդին կազմուածքին մէջ, այլ, գլխաւորապէս հոգին։ Որ և իցէ անախորժութիւն կանդարելով հոգու և սրտի անդորրութիւնը, ձգումն ամբողջ կազմուածքը մի ալէկոծված վիճակի մէջ։ Այսպիսի վիճակում ոչ թէ միայն չէ կարելի հիւանդը բժշկել այլև առողջ մարդին կարող են հիւանդացնել և մեռանել եւս։ Դո՛ւք, ձեր տարապայման ժլատութեան պատճառով, չկամեցաք կատարել ձեր խոստումնքը, որ արել էիք ձեր փեսային, հարկադրել էք նորան հեռանալ ձեր ընտանիքի միջից.... Երկիք չէր այս, դուք լաւ էք պահել ձեր մօտ նորա ամուսինը, որ, աստուածասէր և քաղաքական օրէնքներով, պարտական էր հնազանդվիլ նորան և գնալ նորա քովակից։ Մի՞թէ այս անբնական գործողութեան հետեւանքը չէ, որ այսօր ձեր դուստրը դատավճռում այդ վիճակում։ Յայտնի բան է, մինչդեռ ձեր փեսան հեռանում էր այս քաղաքից, դուք մնացեիք, թէ ոչինչ պակասելու չէր ձեր դատերը այս տեղ, բայց մեռացաք, որ պակասելու էր նորան մի մարդ, որի պաշտօնը օրինաւոր կերպով ոչ ոք չէր կարող լցուցանել, և որի հետ զուգված էր ձեր դուստրը այնպիսի անքակտելի կապերով, որ մարդու ձեռքը իշխանութիւն չունի բաժանել։ Դո՛ւք չարաչար գործ դրեցիք ձեր ծնողական իշխանութիւնը, որ, զաւակի ամուսնութենից յետոյ, վերջանում էր իսկոյն. դո՛ւք չարաչար օգուտ քաղեցիք ձեր հարստութենից, և առանց մարդկային սրտի զգացողութեան ընթանալով ձեր դատերւ և փեսայի հետ, նորա հոգու անդորրութիւնը փոխանակեցիք արծաթի հետ.

Պ. Յովհաննէսեանցի երեսը ծածկվեցաւ կարմրութեամբ, տհաճութիւնը կաթում էր նորա մեռած աչքերից։ Նա վերջին ջանքը գործ դրեց իւր անձը սառնարիւն ցոյց տալու, որովհետև ձեռնտու չէր պատերազմ յայտնել բժշկապետին, նախ, որ նա գիտէր Պ. Յովհաննէսեանցի բոլոր ընտանեկան գաղտնիքը, և երկրորդ, որ պարոնի ընտանիքը միշտ կարօտ էր բժշկապետի այցելութեանը....

«Ո՛նչ պիտոյ է առնել», ասաց Պ. Յովհաննէսեանցը, մի

փոքր ուշդվելով, «երբեմն զանազան հանգամանք ստիպուժեն մեզ այլապէս ընթանալ, քան թէ ցանկանումիմք»։

— Ա՛րդը կորուսանումէ իւր արժանաւորութիւնը, եթէ կամք չունի, եթէ գործադրումէ նորա մէջ ձգտողութիւնը։ Ա՛ր պարտականութիւնն է պատերազմել հանգամանքներուն հետ և հողի հետ չհաւասարվիլ ամեն մի հանգամանքի առաջև, որպէս մի անքան անասուն կամ մի կոտոր կապերտ։

«Իւրեմն ձեր վերջին խօսքն է հրաւիրել իմ միտքս, որի երեսը ցանկալի չէր ինձ տեսանել»։

— Այո՛, այդ է իմ վերջին խօսքը։

«Համաձայնեցէք, պարոն բժշկապետ, որ դուք ձեր խորհուրդը տուեցիք ինձ շատ խիստ խօսքերով»։

— Ա՛շխատութիւնը միշտ աչք է ծակում։

«Ա՛շխատութիւնը մի վերացական բան է, որով ամենայն մարդ արդարացնումէ իւր գործերը»։

— Այո՛, և գողերը և յափշտակողքը կամին հաւատացնել աշխարհին, թէ իւրեանց կողմում ունէին ձշմարտութիւնը, բայց այդպիսի դիպուածում չարաչար էր գործ դրված ձշմարտութեան անունը։

Վերջին խօսքերը ասելով դուրս դնաց բժշկապետը, իւր արծաթապահի մէջ դնելով մի տան մանէթանոց թղթարծաթ։

Պ. Յովհաննեանցը մնաց միայն։ Ժամը մօտ էր տասն և մինին։ Նա հնչեցուց զանգակը և երևեցաւ սպասաւորը։

— Պօղոս, — գանչեց պարոնը, — կոչի՛ր շուտով Գրիգորը։

Գրիգորը դվնաւոր գործակատար էր Պ. Յովհաննեանցի, և նորա ձեռքում էին բոլոր գործերի հաշիւքը։

Հասակելով ներս մտաւ գործակատարը։

— Ի՞նչ շինեցիք գործարանում, — հարց արեց Պ. Յովհաննեանցը։

«Ինչպէս հրամայել էիք, տուեցի գործաւորներին հարիւր քառասուն փութ արձիձ....

— Սատիկ պատուիրեցի՛ր, որ ոչ ովին բան չասեն։

«Այո՛, ասացի։ Նրբը կ՚աւարտէք գործողութիւնը, յաւելացուցի, պարոնը կը պարգևէ ձեզ բաւական մեծաքանակ արծաթ արաղի համար», պատասխանեց գործակատարը, ստրկական պատկառանքով։

— Շատ լաւ. եթէ խօսք դուրս չկայ գործատուներից, ոչ ով ոչնչէ չէ իմանալու: Ընդքան կլայեկի մէջ հարիւր քառասուն փուդ արձիձը մի մեծ բան չէ.... ընդունողը վաղուց ստացել է երկու հազար մանեթ.... անտարակոյս, ընդունելուց յետոյ մի բան դարձեալ պիտոյ է սևցնել նորան:

«Աչքո՛ւ, իմ պարոն. բայց դուք շատ լաւ իմանում եք այս գործերը: Աշխատաւորքը գործատանում անճնատուր են մեզ, ընդունողը արդէն յառաջուց պատրաստված.... ոչնչէ երկիւղ չկայ: Եթէ կը նկատէք համարձակութեան, դուք բաւական օգուտ կ'ստանաք այս գործողութենից:

— Լա՛ւ, բաւական օգուտ, — կրկնեց քէմի տակից պարոնը, — բայց ի՛նչ արժէ ինձ այդ օգուտը, և ի՛նչ է մնում նորանից ինձ սեպհական: Աչս մինին բերանը ծուխիր, այն միւսին ընծայ տուր.... իսկ ո՛րքան դողալ հարկաւոր է, մինչև այդ բոլորը ամենայն ապահովութեամբ կ'անցանէ ձեռքից: Ամենայն անգամ ես դիտեմ, թէ ի՛նչ եմ կլուծ. Վեզուրատամենտի դուռները մաշվեցան:

«Ո՛չ, ձեզ դիտեն....»

— Գիտեն, դիտեն, բայց առաջին ժամանակները չեն այժմ: ասես թէ իմ աստղը վայր է ընկել երկնքից:

Պարտականութիւն կայ մեր վերայ, պարզելով այս խօսակցութիւնքը մի փոքր հասկանալի կացուցանել մեր ընթերցողներին բանի խորհուրդը:

Պ. Յովնաթանեանցը իւր վերայ էր առած տէրութենական հիւանդանոցների համար պատրաստել, չդիտեմ թէ որքան կլայեկայ անօթներ և ամաններ: Աչժմեան հոգաբարձութեան խորհուրդը այն էր, որ հարիւր քառասուն փուդ արձիձ խառնվի կլայեկի մէջ: Սորա հետևանքը լինելու էր այն, որ կառավարութիւնը այդ արձձի քանակութիւնը պիտի ստանար որպէս անդրևական կլայեկ: Կարծում ենք, թէ այժմ կը հասկանան մեզ, մանաւանդ նոքա, որ փոքր ի շատէ գաղափար ունին կլայեկի և արձձի արժողութիւնների վերայ:

Մինչդեռ խօսում էր պարոնը իւր գործակատարի հետ, ամենայն ղգուշութեամբ բացվեցաւ նախասենեկի դուռը: Պ. Յովնաթանեանցի առաջև ղլած սեղանի վերայ վառվում էին երկու ձրագ, որ չէին լուսաւորում տան հետաւոր անկիւնը, ուր բաց-

վեցաւ դուռը. այս պատճառով ևս, դուռը բացվելուց յետոյ, շեմքի վերայ երևեցաւ միայն մի մառախլապատ կերպարանք: Այս կերպարանքը երկու քայլ յառաջ սողալով դէպ ի խօսողը, յետ դնաց յանկարծ երկու քայլ: Պ. Յովհաննեանցը չհեսաւ և չկատեց այս կերպարանքը. բայց նորա պատահական հայեացքից դէպ ի դուռն կողմը սարսափեցաւ կերպարանքը և ասես թէ յառաջուց դուշակից ոլոտալու կայծակները:

Մի ձնշված, խեղճ ողբմելի սիրտ, ամենայն վայրկեան, հարիւրներով զարկուածէր այդ կերպարանքի մէջ: Նորա սրտի և հոգու խռովութիւնը անցել էր չափից, յուսահատութիւնը սրբատասնդեց նորան և նա յառաջ եկաւ ոտքի մատների վերայ երկու քայլ: Նորա այդ երկու քայլափոխութիւնը կատարվեցաւ հինգ րոպէում, յետոյ սոսկայ յանկարծ և մի վայրկենի մէջ, այնպէս սաստիկ յետ դնաց դէպ ի դուռը, որ անզգուշաբար զարկվելով և աղաղակ հանելով, դարձուց պարոնի ուշադրութիւնը դէպ ի այն կողմը:

— Ո՛վ է այդ տեղ, — գոռաց Պ. Յովհաննեանցը բիրտ ձայնով,

Այս հարցմունքից յետոյ չէր կարելի այլ ևս ծածկվել, պիտոյ էր յառաջ գալ, և կերպարանքը, դլուխը կախած ստուկի պէս, մօտեցաւ սեղանին: Դա մի ծառայ էր որ չորս ամիս ոչինչ վարձ չստանալով և հատած լինելով վերջին տառապանքի և նեղութեան, ևկել էր խնդրել իւր անցած ծառայութեան վարձը:

— Ինչո՞ւ ես եկել, — հարց տրեց Պ. Յովհաննեանցը:

«Պարոն», պատասխանեց ծառան դողալով, «խնդրեմ, եթէ կարելի է, շնորհեցէք ինձ տասն արծաթ»:

— Ինչ հաշուով տասն արծաթ. ինչի՞ է հարկաւոր այդքան մեծ դումար....

«Պարոն, ես չորս ամիս է, բան չեմ ստացած. ամիսը հինգ մանեթով, արդէն քսան մանեթ պատկանում ինձ. բայց ես չեմ համարձակվում այդքան խնդրել, առ ժամն հերիք է տասն արծաթը: Խնդրում եմ, ողբալով համբուրում եմ մի մերժէք ինձ, ես սպասում եմ....»

— Էյդ բոլորը լաւ, բայց ամեական հինգ մանեթի անուն տուեցիր, այդ ինչ հինգ մանեթ է:

«Իմ ամեական ծառայութեան վարձը»:

— Ինչ ով է կարդալ հինգ մանկէթ թոշակ. քո պէս ծառան դեռ կերած հացի հատոր ևս պիտոյ է մի բան վճարէ տիրոջը։

«Պարոն, աղաչում եմ, արդարացրա եղիր. մինչէ վառ ծառայելի մինչև այժմ, կամ մինչէ այժմ զանցառու եղայ իմ ծառայական պարտականութենանը։ Ո՛չ ապաքէն դուք ինքներդ դուվեցիք ինձ, մինչ ես երկու միլլեոն կանդուն տանձերկու կոպեկանոց կտաւը, որ դնել էի իմ ձեռքով, տուեցի պաշալ ընդունող տուհճանաւորին նշանակած տան և ուխտ կոպեկանոցի տեղ»։

— Այրի՛ր, անիծած, դուրս, դուրս, անզգամ։ Ապահի՛ր, ես քեզ այն օրը ձգեմ, որ օրական հացի կարօտ դառնաս, նեղվեալ. Այդ չէ՞ս, քեզ մարդ ասողին ինչ ասեմ։ Տէրան նայիր, ծառայութենանը նայիր, պահանջած վարձին նայիր.... կորի՛ր, կորի՛ր, որ աչքս չտեսանէ։

Այլ բան չկար, որ լսէր ողորմելի ծառան, ուստի դուրս եկաւ, անիծելով իւր ծնած օրը, իւր հայութիւնը, որովհետև ուրիշ տեղ անարգվելոց յիւոյ հայ պարոնի առաջև ևս անարգվելու։

Մի՛ վրդովվիք, պատուելի ընթերցողք, այս պատկերը պատկանում Պ. Յովհաննեանցի նեղքին ընտանեկան կեանքին։ Խաղմուրեան մէջ, նա զարձեալ երևելի է, և մինը այն աղգասէրներից, որոնք իւրեանց աղգասիրութեամբ այնքան լցրել են օրը, որ բոլոր մարդկութեան շնչառութիւնը դժուարացել է.... Նա աղգասէր է. Ըստուած կեանք տայ, Ըստուած հաստատ պահէ, որ աղգը սիրելով, կառքերով մեն դայ, աշխարհի վայելչութենները թմրի, արբենայ, մեզ էլ երբեմն պարծանք է և մեր աղգին մեծ օգուտ....

Մի քանի լրագրից յիւոյ, երբ փոքր ինչ հանգստացել էր Պ. Յովհաննեանցը, պատուիրեց դործակատարին, շտեմարանի պատուհանների կողաստված ապակիներին տեղ հասա թուղթ կպցնել, որ ընդունող տուհճանաւորը չկարողանայ լաւ նկատել պատրաստված հաղարաւոր վերարկուների մահուդի անպիտանութիւնը։ Այս ևս մի շատ դգուշաւոր հոդաբարձութիւն էր, վաճառականութիւնը ևս ունի իւր Մեթեվներները....

Դործակատարը պատրաստականութեամբ յանձն առաւ կատարել իւր պարոնի պատուէրը ամենայն ճշդութեամբ։

— Ո՞ւրհակը, որ ստացաք այսօր, վաւերացուցա՞ծ է օրէնքի զօրութեամբ, — հարց արեց Պ. Յովհաննէսեանցը։

«Էյո՛», պատասխանեց դործակատարը և ձեռքը տարաւ դէպ ի ծոյը, որ հանէ և ցոյց տայ։

«Վերջապէս», ասաց նա, «ահաւասիկ մուրհակը, բայց այսօր երեկոյին մի նամակ ստացայ ձեր անունով քաղաքական սուրհանդակից, որ մոռանալով չմատուցի մինչև այժմ»։

— Էյա ասելով, հանեց դործակատարը մի փոքրիկ ծրար և տուաւ Պ. Յովհաննէսեանցին։

Պարոնը արձակեց դործակատարը և սկսաւ կարդալ նամակը որի բովանդակութիւնը այսպէս էր։

«ՈՂՈՐՄԱԾ ՊԱՐՈՆ»։

«Յաւուամեմ, որ ձակատագիրը դարձեալ զարկումդ մեղ միեանց։ յաւուամեմ մանաւանդ, որովհետև երբէք ցանկալի չէր ինձ դործ ունենալ ձեր հետ։ Ձդիտեմ, թէ ինչ կամիք դուք ինձանից։ Մի անգամ ձեր անզդուշութեան և դատարկաբանութեան միջոցին ընթերցաք Հայէ հայբնէ։ բայց երևութապէս, որ փոքր էր ձեզ այդքանը։ դուք վերստին վշտացնումդ իմ այրական պատիւը մուտ ձանաչարկներով որ ես... բայց ոչ։ ես չկամիմ բնաւին ունենալ որ և իցէ յարակցութիւն մի այնպիսի մարդու հետ, որին արհամարհումեմ հոդով և հոդու բոլոր զօրութեամբ։ Մի մոռանաք, դէթ այսուհետև, դդուշութեամբ բերան առնուլ իմ անունը։ դուք չէք կարող ծամել և կուլ տալ նոյնան, նա կը վշտէ ձեր ժանդոտ ատամները։

Կարծեմ, որ այս յառաջաբանութիւնը անհասկանալի չէ ձեզ։ բայց հաստատելուս մարդու հետ աւելի պարզաբանութիւնն է։

«Երբ եկայ ես այս քաղաքը, որից երկար ժամանակ հեռացել էի։ մի քանի բարեկամք ասացին ինձ, թէ քաջափայլ պարոնի մինը ստացել է մի անատորագիր նամակ, որպէս թէ Աստրախանից, որի մէջ ամեն տեսակ բաներ խօսվելուց յետոյ, ասվում էր թէ դուք հետամուտ էք լսել այդ պարոնի պատմութիւնը և այլ այսպիսի շատ բաներ։ Դուք, իմանալով այս, իսկոյն վճռումդ, թէ պիտոյ է, որ ես լինիմ այդ յիմար նամակի հե-

ղենակը, և այդպէս հաւատացնելով այն պարոնին, որի հետ վաղ ուրեմն վիջայուցած եմ ամենայն յարակցութիւն, բոլոր բոքումիք զուտ տեղը նորա թշնամութիւնը դէպ ի ինձ: Ահ ինչ է ձեր վատը, և ինչ հաստատող վկայութիւն այդ մասին կալող էիք մէջ բերել, չգիտեմ, այլ այսքան զրականապէս ասուածեմ, որ ձեր կողմից այդպիսի կարծիք տալը իմ մասին մեծ յանծութիւն է: Իմ համար ոչինչ է այդ պարոնի բարեկամութիւնը կամ թշնամութիւնը, ըստ որում սովորած չեմ բարեկամ լինել կամ ոսոք լինել օգտի ակնկալութեամբ, սակայն ձեր ընթացքի մէջ տեսանում եմ մի վերին աստիճանի տմարդութիւն:

«Ծողունք ամենայն հակառակաբանող պատճառքը, այլ այս միայն առնունք աչքի տակ, թէ դուք ինչպէս կարողացաք կարծել, որ կոմս Ֆամիանուէլը կարող էր երբ և իցէ մոռանալ, թէ դուք կարող էիք հասանել այն պարոնի պաշտօնին: Գուցէ դուք ձեր ծանծաղամտութեամբ երևակայում էք ձեզ մի նշանաւոր մարդ, և ձեզ այդպէս հաւատացնում էք ամբողջ աստրաքարշ մարդկերի, որոնք աչքերը անկել էին, որ և իցէ կերպով, օգուտ քաղել ձեր հարստութիւնից, բայց իմ աչքում ամենևին զանազանութիւն չունիք այն ռամիկներից, որոնց վերայ դուռումէ ձեր արծաթը, արծաթն եմ ասում և ոչ դուք, որովհետև արծաթն է տալիս ձեզ այդպիսի տմարդի իրաւունք, և առանց այդ արծաթին, պիտոյ է միմը լինէիք այն ռամիկներից, եթէ ոչ աւելի վատթար, ըստ որում շատ ռամիկներն սիրտ և հոգի այնքան ապականված չէ, ինչպէս ձերը:

«Կարծեմ թէ ասացուցել էի ձեզ և ձեր ընկերակիցներին, թէ տեղիք չունիմ ծակատուռ ձանապարհներով դրծ կատարել, և իմ ասածը կամ գրածը ունիմ զօրութիւն իմ ստորագրութեամբ ինքելու, որին եթէ վերսին մի նոր ապացոյցի տեղ չկարողանայ ծառայել այս նամակս, մի օր, երբ թեթևացած կը լինիմ գործերից, ցոյց կը տամ ձեզ ձեր անձը Յիշատակարանիս հայելու մէջ:

«Վերջ կերպ չեմ կարող վերջացնել նամակս, եթէ ոչ այս խօսքերով, թէ դուք վշտացնելով իմ պատիւը, պարտական է.ք պղջալ և քաւութիւն որոնել, այլապէս ուրիշ տեսակ հաշիւ կ՚ունենաք իմ հետ և կը պղջաք ձեր յանդգնութեան վերայ:

«Ողջ եղիք, ձեր անձը և բարքը փոխելու, այլև փոքր ինչ լսելք ուսանելու համար, իսկ ես միտեմ միշտ պատրաստ, որքան կարող եմ ձեզ օգտակար լինել»։

«Չկր իրաւասութիւնը մերժող»

«կոմս Էմմանուել»։

— Ու քիչ խայտառակութիւն, — բացագանչեց պարոնը, ձեռքը միմեանց զարկելով։ — Не было печали, черти накачали — որ ասում են Ռուսը, շատ յարմար է այս հանգամանքներին, որոնց մէջ ընկայ.... Սորդ է, որ ես ասել եմ քաջափայլ պարոնին, թէ կոմսն էր այն անստորագիր նամակի հեղինակը. բայց այդ իմ սեպհական կարծիքը չէր. ինձ այդպէս հաւատացուցել էին մահտեսի Պռուշարը և նորա երախտապարտ սանը։ Բայց արի ու տես, որ նեղիայումս, մահտեսին բոլորովին ազատ է կոմսի յարձակմունքից, որ ուղղուած միայն իմ ընդդէմ։ Ինչպէս առնել, որ մի կերպ վերջացնէինք այս բանը.... ինչ յիմար մտածութիւնք, կոմսը ով է, որ Յովհաննեանցը երկիւղ կրէ նորանից, ինչ սիրոյ է առնէ, ովքե՞ն է վախեցնում։ Ես այսուհետև աւելի զգայացած կը լսեմ նորա վերայ, և պատահած տեղը ի՛նչհասաւեմ խոպան խայտառակել նորա և՛ անունը և՛ անձը։ Լաւ, ասպա եթէ այդ նղովեալը վեր կենայ, և ինձ ևս ինչպէս Ռեդզադէնն մտաին վախեցնի ու աշխարհին խայտառակէ։ Գնանք թէ ես չունիմ այնպիսի գործեր, որ կարողանայինն երկիւղ կրել կոմսի յարձակմունքից. բայց ընտանիքս ինչ առնեմ.... որ կարող է ծառայել կոմսին առաջ շահեմարանի տեղ....

Այս մտածութիւնքը ընդհատվեցան տիկին Յովհաննեանցի նեղս մտանելով մեր պարոնի առանձնարանը։

Յովհաննեանցը, բոլորովին ամբոխված, ծածկեց նամակը, որովհետև սովոր էր նա մեծ մարդ ցոյց տալ իւրեանն, մանաւանդ իւր ընտանիքի առաջև։ Այսպիսի խայտառակող մի նամակ կարող էր ցածացնել Պ. Յովհաննեանցի պատիւը նորա ընտանիքի աչքում։

«Ուրուսը ես գնում եմ ամարանոց», ասաց տիկինը. «սրդէն ժամանակ է. համարեա թէ ամբողջ քաղաքը բնակվում այժմ ամարանոցում, իսկ մեք փառաւինք այս տեղ։ Ամենայն

պատրաստութիւն տեսել եմ. կահ կարասիք բարձված են սայլերի վերայ։ Դուք էգուց ձեր գործերի աւարտելուց յետոյ, 5 ժամ մեզ կը զաք ամարանոց ճաշելու», յաւելացուց տիկինը։

— Ինչպէս կարելի է, — պատասխանեց Պ. Յովհաննեանցը. «նախ որ ես դեռ որոշած չէի դնալու օրը, երկրորդ գործերս դեռ չեմ աւարտել, երրորդ դատերս հիւանդութիւնը....

«Ուրաջինը», կարեց խօսքը տիկին Յովհաննեանցը շտապ խօսելով, «ընտանեկան բաներին մէջ ներգործական է իմ ձայնը և վճիռը. երկրորդ, ձեր գործերը վերջ չունին. երրորդ, մեր դուստրը ամարանոցում աւելի հնար կ'ունենայ իւր ցաւին դարման տանելու.... ես վճռել եմ և վերջացուցել եմ էգուց դնուելու, կամ՛ս, ակ, չկամիս ինչպէս դիտես»։

Տիկին Յովհաննեանցի ցաւը չէր, որ մի երկու օր յետոյ տեղափոխվէին դէպ ի ամարանոց, բայց տիկինը այդ օրում ժամադրել էր ամարանոցում մի տեսութիւն....

Վերջին, վճռական խօսքերը ասելուց յետոյ, դուրս գնաց տիկինը։

Յաւելի էր նայել Պ. Յովհաննեանցի վերայ. նա մեռած էր, քան թէ կենդանի։ Երկար ժամանակ սենեկի մէջ, դէպ ի այս և այն կողմը ման գալուց յետոյ, մտաւ անկողին, որոշելով իւր մտքում, առաւօտուն գնալ կոմսի մօտ և բանը մի կերպ վերջացնել խաղաղութեամբ։

Այդ դիշերը անցուց նա մի ջերմախտական վիճակի մէջ, երբեմն մի բարակ դող և երբեմն ջերմութիւն խաղում էին նորա մարմնի մակերևութեի վերայ, վերջապես քուն եղաւ.... քուն եղաւ, բայց նորա աչքին, երազում, երևեցան կոմս Նմմանուէլը և Ռէդլադէն։

(Շարունակութիւնը յետագայ տետրակներում.)

ՄԵԾԱՊԱՏԻՒ Վ. ԸՐԴԵՊԵՏ,

ԱՐԳՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀԻՒՍԻՍԱՓԱՑԼ ՕՐԱԳՐԻ։

Վ. աղուց ազդէն Ձեր միտք բացող դաղտիալքը ազգի լուսաւորութեան և դաստիարակութեան մասին զարթեցրել էին իմ մէջ մի ձգտողութիւն ձեռքիցս եկածի չափ օգտակար լինել այն շինուածքին, որի հիմքը դուք էք ձեռքով, բայց իմ բաղմադիմի պարապմունքը խափանարկու էին ինձ լրուցանելու սրտիս բաղձանքը։

Ներկայումս փոքր ի շատէ թեթեւանալով իմ զործերից, ժամանակ գտայ նայել մի վայրկեան մեր ազգի ներկայ դաստիարակութեան հանդիսի վերայ, և ահա ինչ որ տեսայ և գտայ, դրեցի որպէս մի նկարագիր, անուն տալով նորան, «Հայոց ազգի լուսաւորիչքը»։ Այդ փոքրիկ գործի մէջ ոչինչ մտացածին բան չկայ, իւրաքանչիւր անձնաւորութիւն մեքուլ խղճմտանքով առված է բուն ազգի անդամներից, որոնց ձեռքում էր այս րոպէիս մեր ազգի զաւակների կրթութիւնը։

Թող ազգը մի րոպէ նայէ այս ապրելական հայելու մէջ, որի դոգումն ոչքան իմ թոյլ կարողութիւնս կը ներէր, պատկերացուցի մի քանի բնաւորութիւնք։ Թող տեսանէ ազգը այդ մարդկերի գործակատարութիւնքը և հայեացքը։

Նայց դուք, մեծապատիւ վարդապետ, հնչեցուցէք Ձեր քաղցրութիւնքը Ձեր պանծալի ամբիոնից. դուք այս աշխարհի մէջ ընտրեցիք ձեզ առաւել պատուական բաժինը. քարոզել Աշմարտութիւնը որի համար դրած էք ձեր անձը։

Մեծարանքով

Խոնարհ ծառայ Ձեր

Անանիա Սուքիասեան։

1859

27 Սեպտեմբերի

ՄՈՍԿՎԱ։

ՀԱՅՈՑ ԸՕԳՒՒ ԼՈՒՍԱՒՈՐՉՔԻ

ԱԶԳԱՑԻՆ ԿԵԱՆՔԻՑ ԱՌԱՆՁ

ՆԿԱՐԱԳԻՐ

—

ՆԵՐԳՈՐԾՈՂՔ

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑ *վարդապետ* (*կառավարիչ վարժարանին*)։

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՊԱԿԵԱՆ (*ասպետ մինասալի և բարերար վարժարանին*)։

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԱՄԵԱՆՑ (*կանդիդատ լեզուագիտութեան, հիւր այս քաղաքում*)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՎԱԹԵԱՆՑ (*գլխաւոր վերակացու վարժարանին*)։

ՏՐԴԱՑԵԱՆՑ, *Հայկազեան*

ԱՐՈՎԻՆՑ ԳԷՈՐԳ, *պատմաբան*

ՅԱԿՈԲԵԱՆՑ, *բնաբան*

ՅՈՎՍԷՓԵԱՆՑ, *աշխարհագիր*

} *վարժապետք*։

ՂԱՄԲՐԻՈՍԵԱՆ, *ծոյլ աշակերտ վարժարանին*։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑ (*մի առողջամիտ Հայ, այցելու վարժարանին*)։

ԿԱՐԱՊԵՏ, *գռնապան*։

Անցքը անցանումն Ռուսոյի Հայերի միջ, 1858 *թուականումն*։

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ԼՈՒՍԻՒՈՐԻՉՐ

ԱԶԳՈՒԹԻՒՆ ԿԵՆՆԱՒՈՑ ԱՒՏՈՆ ՆԿԱՐԱԳԻՐ

—

ԻՒՐ ՊԱՏՄՈՒԵԼԻ ԵՂԱՆԱԿ

ՄԻՔԱՅԵԼ ԼԱԶԱՐԵԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻՆ

ՍԻՐՈՂ ԵՒ ՄԵԾԱՐՈՂ ՍՐՏԻ

ԱՆԽԱՐԴԱԽ ՆՈՒԷՐ։

«Però t'ássenno che se tu mai udi
«Originar la mia terra altrimenti,
«La verità nulla menzogna frodi.
Dante. La div. Com. Cant. XX.

Այս պատճառով զգացուցանումեմ քեզ, որ, եթէ երբ և իցէ լսես, թէ իմ հայրենիքին տալիս էին մի այլ սկզբնաւորութիւն, սակայն ոչինչ սուտ կարող չէր ունայնացնել ճշմարտութիւնը.
Դանթէ Ալղեաձ. կտոր. երգ. XX.

Տեսարանը ձևացնում մի բաւական մեծ սենեակ, Դիմայլակեանց վարդապետի տան մէջ. սօֆա, նորա առաջև գրասեղան։ Սօֆայի երկու կողմում, պատի վերայ երևումեն պատկերներ, մի կողմում Խդնատիոս Լոյոլայի և Քուշար Մադիստրոսի. միւս կողմում սուրբ Բենեդիկտոսի և Տէր Մանտալի։ Դիմայլակեանց վարդապետը գրասեղանի առաջև սօֆայի վերայ նստած խմում է զահվէ թերթելով Հիւսիսաւիայի մի ամսաթերակը։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԵՒՈՑՔ։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ (միայն).

*Խանի մը պէտք չէ գար. ոչ բարոյականութիւն, և ոչ ոճ։ Ինչ խրատ կրնայ ստանալ ասիկայ կարդացողը. լեզու մ'ալ ունի որ... ամ տօլմասը։ Ճանըմ, սըւոր դրողներու դիտաւորութիւննին ինչ է. ասոնք չեն կրնար հանգարտ նստիլ տեղերնին։ Աս տեսակ տարապայ-

ման Համարձակախօս ամսագրի մը կարգացողը, թէ որ անոր իդէաներնալ աղէկմը խելքերնուն սինտիրմիշ ընեն, ըսելի չէ թէ իրենք ալ ամսագրի աշխատաւորներուն պէս պիտի համարձակախօս ու աղատամիտ ըլլան։ Փէք աղէկ· բայց արի նայինք որ ամսագրի աշխատաւորներուն ձիկը չանքը մի միայն ասոր վրայ կը կայանայ, որ իրենց պէս ընեն կարգացողներն ալ, ըսել է աղատ բերանով յանդուգն մարդիկ, որոնց համար սրբութիւն մը չկայ· անոնց աչքին խաղալիկ է ինչպէս ծերին ալիքը, անպէս ալ մեծին պատիւը։ (Նէպոռնէ Յեռէց Հիւսիսափայլը և ուռնուռ Նոխ Մեղուն և ապա Ճոռոփաղը)։ Անհաւասիկ իմ սիրտը միխիթարողքը· աշխատաւոր Մեղու, արդիւնաւոր Ճոռաքաղ։ Ինչպէս ամեն բան կարգով, ոճը մաքուր, պարզ, բարակ։ Ո՛րքան իդէա, որքան խելք, որքան փիլիսոփայութիւն։ (Մտաւորական գոռնալով կեպ է իւր սէրման ընկերներէն հեռացակոչէը)· Ո՛վ Հայաստանի աղնիւ որդիք, մեր աղգին փառք ու պարծանք, մեր աշխարհին կանթեղ լուսաւորութեան։ Սիմիայն ձեր դիրեքսիօնին հետեւելով հնարաւոր կըլլայ բուն լուսաւորութեան հասնիլ· ձեղմով պիտի բարերարդ ըլլան մեր աղգի ղաւակները։ Դուք պիտի լոյս ծագէք Հայաստանի աւերակներուն վրայ։ Իսկ անունք····անունք, որ իրենց հայութիւնը անգամ՝ ամէթ կը սեպէն, թող երթան Հայաստանի ծխեալ աւերակներուն տակը պահ տուին։

Այս լրագիրներուն մէկ արժանաւորութիւննալ ան է, որ աղգին մէջ անցած գնացած, ներկայ և ըլլալիք բաներուն վրայ, աղէկ մը, ամեն պարագաներով, համով, հոտով, տեղեկութիւն տալէնետքը մտքերն ալ կը համոզեն դէպ ի աղգասիրութիւն, խաղաղասիրութիւն, և հնազանդութիւն····Ա՛ս օրագիրները չէ՞ն, որ ինձ իմացուցին Լալայեանց Նարկիզ վարդապետի եպիսկոպոսանալը և Պապակեան Յարութիւն աղայի մինտալի ասպետ անուանվիլը····(խոր հառաչելով)։ Ինչ ընելու է, ասպէս է աշխարհիս բանը· սա թերմաշ աշխարհիս մէջ պէճեղ մը արդարութիւն չկայ։ Մարդ մը, որն որ արդարութեան և ճշմարտութեան դիրեքսիօնին չհետեւիր, անիկայ ընտոր ալ ըլլանէ, առաջ կը քալէ, իսկ ես երեսուն տարի աշակերտութիւն ու վարժապետութիւն ընելէսետքը կտոր մը պատիւ ու փառք հազիւ կրցի ձեռք բերել։ Էհ ինչ կելլէ եղեր չոր պատիւէն····ես որայ մը ձեռք ձգեցի որ····բայց չմոռնանք, ան մարդոց առաջ երթալը իմին աշխատանքներուս անմիջական հետեւանքէն կը ըղխի· ըսել է թէ ապառաժի վերայ չսերմանեցի· իմ ամէն իդէաներս արգաւանդ հողի մէջ ինալով, Լիբանանու մայրերուն պէս ծաղկելէն ետև այժմուս թևերնալ արձակելու վրայ են։

Աստուած տայ (Դառնալով կեպ է Լոյոլայի և Բենեդիկտոսի պապիերէը)։ Ձեր բարեվաստութիւնը անգամնալի է, ոտքունքդ պագնեմ, սա

եպիսկոպոսութեան աստիճանին իս ալ մասնակից ըրէք։ Ի՞նչ կըլլայ եղեր։ Ճանըմ, սա եղողները ինձմէ աղէկ են։ Ես կենէ չէնք շնորք ասչափ գիտութիւն ալ ունիմ, իսկ անունք գրել կարդալ ալ չեն գիտեր.... Ասանկ ըլալէնետքը անունք ասօրվան օրս եպիսկոպոս ըլլան ու ես երազիս մէջ ալ չտեսնեմ եպիսկոպոսութիւն, ասկից կլլելու ապուր չէ.... Ճանըմ, ես լսելու չեմ ինձի համար ընտրելիք երդածները.... (ձայնը ջրկաւին 12)։ *Հիմա դպրոցի դասերը կաւարտվին....* (տպաւելով)։ *Ընտրո՛ր հասկնալու է ներսէսեանցին չերևնալը, կուզէր ինձի հետ տեսութիւն ընել, եղբօր մեր դպրատունը դնելու վրայօք աղէկ մը խօսել։ Աս բանը իս անհանգիստ կընէ, վասն զի անիկայ հարուստ մարդ մը նէ, աշխատելու է, որ ան մեր իդէաներուն հաւնի։*

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ ԵՒ ԱՐՈՎԵՆՑ ԳԵՈՐԳԸ։

ԱՐՈՎԵՆՑ ԳԵՈՐԳԸ (*սաստիկ բարկացած և դունաթափած նկատ մտանելով*)։

Ով արդապե՛տ։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ (*խռոված*)։

Ի՛նչ եղաւ։ ի՛նչ կըսես։

ԱՐՈՎԵՆՑ ԳԵՈՐԳԸ (*տաքցած և գանգատաւոր կերպով*)։

Ով արդապետ, ողորմած եղիք և դատաստան արէք։ Վարդանեանը ամենևին չէ լսում ինձ, բաւ չէ Թողնում բերանիցս հանել, ասես թէ Մովսիսի օրէնքին է հետևում՝ «ակն ընդ ական և ատամն ընդ ատաման»։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ։

Ձ՛անըմ, սա ի՛նչ անհանգիստ տղայ է, օր չըլլար, որ անոր չարութիւններու վրայօք գանգատ չլսեմ։

ԱՐՈՎԵՆՑ ԳԵՈՐԳԸ։

Դատաստան արէք, հայր վարդապետ։ Ճարս հատաւ, համբերութիւն չմնայ։ Եթէ քար լինէր իմ փոխանակ, ճշմարիտ, կը ճաքէր։ Այդ լկոտը համարձակվում է ինձ ընդդէմ խօսել, իմ, որպէս թէ, սխալները ուղղել։ Սորանից յառաջագոյն բանը՝ այսօր պատմութեան դասատնում բիֆօրմացիան, աւարտելով դասը, որպէս եղբայրութիւն ասացի թէ բոլոր չարութեան պատճառը, աղբիւրը և շարժառիթը եր Լութերը։ Ես նկարագրեցի նորան որպէս մի անպիտան, խռովարար, հերձուածող և հերետիկոս մարդ, ամենևին չա՛ճաչայն ձեր իդէաներին։ (*Դէմքը՝ կեանքը շարժո՛ւմ էլաւ հաւանութիւն ցոյց տալով*) *Եւ արդարև այդպէս է եղած Լութերը։ Դուք քաջ գիտէք, վարդապետ, որ պատ-*

մուԹիւնը և նորա ամենամանր և ճղճիմ բաները եւս ինձ լաւ յայտնի են, որովհետև ես վարժապետ եմ ընդհանուր և աղգային պատմուԹեան, գլխաւորը որ ես ինքս արժանի եմ պատմուԹեան տախտակների վերայ գրվելու։ Խոստովանեցէք դուք ինքներին, ինչ էր այդ հերձուածողի ցանկուԹիւնը որ աղմկեց Գերմանիայի ժողովուրդը, պատճառ դարձաւ արիւնահեղ պատերազմերի, պատճառ դարձաւ, որ ուրիշ ազգերի մէջ յառաջանան հերձուածներ։ Ափսոս, որ ես չկայի այն ժամանակ, ես նորան այնպէս խայտառակէի, որ մինչև այսօր ղզար իւր խայտառակուԹիւնը։ Ինչ և իցէ. ահա այս կերպով խօսելու ժամանակ, վարդանեանը համարձակեցաւ ասել ինձ, «վարժապետ, դիցուք ԹԷ հաւատացած է ձեզ պատմուԹեան դասատուուԹիւնը, բայց ինչ պատճառով ձեռնամերձ էք լինում նորա անժխտելի իրաւունքներին. ԼուԹերի արդիւնքը մեծ է քրիստոսական եկեղեցու մէջ, և այս մեծուԹեան չափով ինքը ԼուԹերը մեծ է և յարգելի, այլև երախտաւոր մարդկուԹեան»։ և այնպիսի մի դառոզ և յանդուգն կերպով, որ տանել չէր կարելի, ուստի դուռացի բարձր ձայնով — ձայնդ կտրի՛ր. չըրի՛ր անպիտան։ Մի՞ ԹԷ մտածումէք, սորանով աւարտվեցաւ բանը, ոչ։ Նա պատասխանեց ինձ ժպտելով «ԼուԹերի մեծ և երևելի մարդ եղածի համար է, որ պիտի չգթեմ»։

Ի՛նչպէս է վարդապետ այս վերջին յանդգնուԹիւնը։

ԴԻՄԱՑԱԿԱՆՈՑԸ (կատաղած).

Կը համարձակի՞ խօսել, դատողուԹիւն ընել, իրմէ մեծ խօսքեր ղուրցել... Անօրէ՛ն, անաստուածՔ ԹողսպասԷ, ես նորան ան օրը ձգեմ, որ գլուխը տախտակ գառնայ ու մէյմալ չհամարձակի իմ իդէանէրուն դէմ խօսել։ Կարապե՛տ (դռնապանը նէրս է մտնում), պատրաստէ վեր նատանը գալար ճիւղերը. տե՛ս, նոր կտրէ ծառէն (դուրս է գնում դռնապանը)։ Խմորված սատանայ, քեզ լաւոր աշակերտաց առջև ծեծ մը քաշեմ, որ երազէդ մէջն ալ չհամարձակիս ղԼուԹերը տեսնել, որ մինչև գալ տարվայ վարգերը չմոռնաս աս փուշերուն կսկիծը։ (Աբովենց ֆէոդէն) գնանք միասին։ (Բոլոցած գնում է մինչև դուռը. յանկարծ կանգ առնելով ասում է Աբովենցին) ձշմարիտը ղուրցելու է, ձեզ ևս պատշաճ չէր ԼուԹերի մասին խօսք բանալ։ քանի՛ քանի անգամ ըսեր եմ ԹԷ դուրս նետեցէք պատմուԹեան մէջէն ատ անհաւատ ԼուԹերները, ՄելանքԹոնները, Հուսսերը, Ցվինգլիները և կալվիններնէ։ Ճանըմ, առանց ազնց պատմուԹիւնը պատմուԹիւն չէ՞ և չը պիտի ըսվի պատմուԹիւն։ Ինչ կըլլայ եղեր, ԹԷ որ քանի մի սատանաներ դուրս ելնան պատմուԹիւնէն։ Անոնք աշակերտաց պարզ միտքը կը խաւարեն,

պէշ գէշ իդէաներ կը ծնուցանեն անոնց երեւակայութեան մէջ։ Աշակերտ ըսված տղան կը նմանի մէկ նոր տնկած ծառի, նորա որ կողմէն որ դնես նեցուկը, որ կողմը որ ծռես, ան կողմը կը ճկվի։ Ասոր համար պէտք է որ պատմութեան ան տեղուանքը սովրցուի աշակերտներուն, որ յարմար է իր իդէաներուն։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ՄԻ ՉԱՑՆ (*սէնեկի մէս կողմէ*)։

Նէրս հրամայեցէք պարոն, վարդապետը-իսկոյն կը գայ։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ (*մտանուած և նայուած չորս կողմը*)։

Տեսանենք, ինչ դպրոց է։ դպրոց դպրոց ասելով գլուխս տարին։ եթէ մինչև այժմ եղածներին նման է, ամենևին Թող չլինի։ Ոչ թէ եղբայր, կատուս չեմ տալու այդպիսի դպրոց։ Տեսանք մեր ազգի մէջ եղած կրթութիւնը, անձամբ փորձեցինք այն դժոխքը, որ Հայերի աչքում համարվում երևելի դպրոց։ Տանջեցին, ծեծեցին, ճնշեցին իմ մանուկ մարմինը, այնպէս որ Հոգու զօրութիւն չմնաց։

Ուրցնում գլուխդ ամենայն տեսակ ապականութեամբ, չնչին և տղայական իմաստակութեամբ, աղճատում ամենայն ընդունակութիւն և յարմարութիւն դէպ ի ամենիւը և մարդավայելը, արմատով խլում քո մարդկութեան իրաւունքները և պատրաստում քեզանից մի ստրուկ, մի անբան անասուն, խլացնում ականջդ ըղհեղղից մեացած դիտութեններով և եթէ կարողացան ուրացնել քո մարդկութիւնը, այն ժամանակ ծափ են զարկում ուրախութենից, թէ ահա լուսաւորել էին կատարելապէս մի խաւար միտք, փրկել էին մի կորուսեալ Հոգի....

Այսպէս եթէ աշակերտի խելացի ընաւորութեանը ընդդէմ են այդ յիմարաբանութիւնքը, եթէ ծորից ծնած էր նա միմիայն աղնիւ ղգացողութիւնների ընդունարան լինելու համար, եթէ նա ղրկվում այդ դաստիարակութեան դժոխային ոճից, այն ժամանակ, վայ նորան, պատուելի լուսաւորիչքը չունին բան և փաստ, նորա միայնակ իրաւունքը է լռութիւնքը, որով շատ անգամ փշրում անբաղդ աշակերտների ատամները։ Մեղայ, մեղայ, մի նոր իրաւունք ևս գտել են և աւելի զօրեղ, աշակերտքը մատնել պօլիցիայի ձեռքը, որ նա գաւազաններով և մարակներով դիշատէ Հայկի անմեղ զաւակների մարմինը....քստմնելի՜ բարբարոսութիւն։ Ինչ յարաբերութիւն ունի պօլիցիան դաստիարակութեան հետ։ Հը՛մ՝ ինչպէս չունի, եթէ բոլոր պատուելի քաղաքացիներին, եթէ բոլոր ուսումնական և աղնիւ մարդերի մէջ չէին գտել մինը դպրոցին Հոգաբարձու դնելու համար, եթէ վերջապէս դպրոցի մէջ

նախաթիոռ էր մի մարդ, որ նախընտիր էր համարել մի պօլիցեական մասնապետի հոգաբարձութիւն....

Ըսյոց աղգի խաւարամիտ, տգէտ և անբարոյական անդամքը, որոնք մեծ մասով պարտական են աղգի անբաղդութեանը, դէյն այդ մարգիկը, որ յանդգնումեն ոտք կոխել լուսաւորիչների աթոռի պատուանդանի վերայ, համարումեն, թէ աշակերտ ասածը մի մեքենայ է, առանց հոգու, առանց կամքի։ Հակառակվողը այս գաղափարներին դուրս է ընկնում դպրոցից, (ի հարկէ այդ նորա բաղդն էր)։ Նորան տալիս են մի չոր և յիմար վկայագիր և չեն ամաչում ասել, «գնա՛ լուսաւորեալ դու, տարածի՛ր այս լոյսը աշխարհի չորս կողմը....» բայց այդ լոյսը շատ յաճախ է խաւարից։ Սորանից աւելի ցաւալի է այն, որ ասումեն սուտ լուսաւորիչքը «թէ այժմ մարդ գարձար»....ես կ՚ասէի «վերջացար մարդ լինելուց։

Ձնծա՛ հայի զաւակ, նպատակիդ հասար։ Դու ղէնուորական ես, աստիճանաւոր ես, քահանայ ես, վարդապետ ես կամ առաւել մի մեծ մարդ։ Ուրիշ պաշտօնների, ուրիշ նպատակների մասին մտածել ևս չէ պիտոյ քեզ։

Դպրոցում ոչինչ ուսուցին նորան, ոչինչ քարոզեցին։ եթէ այդպէս չլիներ, ինչո՞ւ համար այդ վիճակի մէջ պիտի լիներ խեղճ պատանին։ Ողբալի՜ մանուկ, քո գլուխը թոյլ չէր, դու բարեսիրտ և ջերմ երևակայութենով երեխայ, մտար այդ դպրոցը, ինչ շինեցին քեզանից, մի փտած այրած լաթ, որի փոշին կեանքի տարաբաղդ մրրիկնեերից պիտի չրուի ու ոչնչանայ յաւիտենականութեան անդունդի մէջ։

Մարդ պիտոյ է շատ ընտիր և առողջ գլուխ ունենայ, շատ լինական աղգեցութիւն և մեծ հակակրութիւն դէպ ի լուսաւորիչների բարոյական սկզբունքը, որ կարողանայ անարատ ազատվիլ այդ ճահնային հոտած խորխորատից, պահելով իւր սեպհական մարդկային արժանաւորութիւնը։

Միւս կողմից տեսէք, թէ ինչպէս մաքուր և կանոնաւոր են քննողի աչքի առաջև լուսաւորիչների դպրոցական և տնտեսական մատեանները, հաշիւները և քննութիւնքը։ Ինչպէս ուռած ուռած գալիս ու նստումեն մեր աղգի հաստագլուխ մեկենասները, դրքերը ձեռքերին, բայց ափսո՛ս, գլխիվայր բռնած։ Մի խօսքով ամենայն բան իւր տեղում, ասես թէ ոչինչ պակաս չէր։ Ներքին անգործութիւնը և դատարկութիւնը ծածկած է անխորհուրդ և ընչին ձևերի տակ։ (Փո՛ւթ ինչ պոպոչելով)։ Բայց երևի թէ այս դպրոցը նման չէ այն միւսերին, սորան ամենքեան գովումեն....

Այսչափ պիտոյ է ասել, ովքեր են սորան գովողքը՝ մի հայաբնակ քաղաքի հին գաղաքագլուխ, մի երկու փոսած քահանայք, Հայաստանի մեղուն, Ճռաքաղը....սոցա գովեստը երկբայութիւն է ձգուիլ իմ մէջ դպրոցի արժանաւորութեան մասին։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ ԵՒ ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ (*յոտնանելով ներսէսեանցին*).

Ընտիր են. մինը եպիսկոպոս, միւսը աստղետ մինտալէ, երրորդը.... եսալ ելայ խաչ մը առի ու վիզս անցուցի. հանէ ըսօղ ըլլալու չէ ես, ինչ կլլայ եղեր. Մարկոսը հարցնէ, Սիրակոսը տուեց կըսեմ, Սիրակոսը հարցնէ, Մարկոսը....կըլլայ կերթայ (ոչ-ոնելով ներսէսեանցին)։ կաղաչեմ պարոն, ներել ինձ, որ այսքան սպասել տուի ձեզ։ Սուրբ պարտաւորութիւններս, տղոց կրթութիւնը...Բարոյականութիւնը....

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Հաւատի եմ, Հայր սուրբ....բաղդաւոր եմ ծանօթանալ Ձեր հետ, Նիկոլայոս Ներսէսեանցը, ձեր օրհնութեան ցանկացող։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Ինչ ըսել է վէյ, Աստուած օրհնէ, հրամմէ տղաս, նստէ, ձեր վարժոք շատ անգամ լսեր ենք։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Շնորհակալ եմ, Հայր սուրբ, իմ գալու նորհուրդը շտապութեամբ յայտնել ձեզ, փոքր եղբայրս կամիմ դնել....

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ

Վէյ, վէյ գիտեմ, Աստուած պահպանէ, լսած եմ։ Հոդով մարմնով ուրախ եմ ձեզ ծառայութիւն ընել։ Այդ իմ առաւտուրն է. ես ինք զինքս նուիրել եմ մանկանց կրթութեանը, անոնց մտաղ սրտերուն մէջ անդադար կը ցանեմ բարեպաշտութեան սերմեր....և աս օրվան օրս իմ աշխատութիւնս ան է, որ կրնամ բարոյականութեան կանոնները ծառի մը պէս տնկել սրտերնուն մէջ....

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Այո՛, այո՛, ես շատ լաւ լաւ կարծիքներ լսել եմ ձեր դպրոցի մասին....

ԴԻՄԱՑԱԿԵԱՆՑԸ.

Կ'ինչէս ի վեր խիստ անուշ կը լսուին ձեր խօսքերը.... ինդրեմ սա տեղս քիչմը նստէք.... կտոր մը խօսք ընենք։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ (անհաստատ կերպով).

Ներողութիւն. գուցէ իրաւունք չունիմ, որ և իցէ պահանջողութիւն առնել ձեզանից, բայց համաձայնեցէք, որ իմ միակ մխիթարութիւնն է իմ որբ եղբայրը. իմ վերայ ծանր և սուրբ պարտականութիւն է դրել նախահանմահութեան ալը գաստիարակել այդ որբը և լուսաւոր մարդ շինել նորանից. և այս գաղափարի իրագործութեան մասին մտածելը արդէն մեծ մխիթարութիւն և երջանկութիւն է իմ համար։

ԴԻՄԱՑԱԿԵԱՆՑԸ.

Ի՛նչ ըսել է, կը հասկնամ, ատիկայ ալնիւ ձգտողութիւն մ'է ղոր ունիք. Անանկ է նէ չլաւը ինդրել ղՀրամանքդ, որ աղէկ մը, հասկըցնէք ինձ ձեր միտքը. ըսել կուղեմ թէ մանրամասն ու որոշ կերպով մը բացատրէք, թէ ինչ է ձեր ցանկութիւնը։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Ես կը ցանկանայի դոնէ հարեւանցի ծանօթութիւն ստանալ ձեր գաստիարակութեան, ուղղութեան և կանոնների մասին.... թէպէտ և հաւաստի եմ.... բայց ներեցէք, հայր սուրբ, մինչև այժմ շատ անգամ խաբված լինելով, հաւատ չունենք դէպ ի....

ԴԻՄԱՑԱԿԵԱՆՑԸ.

Ձեր ցանկութեան օրինաւոր ըլլալը պարտաւորութիւն կը համարիմ խոստովանել, ուստի և կամակոր յանձն կառնում լցուցանել ձեր փափաքը։ Ցոյս ունիմ, որ դուք համաձայն ըլլաք իմ ուղղութեանը և գաստիարակելու ոճին, մանաւանդ որ, ինչպես կըսէք ձեր աչքին մեծ յարգ ունի հարազատիդ կրթութիւնը։ Ատիկայ գովելի ու աստուածահաճոյ բան մը նէ, ինչպես որդու կրթութիւնը — Հօրը, թոռանը — պապին, ատանկ է։ Աստուած կեանք տայ.... Ադ մասին կրնաք բոլորովին հանգիստ ըլլալ, մանաւանդ եթէ մի փոքր ընդունակութիւն ունի ձեր հարազատը։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Կ'ա յնիմար տալս չէ. գուցէ անհաւանելի լինի ձեղ նորա կայտառութիւնը։

ԴԻՄԱՑԱԿԵԱՆՑԸ (խորհրդաւոր ձայնով).

Խօսք չկայ, ատիկայ մեծ պակասութիւն մընէ, բայց բարեմիտ և Հմուտ կրթութիւնը, մեծերուն արթուն հսկողութիւնը, մեր իդեանե-

րուն անդադար ներգործութիւնը կարող են սրբել նորա վրայէն այդ արատը։ Ես ձեզ խօսք կըտամ, թող կարգս վկայ լինի, որ մեկ տարիէն դուք ինքերդ չէք ճանչնար ձեր եղբայրը անոր խօսելու ժամանակ, չէ թէ դուք, այլ ինքը անգամ չէսէր իւր ձայնը։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ։

Ներեցէք ինձ, Հայր սուրբ, ես չեմ ցանկանում այդպէս։ Նորա խաղերը այնպէս երեխայական և պարզամիտ են, որ մարդ մեղանչելու է բնութեան ընդդէմ, եթէ համարէ չարութիւն տեսանել նոցա մէջ։ Ճշմարիտ է, շատ կրակոտ է նորա դլուխը, բայց դորա փոխանակ շատ կակուղ սիրտ ունի, այնպէս որ բարի բանը իսկոյն կը տպաւորվի նորա մէջ։ Նա շատ լաւ երեխայ է։ Ես այդ պատճառով ևս վախենում եմ, որ մի դուցէ թիւր դաստիարակութեամբ դէպ ի չարը տրամադրվին նորա ընդունակութիւնքը։

ԴԻՄԱՑԱԿԵԱՆՑԸ։

Ա՛ի վաենալ։ դաստիարակութեան, ընտոր ըսեմ, սա էդիւկասիոնի մէջ, ես առանձին եղանակ և ոճ մ՚ունիմ, շատ ճամբորդ մարդիկ ալ որոնք որ ժամանակ առ ժամանակ վարժարան դալով ինձի հետ տեսութիւն ըրած են, անոնք ալ անմիջապէս մեկէն ի մեկ վկայեր են, թէ իմ և թէ ուրիշներու աղջկը, թէ ես առանձին ոճ մը ունիմ դաստիարակութեան։

Ըլլայ որ դուք տարակուսիք, բայց թէ որ մեր վարժարան տաք ձեր եղբայրը, շուտով կը համոզվիք խօսքիս ճշմարտութեանը, ընտոր, գործքով ալ պիտի ապացուցանեմ։ . . . (ի ինքն ինքեան) Աղէկ որ միտքս ընկաւ, հրամմէ, ահաւասիկ, ճոպաքաղն նոր համար մը, որուն մէջ կը տպվին անդադար մեր վարժարանի աշակերտներուն, կամ ընտոր ըսեմ, ճանըմ, սա մեր իդէաներով քալող մարդոց գրուածքը և ոտանաւորքը։ . . . (ընդունելով ճոպաքաղը) ահաւասիկ մեկ ոտանաւոր մը, որուն սկզբնատառերն ալ բանաստեղծի անունը կը կազմեն։ Ի՛նչ ունիք ասոր դիմաց ըսելու, ճարտարութիւն չէ՞ մի, դաստիարակութեան հետևանք չէ՞ն մի, իմ իդէաներուս ներգործութիւնէն առաջ չէ՞ դար մի։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ (քթի տակից ծիծաղելով)։

Ա՛շմարիտ է, մեծ ճարտարութիւն է ոտանաւոր շինել, որ սկզբնատառքը կազմեն յօրինողի անունը. . . . բայց կամէի իմանալ, թէ որ ճանապարհով հասանում են ձեր աշակերտքը այդ աստիճան լուսաւորութեան։

ԴԻՄԱՑԱԿԱՆԱՆՑԸ (կարելով նորա խօսքը)։

Խորհրդածութիւններդ խիստ ազուր է, բայց կաղաչեմ ղՀրաւանքդ, որ Հանդիստ ըլլաք, իմ աշակերտքս խիստ շուտ և շատ առաջ կը քալեն։ Կրնամ Համարձակ ըսել թէ անոնց յառաջադիմութեան ընթացքը կը Հաւասարվի մեր դարու երկաթուղիներու և ելեքտրական Հնոադիրներու արագութեանցը։ Տղայ մը որ իմ քովս լինցուցեր է իր էդիւտը, ապագային կը դառնայ մեր ազգին Հարազատ ղաւակ։

Ես շատ կը զարմանամ այն դաստիարակներուն վրայ որոնք իրենց վիզը առած ըլլալով այդ սուրբ և ծանր պաշտօնը, ամենահարկաւոր բանի մասին անՀոգ մնալով, ջանքերնին կը կենտրոնացնեն առարկաների խորուններները մտնալու։ Ատոնք կոյր ղկուրայն կը քալեն և կը համարեն թէ երբոր որ տղին գիտութիւնները սովրցուցին, ան ալ անմիջապէս Հասկցաւ, իրենք ալ կատարած եղան իրենց պարտաւորութիւնը։ Տեսակ մը վարժապետներ չգիտեն տղոց Հետ ինչպէս վարվիլնին։ Անոնց Հարկաւոր է քիչ մը մտքի ճամբով քալցնել, որ մէկէն ի մէկ չՀասկնան ամէն բան։ Ալան դի տղայ ըսածդ կտոր մը բան Հասկցածին պէս, քիչ մը աչքը բացվածին պէս անշուշտ կը մոռնայ իր պարտքերը և աս պարտքերուն գլխաւորը, որ է բարոյականութիւն և մեծերուն Հնազանդութիւն։ Իմ դաստիարակութեան ոճը ուրիշ է բոլորովին, իմ դիտաւորութիւնս ան չէ, որ իմ աշակերտներս ուսումնական ըլլան, Հապա, ամեն բանէն կտոր կտոր տեղեկութիւն ունենալով, ժամանակին օգտակար անդամ ըլլան և Հասարակութեան և վարժարանի յառաջ գնալուն։

Ես աս տեսակ իդեաներով կը ներգործեմ աշակերտաց վրայ և վարժապետներուն ալ ներգործել կըտամ։ Անոնց ամեն օր խրատ կը տամ լուռ և իրենց մեծերուն կամքը և Հրամանը կատարելու միշտ պատրաստ ըլլալ։ Ես ալ սուտ չէ որ աշակերտաց ակնջէն ի վար քանի Հեղ ըսած եմ, քիչ մը շողոքորթել վարժապետաց պատուասիրութիւնը, ինչու որ աշակերտաց չարութեան պատճառով չըլլայ թէ վարժապետաց սիրտը պակսի ու դպրատան ընթացքը թուլանայ։ Միշտ գլուխ ճկել մեծին և եթէ մեծը ղուր տեղը յանցանք մըն ալ գտնալու ըլլայ նէ, մեղաւոր եմ ըսելով ոտքերնուն փարիլ ու անոր թողութիւնը խնդրել։ ասոնք մեծ բարոյական վարժութիւնք են։ աշակերտ ժամանակին [կը սովրին գլուխ և մէջք ճկիլ մեծի առջև։....մէջքերնին կոտրելու չէ եա....ինչ կըլլայ եղեր....

Դուք աղէկ իմացած եղիք, որ իմ վարժարանէս ընաւ երբէք դուրս չեն գար զեվզեկ և փերճաֆսըլ տղաք, որոնց Համար բան մը չէ ծեծելուն վրայ խնդալ, մեծերը անպատիւ ընել։ Ես տղոցը ամեն օր կը-

սեմ նայեցէք, զաւկընեռս, երբոր որ ձեր վրայ մեկը մեծ կը դնեն, դուք աչքերդ բաց պահեցէք անոր վրայ· բամբասանքէ, քսութիւնէ ծիծաղելէ, բանսարկութենէ ետ կեցէք, մեծերուդ պակասութենանց վրայ ալ արժանաւորութեան պէս նայեցէք· չըլլայ թէ անոնց դիմադարձութիւն մը ընէք· ինչ ալ ըսէնէ, հաւտացէք, թէև աղեկ ալ գիտնաք որ ըսածը սուտ է, ի վերայ այդր ամենայնի հրամեռես ըսէք։ Մինչև անգամ, թէ որ անոնց մեկը ըսելու ըլլայ թէ լուսնկայ ըսածդ վնաստիկ շինված ու անկէ կախված է երկնքի վրայ, անոր մասին ալ վայրկեան մը մի տարակուսիք։ Ասպէս պահելով ձեղ կրնաք անմիջապէս ձեր մեծերուն սիրտը շահել ու անոնք ալ չեն հրաժարեր գիշեր ցերեկ ձեր վրայ հսկելէն· Ֆրանսայի Ռեվոլիւցիայի պատճառը ի՞նչ էր, ձեզմէ կը հարցնեմ, եթէ ոչ մեծերուն անհնազանդութիւնը և ղեկղեկութիւնը։

ՆԵՐՍԿՍԵՍՆԳԸ։

Նայց այդ կանոնքը ինձ շատ օտարոտի և վնասակար են թըվում· դոցա մէջ շնչում ճիզվիթական հոգին····

ԴԻՄԱՑԱԿԵՍՆԳԸ։

Այօն տիես····կրնաք հանգիստ ըլլալ, կրնաք ձեր կարծիքին չհաւատալ։ Ամէն բան կախված է դաստիարակներու իրենց պարտաւորութիւնը ինչպէս կատարելնէրէն։

Այս ալ ճշմարիտ է, որ կանոքի թէօրիան փրակտիկայէն կը ճանչցվի, փրակտիկայով ալ թէօրիայի ուղիղ ըլլալը կիմացվի····ինչ պիտի ըսեի····Տէր Աստուած····Հա, փրակտիկայէն ըսի····մեկ ալ կողմէն ալ փրակտիկայէն կանոքի համար թէօրիա կը կազմվի։ Ասոր դէմ բան մը ունիք ըսելու նէ, ղուրցեցէք····ասոնք փիլիսոփայական իդէաներ են և ես գիշերները երկար բարակ խորհրդածութիւններ կընեմ անոնց վրայօք····կեցէք, սա մատս դերձանով մը կապում, որ աս իդէաներուն վրայ հետևեալ գիշերը աղոր մը մտածեմ ու մշակեմ (հանուամբ գրպանէդ մի ընել գերեզման և կապուամբ մատը)։ Թէօրիաէրն ալ ունիմ, որ խիստ յարմար է փրակտիկային։

Տասն տղայ յառաջադէմ աշակերտներէն ընտրեր եմ և մեծ դրել եմ միւսերուն վրայ։ Անոնց պարտաւորութիւնն է նայել նոցա վրայ և հսկել անոնց բարոյականութենան ետևէն, որ ամէն բանի մէջ կարգ կանոն պահպանվի և գէշ դիրեկտիոնը շտկվի։ Ան մատաղահաս աշակերտքը մեծերուն առջին բերան բանալու իրաւունք չունին···· կրնայ ըլլալ, որ մեծերը կտոր մը անիրաւ ալ դտնվին ու պատժեն զանոնք, ան ալ փոյթ չէ· ես գարձեալ տեղիք չեմ տար որ անիրաւացի պատժվողները գանգատ մը հանեն բերաններէն։ Անոնց կըսեմ, կը դայ օր մը երբ դուք

ալ զուրիշը կը պատժէք կտոր մը անիրաւութիւն.... ինչ կըլլայ եղեր.... աս տեսակ դատիարակութեան հետեւանքը ան է, որ աշակերտքը կը տրամադրվին հնազանդ ըլլալու, ուրեմն և կըլլան ազգին համար օգտակար անդամք....(դադարելով դէմը դէպ ի ներսեսեանցը) բայց դուք լուռ կը նստիք, կերևի թէ կըտարակուսիք, կըհասկընամ....ես բացատրեցի իմ դաստիարակութեան մէկ կողմը միայն, իսկ մէկալը ուռցայ։ Սա ցուցակին չընայիք (առնելով ձեռքէն վերջին վրձանի մը առնելված գէդուլենները և լեզուները ցուցակը և դալիս է ներսեսեանցին)։

ՆԵՐՍԵՍԵԱՆՑԸ (*մի քանի րոպէ ցուցակին նայելով ապուշ կերպարանքով*)։

Ա՛ի՜հէ ինչ որ գրված է այս տեղ, կատարվուէ։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ։

Ի՛նչ է. կը զարմանաք. գիտէի որ պիտի զարմանաք....

Ա՛ր ազգի իշխանքը տեսնալով իմ աշակերտաց ըրած անհաւատալի յառաջադիմութիւնը, մինչև ասօրվան օրս զարմանքով կը նային։ Երկու երեք ամիս առաջ գպրոց մտած գիւղացի աշակերտքը անանկ յայտնի ֆրանսիարէն կը խօսեն որ ըֆարիզցի մը կրնան ամչցունել։ Հապա անոնց առարկաներու վրայօք ունեցած տեղեկութիւնքը։

Ընդամէն օր աշակերտին մէկը եկեղեցական պատմութենէն քաղկեդոնի ժողովքի մասին խօսելով այնպէս մէկիկ մէկիկ ու տեղն ի տեղը ամեն պարագաներով խօսեցաւ Դիոսկորոսի վրայ, որ շիտակն ըսեմ ես ալ չգիտցայ....մեր բարերար Պապակեան միտքի աստետն ալ ելաւ աշակերտի բերանին պագնելով մտրակ մը պարգեւեց. իմ աշակերտքը կորիճ տղաք են, անոր խօսք չկայ։

ՆԵՐՍԵՍԵԱՆՑԸ։

Կերդողութիւն, ես դարձեալ ոչինչ չեմ հասկանում....ինչպէս կարելի է այսքան բան ուսուցանել ինչ որ գրել էք ձեր ցուցակի մէջ և ինչ բաներ են դոքա (կարդալով ցուցակը)։ Քերականութիւն, Ճարտասանութիւն, Տրամաբանութիւն, Փիլիսոփայութիւն, Քաղաքավարութիւն, Բարոյական սկզբունք, Կրօնագիտութիւն, Աստուածաբանութիւն, Բանաստեղծութիւն, Բանահիւսութիւն, Ազգային և Ընդհանուր պատմութիւն ու աշխարհագրութիւն, Բնական գիտութիւն, Աստեղաբաշխութիւն, Աստեղահմայութիւն, Բժշկութիւն, Անգամալուծութիւն և այլն և այլն։ Թողնում եմ լեզուքը։ Այս բաներից շատերը անպիտան են, և ժամանակի կորուստ տան տարին փոքր է այսքան բանը գլուխ լցնելու համար։ Ժամանակ հարկաւոր է որ աշակերտը այդ բոլորը

մարսէ, սեպհականէ ու մշակէ, որպէս զի կարողանայ ապագայում իւրեանից դուրս բղխեցնել. այս ճանապարհով միայն կարելի է ստանալ հիմնաւոր դաստիարակութիւն և կրթութիւն, այլապէս սուտ է ամենայն վարժութիւն. աշակերտների անգիտակից և թուղթակի նման դասերը անգիր ասելը կոպեկի արժանաւորութիւն չունին....բայց ի տարանից այդ գիտութիւնները ուսուցանելու համար հարկաւոր եղած գրքերը ունիք առ ձեռն պատրաստ, և ինչ մարդիկ են դոցա հեղինակքը:

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ

Ինչ ըսել է. Հայր Մինասի ձեռնարկ գիտելեացը որ օրվայ համար է, մո՞ն սիեօ', բայց ասոնք մէկ գի, սա մշակելու խօսք մը ըրիք նէ, կըրնամ հարցնել ձեզմանդ, թէ ի՛նչ ըսել է մշակել, մարսել և սեպհականել.... Աստուած մի' արասցէ: Ես ինձ յանձնված տղոցը երբէք չար չեմ կամենար: Իմ դաստիարակութեան համակարգութիւնը բոլորովին այլ է, իմ ոճը ուրիշ է ինչպես առաջ ալ ասի: Առանց խորհրդի չէ, որ լցել եմ գպրոցս այդքան գիտութիւն, այնպէս, որ աշակերտը հազիւհազ ժամանակ ունի բերան սովրելու: Այս կերպով կաճէ նոցա ընդունակութիւնը, կը բացվին միտքերը, գլխաւորը աս է որ ժամանակ չունին սովրելու բաներուն վրայօք դատողութիւն ընել ու մտածել: Դատողութիւն ընելուն ու մտածելուն հետևանքները չար են, և տղու մը արժան չէ մտածել, վասն զի մտածութեան հետևանքը որոշմունք է, որ տղաքը պէտք չէ որ ունենան, որպէս զի յանդգնութիւն չսովրին. անոնց պարտաւորութիւնն է բերան սովրել ինչ որ վարժապետը կը տայ. մտածելը համարձակութիւն կը տայ իրմէ մեծերուն ալ դէմ խօսել, եթէ տղուն ըրած որոշմունքը յարմար չէր վարժապետի իգէաներուն: Կը տեսնէք հիմա թէ ինչ մեծ մեծ չարիք կելլան մտածողութենէն կամ դատողութիւն ընելէն: Վարժապետ ըսածդ մեքենադործ մը նէ, իսկ աշակերտը մեքենայ, քանի որ նա վարժարանի պատերուն մէջ կը դտնվի, ոչ կամք ունի, ոչ միտք, ոչ դատողութիւն և ոչ լեզու. վարժապետի կամքը, միտքը, դատողութիւն և այլն անոնց ալ կը ծառայէ իրենցի տեղ: (Ձայն ցածրոտ մինչ կեսը) Ահաւասիկ, աւարտվեցան դասերը....

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ:

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ, ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ, ՏՐԴԱՑԵԱՆՑԸ, ԱԲՈՎԷՆՑ ԳԷՈՐԳԸ ԵՒ ՅՈՎՍԷՓԵԱՆՑԸ (մտանումն ներս):

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ:

Աստուած պահապան, պարոններ, (դառնալով դէպ ի նէրսէսեանցը) հրա-

մեն ըրէք կաղաչեմ բարեկամացնել սըւոնց հետ, ասոնք իմ գործակիցներս են։

Ես չորս մարդիկը, որ ըլլայ թէ մեծ բան մը չը թուին ձեղ, սակայն աշխարհի լուսաւորութեան և մարդկային գիտութեանց գլխաւոր չորս ճիւղերը իրենց մէջ կամիտուին, Էլլոկվենցիա, Պատմութիւն, Աշխարհագրութիւն, և Բնախօսութիւն (ըբոթ վերց ցույց տալով, որոնք էրեսնուց կորցուով էլած են տալիս նեբսեսնացին, և ոտ սեղմուած նայո չեռքը)։

ԴԻՄԱՑԼԱԳԵԱՆՑԸ (դէպ ի Արովէնց Գեորգը)։

Նոր բան մ'ունիք ըսելու վարդանեանի համար, ընտո՞ր է քաշեց պոչը....Հանգարտեցա՞ւ։

ԱՐՈՎԷՆՑ ԳԷՈՐԳԸ (վշտահար ձայնով)։

Ի՞նչ էք հրամայուած, նա բոլորովին կորած աշակերտ է մեր համար, կամիս կախի՛ր նորան, խեղդի՛ր, այրիր, ինչ կամիս արա, նա իր ասածներիցը ձեզ վերցնուած չէ։ Դուք ականատես էիք, երբ ծեծեցին նորան....նա չլացեց ևս. գունաթափ երեսով և կրակոտ աչքերով նայուածը միայն։

Երբ դուրս գնացիք դուք դասատնից, ես հարց արեցի նորանից, թէ «ինչպես է, երևելի՞ մարդ է Լուտերը»։

Վերջ խօսքը բերանուն կիսակատար, վարդանեանը դուրս թռաւ տնէն և միանգամայն կատաղած ասաց. «հրամերէ՛ք, Լուտերը շատ երեւելի և պատուելի մարդ է. կամիք, ինձ ոչ թէ միայն ծեծեցէք, այլ մորթեցէք, քերթեցէք, այրեցէք, ինչ կամիք արեցէք, ես մի և նոյն խօսքերը պիտի կրկնեմ միշտ։ Եթէ դուք կամիք, որ ես փոխեմ իմ կարծիքը, ուրեմն ապացուցէք ինձ նորա սխալականութիւնը պատմական իրողութիւններով և փաստերով, աշխատեցէք իմաստուն խօսքերով հիմնաւորապէս և ուսումնականի վայելուչ ճանապարհներով բան հասկացնել. դալար ճիւղերը, որով այս րոպէիս ծեծեցիք ինձ, ոչ փաստ են և ոչ իրողութիւնք, և ոչ միայն պիտառութիւն չունին ուսումնական վէճերի մէջ այլև որ և իցէ ճշմարտութիւն ապացուցանելու մէջ։ Բռնակալութիւնը դիմումէ դեպ ի այդպիսի հնարներ, բայց բռնակալութիւնը, որ այս րոպէիս թէև չէ վերացել աշխարհի երեսից, այնուամենայնիւ դատապարտուած է բանականութեան ատենի ձեռքով։ Դուք ինձ ծեծեցիք, ես չլացի, դիտէք ինչ պատճառով....նորա համար, որ մոռնումս ծիծաղումի ձեր վերայ և ձեր գործ դրած հնարի վերայ»։

ԴԻՄԱՑԼԱԳԵԱՆՑԸ (յոգոց հանելով)։

Ինչև ատ տեղը հասել է բանը, ատա՞նկ....անպիտան խոտը անշուշտ պիտի ելնէ բուրաստանի մէջէն....վասն զի իւր ճանճային որա-

կուլեամբ կարող է ինձ սպասաւոր ըլլալ և չորցնել ան անմէղ և քնքուշ ծաղիկները, որոնց վրայ դիշեր ցորեկ քուն չունիմ (վճռական ներգով), ես դուրս կը ձգեմ զինա վարժարանէն (դէպ ի ներսերանցը)։

ՏՐՈՍՏԵԱՆՑԸ (յոգոյ հանելով)։

Ո՛չ մարտութիւն ճշմարտութեանց.... ամենայն ինչ ճշմարտութիւն է ինչ որ խօսեցաք, վեղարաւոր եղբայր։ Ա՛յդպիսի աշակերտը ոչ թէ մի ճախնային ըլլայ է, այլ Սահարա անապատի Սամիել մահաշունչ քամի։ (ամենայն պարկեշտութեամբ) Ա՛յդ վարդանեանը երեկ ինձ ես վերաւորեց։ Ես չկամեցայ դանդատիլ, որպէս զի ձանձրութիւն չտամ ձեզ, մանաւանդ դիտեմ, որ ձեզ շատ ցաւելի պիտի լինէր, ըստ որում ինչպէս մի բարեդութ ծնողէ ցաւելի է զաւակի վատթարութիւնը, այնպէս և ձեզ ձեր որդեգիրների մոլորութիւնը։

ԴԻՄԱՑԱԿԵԱՆՑԸ։

Ան տուէթ, ինչ ըսել է։ Նայեմ ձեզ ալ ինչ ըրեր է այդ չարամիտ վաղթեռը (դէպ ի ներսերանցը պառնալով). գուցէ ձեզ ձանձրալի թուի մեր խօսակցութիւնը.... բայց.... ա՛հ.... դժուար բան մըն է տղոց դաստիարակութիւնը։ Ինչ ընելու է։ Աստուած մեզ ալ այս խաչը պատրաստեր էր....

ՆԵՐՍԵՍԵԱՆՑԸ։

Ո՛րքա հակառակ ես շատ ուրախ եմ.... բայց ասացէք լանդրեմ, արդեօք աւելորդ չէի՞ ես այս տեղ։

ԴԻՄԱՑԱԿԵԱՆՑԸ։

Ինչեր կ'ըսէք. ինչ գաղտնիք կրնար ըլլալ մեր մէջ, որ ձեզմէն ծածկէինք։ Ասոնք աղգային դաստիարակութեան վերաբերեալ բաններ են, և ես շատ ուրախ եմ որ ձեզ առիթ կրնամ տալ իմ ուղղութեան թէօրիային փրակտիկայով ստուգագործելու։ Վաղթեռները և Մասսօնները կարօտ են գաղտնի ժողովներու, որ մէկ մէկու ըսեն պատմեն իրենց գժոխային և մեղանչական իդէաները, որպէս զի իրենցմէն ջոկ, զուրիշները ևս սատանայի լաժին ընեն։ Ով որ առաքինական մտքերով լեցուած է, որին սիրտը որ գեռ ևս վարակուած չէ չարախորհուրդ և հերիսիկոսական իդէաներով, որին որ խելքը արևու պէս կը փայլի, անիկայ մարդ մը պահտուելու կարօտութիւն չունի։ Ուրիշ ատանկ մարդ մը շուկայ տար, նա ան տեղն ալ իր գաղափարներէն յետ չկենար, տար զինա տաճար, տաճարին ալ պատշաճաւոր է, տար անապատ, հոն ալ.... (ալէրը ողջունով դէպ ի ներսերանցն ալէրը) կը տեսնէք հիմա, որ գուք աւելորդ չէք սա տեղս մեր ընտանեկան ժողովին մէջ, ուր մեք լուսա-

ւորութեան անդամներս շատ անգամ կը լուծանենք փիլիսոփայական ճամբաներով դաստիարակութեան ծանր ծանր խնդիրները։ Պարոններ, կը կամենաք ծխել, ահաւասիկ ծխախոտ (ոսքոսոցած)։ Ձոաքաղը կըսէ Թէ Ամերիկացիք ասոր Թապաքքօ կըսեն, ահաւասիկ սիգարներ, վիճենացիք ալ ելլեր գլանակ կըսեն (կաոալիելվ)։ Ինչալ ըլլայ նէ, խօսքը ասոր վրայ չէ եա, հրամեցէք։

ՑԱԿՈՐԵԱՆՑԸ (առնուէ Թաբակը)։

Իմ համար Տրապիզոնդի Թաբակը աւելի լաւ է քան Թէ Հաւանայի սիգարները.... կուրծք չէ ցաւեցնում, օդը ազատ ընծայք ունենալով, ֆիզիկական օրէնքներով շատ Թթուածին ներս է տանում, դուրս փոխանակ դուրս բերելով ածխածին։ Մանաւանդ ազատ օդը շատ Թթուածին ունենալով իւր մէջ կարող է նիկոտինը երկու մասն բաժանել ջրոսկով ու ջուասկով, առաջինը դառնում պիտանի մարդակազմութեան համար, երկրորդը որպէս վնասակար դուրս է ընկնում մարմնից ածխածնի հետ, որէ աղօդ, այսինքն չիմար օդ։

ՏՐԴԱՏԵՒՉԸ.

Ստոյգ է ձեր ասածը, պ. Ցակոբեանց, բայց դուք աղօդին չիմար օդ ասացիք, պիտոյ է էլ օդ ասել, ըստ որում ալ մանիկը լատինական ազինուա (asinus) բառի արմատն է, իսկ ազինուսը յայտնի է որ էշ է նշանակում։

ԴԻՄԱՑԱԿԵՑԱՆՑԸ (ցած ձայնով ներսեսեանցին).

Կը լսե՞ք մեր ոսկերերաններուն։ Հումիլդին կամ էշ ցուներուն ասոնք իրենց բալմատեսակ գեռութիւններովը։ (դառնալով դէպ ի Տրդատեանցը) Սա վարդանեան անպիտանի մոլորութեան բան մըսիք նէ ի՞նչ էր։

ՏՐԴԱՏԵՒՉԸ.

Նոյնը առաջին դուրս հկաւ։ անցեալ օրերը կարդումի ճարտասանութիւն, — ասել մասին։ Աշակերտներին անհասկանալի երևեցաւ վասն ասը։ Ես խոստացայ նոցա գործականաբար հասկացնել բանի զօրութիւնը, այսինքն մեր կլասիքներից կարդալ օրինակի համար մի գիրք։ Ես ընտրեցի բարոյական ճառներ, որ մի և նոյն ժամանակ կարող էին օգտակար լինել նոցա և լեզուի և բարոյականութեան կողմից, մանաւանդ քաղաքավարութեան կողմից, որ մի ամենահարկաւոր զարդ է կրթեալ մարդու համար։ Իմ կարծիքով, վերապատուելի, երևելիներին չէ պիտոյ այլ կերպով հասկացնել ճարտասանական ձևերը, եթէ ոչ, ճառերով և վիպասանական գրուածներով, որ եղած էին հին և ամենայն կրթեալ ու մտելն հայախօսութեամբ, ըստ որում այդ կեր-

պով կարող էին նոքա մի գաղափար ստանալ վ֊ե՞ւ ոչ մասին։ Սորա համար, իմ հետ համաձայն են Եւրոպայի բոլոր երևելի ուսուցմնականքը, որպիսիք են, Ռուսսիա Տրետեակովսկին, կաչենովսկին, Անգլիա, Գվեռռը և Բօսկեթթին, Գերմանիա Աշեռը։ Մոսկվայի մէջ խօսք չկայ ուսուցմնականների շատութեան վերայ որոնք հետևուածն այս վարդապետութեանը. Ռուս չկարծէք, բոլորը եւրոպացի երևելի հեղինակներ են, օրինակի համար Հալլէն, Զանֆտլեբենը, Շուբերթը և այլ ուրիշք, որոնց հետ միշտ գրակցութիւն ունիմ։ Ես բոլորովին ընդդէմ եմ այն իմաստակներին, որ չեն թոյլ տալիս աշակերտներին կարդալ ևս անգամ վիպասանական գրուածք կամ ճառեր. իմ կարծիքը այսպէս է թէ վիպասանութիւն ասածը պիտի կամ պատմական լինի կամ առասպել, բայց ի վերայ այսը ամենայնի ազգային կեանքից առած։

ԱՐՈՎԻՆՑ ԳԵՈՐԳԸ (տաքացած).

Ո՛չուտ ճշմարտութիւն. վիպասանութեններից, այսինքն րօմաններից միայն կարելի է քաջ ուսանել պատմութիւն֊և ես այդպէս ուսել եմ. ահաւասիկ ձեզ մի կենդանի օրինակ։

ՏՐԴԱՏԵԱՆՑԸ.

Ես ձեզ ասումեմ որ իմ մի փոքր յառաջ յիշած երևելի Եւրոպացիքը ևս այդ վարդապետութեանն են հետևում։ Այդ պատճառով ևս գաստատուն տարեցի կարդալու համար իբրև վեմ ոճով գրուած բան մեծիմաստ Իգնատիոս Փափազեանի քաղաքավարութեան դիրքը։ Վեր ելայ ամբիոն և սկսեցի կարդալ . . . . կարդումեմ և ինքս ղմայլումեմ, ղգումեմ, որ մարգարիտներ են թափվում բերանիցս։ Ահաւասիկ վեմ ոճ, աղնիւ մտքեր, ահա բարոյականութիւն, մի խօսքով Հայկական գպրութեան փառք և պարծանք։ Երբ աւարտեցի մի գլուխը և գադարեցայ, նկատեցի որ ամենքին ապշած մնացել են, նոյն իսկ րոպէին երևեցաւ այդ դրքի գործած տպաւորութիւնը և ներգործութիւնը աշակերտների վերայ նոցա բարոյականութիւնը կազդուրելու մասին։ Ղամբէոսեանցը կամենալով խնչել մեզ սեղանի տակ ու այն տեղ կատարեց այդ պիտոյքը։ Իմ կարծիքով Ղամբէոսեանը իւր քաղաքավարութեամբ անցաւ Իգնատիոս Փափազեանից, հերիք չէր այդ, տեսանելու մի բան էր, թէ ինչպես լաց էր լինում սիրտը շարժվելով ոչ վե֊ե֊ինից, ես դեռ առաջին գլուխներն էի կարդում . . . .

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ (ժպտելով).

Այդ բանը ես չեմ կարող գովել, ինձ թվումէ թէ Ղամբէոսեանցի արածը է մի դատապարտելի կեղծաւորութիւն, որի համար պիտոյ էր խրատել տօրան . . . .

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ (ոհաձուԹեամբ)։

Պարոն, ձեր կարծիքը ծուռ է, ատիկայ կեղծաւորուԹիւն չէ, ուրեմն և չպիտի ըսուի կեղծաւորուԹիւն։ Ինչ զարմանք է որ այդպիսի պզեղցիկ դրուածք մը կրցեր է երեխայի սիրտը գրգռել։ Մինչդեռ ես հասակաւոր և աստղաւոր օրս դրսեվանց ծայրագոյն վարդապետ.... չեմ կրնար մեջս դրած ճառերը, Թէ մէկ վրէժ սիրելու, Թէ բարոյականուԹեան, Թէ փիլիսոփայուԹեան և Թէ անդամալուծուԹեան մասին սառնուԹեամբ կարդալ։ Ձէ, աղնիւ պարոն, ատիկա կեղծաւորուԹիւն չէ։

ՏՐԴԱՏԵԱՆՑԸ։

Ըսարտելու վերայ էի, ինչպէս ասացի, մինչ ամենքին լուռ ու մունջ բերանիս էին նայում։ Վարդանեանցը համարձակվեցաւ բարձրաձայն փունգալ....

ՅԱԿՈՐԵԱՆՑԸ։

Ընդհանուր ձգողուԹեամբ, կենտրոնախոյս ոյժը և բարձրաստիճան ճնշողուԹիւնը, օդային ելևէջտրականուԹիւնը, ահաւասիկ նորա փուընդալու բնական պատճառը....բայց այդ անիրաւը ինձ ևս վշտացրեց։ Ես ֆիլիկայից մենուամի օդի բաղկացականուԹիւնը խօսեցի ԹԹուածինի յատկուԹեան վերայ և յետոյ դառնալով դէպ ի Վարդանեանը հարցուցի Թէ ինչ նիւԹից կարելի էր ԹԹուածին ստանալ։ Նա բոլորովին հակառակ իմ իդէաներին, պատասխանեց ինձ։ Իսկ երբ հարց արի Ղամբէոսեանցից, նա բոլորովին համաձայն իմ իդէաներին պատասխանեց — Քէջէթ ըլնա՝ կալցց։ Ես այնքան ջերմեռանդուԹեամբ կարդամ իմ դիտուԹիւնը և Վարդանեանցի պէս մի լակոտ համարձակվի ընդդէմ իմ իդէաներին պատասխանել — տարապայման յանդգնուԹիւն։ Բայց (դառնալով դէպ ի Տրդատեանցը), ներողուԹիւն, եղբայր, ես ընդհատեցի ձեր խօսքը։

ՏՐԴԱՏԵԱՆՑԸ։

Ոչինչ. բանը դորա վերայ չէր որ փունգաց, դորա բնական պատճառը իմացանք, այլ Նորա յանցանքը աւելի ծանր է քան Թէ երևեցաւ ձեզ առաջին անգամ։ Երևակայեցէք, վերապատուելի՝ երբ բոլոր աշակերտքը աչքերը տնկած և ականջները սրած նայումէին դէպ ի ինձ, նկատեցի, որ միմիայն այդ ամբարտաւան Վարդանեանցը գլուխը կախած խոր ուշադրուԹեամբ կարդումէ մի գիրք։ Նկատելով Նորա այդպիսի անուշադրուԹիւնը դէպ ի ինձ, ճշմարիտն ասեմ, մի փոքր բարկացայ, ուստի և կամաց մօտեցայ Նորան և յանկարծ խլեցի ձեռքից գիրքը։ Ինչ էք կարծում, վերապատուելի, ինչ կը լինէր արդեօք այդ անպատանի կարդացածը (յաղԹական յայտով)։ ԵԹէ աչքով չտեսանէի, երբէք

երևակայելու ևս չէի· այդ գիրքը····(ջղաձգութեամբ արտասանելով բառերը) էր Եւժէն Սիւ Գրանսիացւոյ Թափառական Հրէան, որ Թարգմանել է Նալբանդեանցը···· Բայց այս դեռ բոլորը չէ···· Գլխաւորը, ներողութիւն, վերապատուելի Հայր, Աստուած վկայ է որ ես մեղաւոր չեմ:···

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ (գունաթափվելով)·

Այդ ինչ օտարոտի խոստովանութիւն է, ինչ ըսել կուզէք, ինչ կրնար ըլլալ «Թափառական Հրէային» վատթար····Պօլ ոչ կէ····

ՏՐԱՏԵԱՆՑԸ·

Շատ վատթար· Թափառական Հրէայի սկզբունքը տալած Յիսուսեանց կարգի պատմութիւնը····

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ (կատաղաբար)·

Ի՞նչ····Յիսուսեանց պատմութիւնը կարդա՞լ: Ապրի մը կործանութիւն աւելի առաջ կը քալէ, երբ որ անխոհեմ և չտեսնողներ հեղինակները կելլան ատանկ գրուածք կը հանեն····Այս անոնց առջևը փակելու համար էր, որ կուզէի ձեռքս անցնել գրքերուս դատաքննութիւնը, որպէս զի իմ իդէաներուս ընդդէմ խօսող գրուածք, որ աղգին ալ մեծապէս վնասակար են, երևան չելլային: Օր մը ան ալ կընենք····խաչը մերն է, զօրութիւնը դիտենք····(վեր կանգնելով թեղից և մօտենալով Տրտատեանցին) ես ձեզ բիւր անգամ ըսեր եմ, այդ տեսակ գրքերուն անունը անգամ չը յիշել դպրոցիս մէջ, թող թէ ներս ընդունել գպրոցը, որ անմեղ աշակերտներուն ձեռքը խնդալով մատներնին պղտորէ: Բայց դուք անհոգ ըլլալով, ամեն սատանայական գործ մեզի ունի իմ դպրոցս, կեցի՛ք, ես ատանկ չեմ թողուր: Դպրոցին դուռին առջևը մարդ մը կարգեմ որ մտնող եկողին վրան գլուխը քրքրէ, չըլլայ թէ ինձ կամ իմ իդէաներուն հակառակ գրուածք մը ներս մտցունեն: Ապա եթէ այդ կարգված մարդն ալ անհարազատ եկաւ· ան ատենը ի՞նչ ընելու է: Մէկ ճարմը կայ միայն նեղվիլ պնել այդպիսի բաներուն վրայ և քաղաքը չմեցունել, որպէս զի դպրոցս ապահով մնայ: Ասանկ տնօրէնութիւն չընեմ նէ, կտոր մը ատենէն դպրոցս գլխիվայր պիտի կանգնի: Ձեղի կըսեմ, ով վարժապետք, ականճանըուդ օղ ըրէք, (բոլոր վարժապետք խռնաչիւնով իրենց գլուխը) եթէ ուրիշ անգամ թէ դպրոցին մէջ և թէ ձեր ձեռքը տեսնալու ըլլամ սա փոքրիկ սատանաները քարոզող հերձուածող և ապստամբ մարդոց գրուածքը, որպէս են Հէյ-ակտիվայլ ծրագիրը, Հանգիս նոր Հայաբնակութիւնը, Վարպետական կրծքին, Թափառական Հրէայ և այլն, անմիջապէս կըզկեմ ջնել ձեր պաշտօնէն: Սա գրքերուն հրատարակողները գլխուս փորձանք գար-

ձան հանգստութիւն չկայ, բանը ան տեղը հասաւ որ Հայր Ղէյն ծարն ալ աւելցնելու է «Այլ վրկեա զմեզ ի նաղարևանցէ և ի նալբանդեանցէ....ձանըմ, երբ պիտի խալսեմ։ Եթէ ուրիշ անգամ ալ անկըչէս ի վար սա հերձուածող Լութերնեերուն անունը տան, անմիջապէս պիտի իյնամ մեռնիմ։

ՅՈՎՍԷՓԵԱՆՑԸ (դողալով)։

Ալ երապատուելի, ինչ պատուէր կը տաք ինձ փարիզի «Արևմուտք օրագ....

ԴԻՄԱՑԱԿԵԱՆՑԸ։

Ձայնդ կտրէ, ուրիշ անգամ չլսեմ ատիկայ։ Եթէ սատանային ձեռքը իյնայ, դժոխքի մէջ պաշտօնական օրագիր կընէ ան....մեղայ ըսէ, որ ներվիս։

ՅՈՎՍԷՓԵԱՆՑԸ։

Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ, մեղայ մեղայ։

ԴԻՄԱՑԱԿԵԱՆՑԸ։

Աստուած թողութիւն շնորհեսցէ....Միւս անգամ ազ անիծած օրագրի անունը բերնէդ չհանես, չէ նէ դժոխքի լաժին կըլլաս։ Ամէ՞ինկվիզեյիօ, ուր ես, ինչու զմեզ ասպէս երեսի վրայ ձգեցիր ու գնացիր.... Աս վլթեռները միր միսը կուտեն....

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ։

Ալ երապատուելի, ինչու՞ այդպէս բարկանուիդ և աւելորդաբանուիդ թէ պատուական և բարեմիտ սարդերի և թէ նոցա տգեղահալած գրուածներուն վրայ։ Մեք բայց օգտակարից ոչինչ չար տեսած չենք նոցանից։ Եւ ժամանակ պիտի գայ, որ Հայոց բանասերը հոգեպայծառութեամբ պիտի չիշէ այն անունները որոնց կրօդը կը կամենայիք ինկվիզեյիօնի բոցերին մատնել։

ԴԻՄԱՑԱԿԵԱՆՑԸ։

Ընծոյ քարոզածը կրօնընդդէմ և անբարոյական բաներ են։ Ըսի, կըսեմ և ըսելէն չպիտի դադարիմ։ Ինչ բանի արժանի է հեղինակ մը որու գրուածքէն մահագեղ կը հոսի. ոչ մեծը կը նայի և ոչ փոքրը, անբարոյականութիւն չէ՞ մի ասիկայ։

ՏՐԴԱՑԵԱՆՑԸ։

Ա՛շխարհ է, վերապատուելի Հայր, ճշմարիտ է ձեր ասածը. և եթէ դուք չլինիք, այդ ժանտախտը աւերողչ աղգը պիտի վարակէ։ (դառնալով դէպ ի ներսէսեանցը) բայց հաւատայէք, պարոն, մեր գործոյն մէջ ամենևին ընթացք չունին այն հերիտիկոսների գրութիւնքը....Վարդանեանը բացառութիւն է....

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Ընթա՞ս....

ՏՐԴԱՏԵԱՆՑԸ.

Խոլոր միւս աշակերտքը հեղ և պարկեշտ են, օրինակի համար, Պ. Ամիէոսեանը։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Ա՛արգարէուհիւն մը ընե՞ր. անունը տուած տղադ շատ առաջ երթալու վրայ է և օրէ օր մեծ մեծ յոյսեր կը տայ. քանի որ մեր դպրոցը առաջ կը քալէ, Հայաստանի լուսաւորուհեան արևն ալ Տորիդոնին կը մօտենայ։

ՏՐԴԱՏԵԱՆՑԸ.

Ա՛յ երախտաւէտ, եթէ կը ներէք համարձակուհեանս, Մոսկվայի «Նոր Դար Հայասպանի» անունով ազգային երգերի տետրակներ ըստացայ որ հրատարակուած իմ բարեկամ Ոսկան Յովհաննէսեան դիտնականը։ Ո՞վ կը հրամայէք, կարելի՞ է նոցանից մի քանի երգ աշակերտներին ուսուցանել։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Ես չեմ կարդացել.... Բայց հաւաստի՞ էք այդ երգերու ազգային ըլլալու վրայ։

ՏՐԴԱՏԵԱՆՑԸ.

Այո՛, վերապատուելի Հայր։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Ուրեմն կրնաք ուսուցանել.... (Այս խօսակցութենէն յանդգնելով Ներսէսեանցը ընդհատ Հէսոքեանցը) ազգային երգերը աղէտ բաներ են, և ըսես թէ դիտամոլ հաւաբեր են, վասն զի մեր դպրոցի յուցակին մէջը երաժշտուհիւն ալ գրված է։ Բայց ատոնք մէկ դի. ըսէք նայիմ ինչ երգ նախ և յառաջ սովրցնէք պիտի, որպէս զի մեր Պատակեան աղայի գալու ատեն տղաքը երգեն, որ նա ալ ղարմանայ։

ՏՐԴԱՏԵԱՆՑԸ.

Շատերը կան, պատուական և սրտաշարժ երգեր, և յայտնի բան է որ վերստին կընտրենք ամենալաւը, որ բարոյականուհիւն շատ ունենայ իւր մէջ։

(Ներսէսեանցը լսելով այս խօսքերը ծոպենուկ խօսողներին։)

ՏՐԴԱՏԵԱՆՑԸ (շարունակելով).

Որքան ազգային հոգի, որքան սրամտուհիւն, որքան մաքուր և անապական բարոյականուհիւն, զոր օրինակ, այս տողերի մէջ.

«Խարձս քաշեց տարաւ
Ձիմացայ թէ ով էր
Եա աղջիկ էր, եա տղայ էր,
Եա պառաւ էր, եա կով էր....»

ԴԻՄԱՑՂԱԿԵԱՆՑԸ (անամօթաբար ծիծաղելով)։

Ազանչելի՛։ մայնիֆիք։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ (մկուսի թաքստէ)։

ՎՀՅԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ։

ՆՈՑՆՔ ԵՒ ՂԱՄԲԷՍՍԵԱՆԸ

(տեսանելով մարդիկ ամաչումէ և յետ է քաշվում)։

ԴԻՄԱՑՂԱԿԵԱՆՑԸ։

Ինչ կուզես տղաս։ (Ղամբէոսեանը լռութէ ամաչելով)։ Ըսէ, մի վախնար։

ՂԱՄԲԷՈՍԵԱՆԸ։

Վերապատուելի Հայր, ձեզ միայն կրնամ ըսել։

ԴԻՄԱՑՂԱԿԵԱՆՑԸ։

Ըսէ՛։ ի՛նչ կայ եղեր։ սա պարոններուն որ մեր աղգին վառ ճրագներն են, սըրտոց առջեն ըսէ, որ իմանան թէ մեք գաղտնի բան չունինք և չենք սիրեր, այլ ամեն բան կըսվի և կը լսվի մանկական պարզահոգութեամբ։

ՂԱՄԲԷՈՍԵԱՆԸ։

Վերապատուելի, վարդանեանը Ձեր մեսին և պատուելի վարժապետների մեսին շատ վատ վատ բաներ է լսօսում դասատան մէջ։ Նորանց անուանումէ տգէտ և կոյր, իսկ ձեզ կոյրերի առաջնորդ....

ԴԻՄԱՑՂԱԿԵԱՆՑԸ (բարկացած)։

Վհիչ է եղել պատիժը....ալ Համբերութիւն չմնայ քովս։ սա անպիտանին կամ պիտի ծեծին տակը սատկեցնեմ կամ դպրոցէն դուրս նետեմ։ ասիկայ փորձանք մըրնէ ղոր չար սատանան բերաւ գլխուս։ (դառնալով դեպ ի Ղամբէոսեանը) Դուն ինչու վախցար ատիկայ մէկէն ի մէկ գըւրցելու։ ատանկ բաներու համար ես քո բարոյականութեան մասին լաւ վկայութիւն կը գրեմ։ գնա, սա սուրբերը (ցոյց տալով Լիոլայէ, և Բինեդիկտոսէ վեր) Թող օգնական ըլլան քեզ այդպիսի գործերու մէջ, գուն իմ աչքս ես, իմ ականջս....

ՑՈՎՍԵՓԵԱՆՑԸ։

Վախցուք թէ այդպես է, վերապատուելի, բայց Ղամբէոսեանը ծուլանումէ ուսանել, երբէք շաբաթ է, դաս չէ պատրաստում։ Անցեալ

անգամ՝ հարցուցի թէ ուր է Էջմիածինը, ինձ պատասխանեց թէ Գըլըղդ ալլահի վերան է։ Ասումեմ՝ սխալ է. այդպէս չէ. մոռածնց, մոռածնց և ապա ասաց Զուվալի կղզիներուն մէջ։

ՆԵՐՍԻՍԵԱՆՑԸ (մկոսի)։

Ուղղը կղզի են շինել, այս ևս մի նոր խայտառակութիւն։

ՅՈՎՍԻՓԵԱՆՑԸ (շարունակութ)։

Հարցանումեմ թէ ի՞նչ է Խալանտիան, ինձ պատասխանեց, թէ իւղով և շաքարով ուտելու կերակուր։ (դառնալով դէպ ի Դիմացքհեանցը) ինդրումեմ, վերապատուելի Հայր, որ դուք պատիժ տաք Ղաւիւեոսեանին, որպէս զի մի փորը ցաւանի։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ (քաղքրութեամբ)։

Նոր լոսք կըլլայ. սակայն կը խոստովանիմ, որ ձեզի ալ պատշաճ չէ մէկէն ի մէկ այդպիսի ծանր հարցմունքներ ընել։ Պէտք է կտոր մը հեշտ կերպով հարցնել։ Ամէն բան կարելի է հեշտացնել. դուք կարող էք հարցնել, այսպէս, «Էջմիածինը Ղաղարշապատի մօտ, Երևանու գաւառի մէջն է թէ ոչ.» յետոյ թէ Խալանտիան կղզի՞ է թէ ոչ։

Այդպիսի ճանապարհներով տղուն միտքը կը լայնվի.... Ղաւիւեոսեանը պատուական տղայ է, և շատ փափուկ սրտի տէր, այնպէս որ չկրնար իրմէ մեծերուն վրայօք գէշ բան մը մէկուն բերնէն լսել, անմիջապէս կը դայ կը յայտնէ....

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Ներեցէք, վերապատուելի, այդ մի վատթարութիւն է, լրտեսութիւն. ճիշդ չէ....

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ (սաքացած)։

Այսիկայ լրտեսութիւն չէ և չպիտի ըսվի լրտեսութիւն. եթէ տղայ մը առաքինի և աղնիւ սրտի տէր ըլլալով չուզեր որ ընկերքը պահասաւոր մեծնան, ուստի կը դիմէ իւր վարդապետին, որ իմանալով խրատէ զանոնք։ Ասիկայ աղնիւ և վերին ձգտողութիւն մըն է և կը վարմանամ ձեր վրայ թէ ինչու համար ասպէս դէշ աչքով կը նայիք.... ան սկզբունքներուն վրայ, որ գիշեր ցորեկ կաշխատիմ ամենքին վարժարանիս մէջ։ Մի՞թէ կը ցանկանաք դուք իմ դպրոցս ապստամբ տղոց ելլելուն։ Վօլթեռներ, Լութերներ, Մոռ և պեսպեսներ.... Տերը վրկէ։ Ինչէ՞ն դոյացան ապստամբութիւնքը, եթէ ոչ ընկերութիւններէն, — Բէֆորմացիան, Հուգենօտները, — Ցակոբեանք.... աշակերտքը պարտական ըլլալով մէկ գիկու վրայ եղած մեղքերը ինձ յայտնել,

անտարակոյս կը կորչնին միմիանց վրայ ունեցած հաւատը. ան պատճառով ալ ամէնքը մեկզմեկէ խիճալով ընկերական հոգին չմնար, ուստի և ապստամբութիւնէ ալ կասկած և երկիւղ չկայ։

ԱՐՈՒԵՍՑ ԳԵՈՐԳԸ.

Յայտնի է, ճշմարի՛տ է, ես իրեւ պատմչաւն բոլորովին համաձայն եմ ձեր տեսակներին։ Ընկերութիւն ասած բանը շատ մեսաներ ունի մեզ հետաքրքրներին։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Ա՛յդ, մնո՛ղ տիօ՛, վայ. իրաւամբ է ըսածնիդ։

ԵՕՔՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

ԱՒԱՋԻՆԴԸ ԵՒ ԽՎԱԹԵԱՆՑԸ.

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Ի՞նչ կայ. ի՞նչ կըսես (դէպ ի նէրսեսեանցը). ասիկայ իմ դլխաւոր վերակացուն է։ (Բոլորէին դլուխ են պալլ ծիծանց)։

ԽՎԱԹԵԱՆՑԸ.

Ոչինչ.... խաղաղութիւն է, վերապատուելի Հայր. աշակերտքը ճաշ կերան և դնացին խաղալու.... այս րոպէիս եկաւ ձեր ուղարկած ձիաւորը և ասաց որ շատ մնտնցնել է քաղաքին Պապակեան Յարութիւն աղան....

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Հա՛. շատ աղէկ. պատրաստեցի՛ր ինչ որ պատուիրել էի։ ժամին մէջ ամիլիան մը, խալիչայ. կը լսես, արժան է ղմեր բարերարը պատուով ընդունել։

ԽՎԱԹԵԱՆՑԸ.

Ամենայն բան պատրաստ է, թէ ամիլիանը, թէ կերակուրը, թէ Շամպայնը և թէ իմ ասելու ճառը։ Պ. կատարեանցը ևս Հայերէն տառերով գրեց և տուեց գիւղացի աշակերտներին փրանսիարէն մի քանի բառ.... (Դիմայլելիանցը նայուածքով խօսքենանցի վերջ բաղձացած և նշանացի է առնա՛ առելի վեռնել, բայց վերջացուած ալնինչ ընկոգելով ըստնանուածքով իւր բանը ամենայն հանդարտութեամբ) բարերարի պատկերը, որ նոր նկարել էք տուած և որի մի փոքր անհնան լինելու պատճառով նկարիչը ամաչումի յայտնել իւր անունը.... կախելի ննջարանին մէջ....

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Ինչ երկար կը խօսիս. ինչ պատկեր, ինչ ֆրանսիական խօսքեր։ Ինչ կատարեանց. ինչեր կըսես, թևայնպէս թէ հարցած ես (դէպ ի նէր-

ոեխանոցը, որ մինչ գնդապետը (ելլալով այս խօսքերը) մի՛ հաւատար, ամենևին սուտ է, Միւսյէ գատօն թէպէտ ճշմարիտ է հայազգի է, բայց գրանսիա ծնած ու մեծցած ըլլալով, իմ վարժարանիս մէջ ընդունելի վարժապետ՝ նա շատ հմուտ է այդ լեզուին, ազգանունը անգամ փոխեր է, գատօ է գրեր, որ ընծայ ըսել է (մեկնաբ.)։ միառք Աստուածոյ։ հաւատացուցի։ (Զայնով) բայց դուն, Խաչատեանց, տես ականջներդ բաց պահէ, իմ քովս գլխէդ մեծ սուտեր մ՚ործար կա, աղէկ որ միտքս ընկաւ, դուն ի՛նչ իրաւունքով ելեր տպարանին մէջ իմ գրուածքը կը սըրբագրես։ քեզի ով ըսեր է որ քաբիկը կոխէ կը գրվի կամ ուղղեն ոտքի։ (դէպ ի նէրսէսեանցը) սրբագրութեան թերթի վրայ երկու անգամ ուղղեր եմ, բայց դարձեալ նա իրեն գիտցածը տպեց գնաց։ ասոր վերջը ըլլայ պիտի։

ԽՀԱԹԵԱՆՑԸ։

Վ՚երապատուելի, Մոսկվա, Հիւսիսափայլի հրատ.....

ԴԻՄԱՑԼԱԳԵԱՆՑԸ (բարկութեամբ)։

Զայնդ կտրիր, աւելի կոթ — կից մը կուզես նէ, ըսէ, պարնեմ։ ան փոքրիսթանթիներուն դրածը ի՛նչ վերաբերութիւն ունի իմ մաքուր ոճին և աղնիւ յարմարագրութեանը։ Վերջապէս անոնցը ճշմարիտ ալ ըլլայ, դուն ինձ հաճոյանալու համար իմին ըսածս ընես պիտի, իմին կանչս կատարես պիտի.....Մագամեանցը եկաւ թէ ոչ եթէ գայ, ըսէ որ ճաշի հրաւիրէ մեր մօտ։ (դէպ ի նէրսէսեանցը) ես շատ կը ցանկանայի բարեկամանալ ձեզ անոր հետ։ քաջ ուսումնական է և եղուպիտուութեան դանդիդատ, փիլիսոփայ և բառերի արմատ քննող։

ԽՀԱԹԵԱՆՑԸ։

Նկել է և այս րոպէիս պիտի գար ձեր մօտ։ (լսելով դռնէ ձայներ) ահաւասիկ կարծեմ նա է։

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՒՅԹ։

ԱՌԱՋԻՆՔԸ ԵՒ ՄԱԳԱՄԵԱՆՑԸ։

ՄԱԳԱՄԵԱՆՑԸ

(կոտրատուելով ներս է մտանում ընդունելով խորհրդատու փիլիսոփայի և նոյն ժամանակ մի պճնասէր երիտասարդի ձևերը)։

Ա՛ստամ.....(ձայդ պճնանելով նէրսէսեանցը դռնոջ խօսքը) յարևելից յարևմուտս սրանայ յինծուհիւնն իմ յորժամ հայիմ յաչս ղԱստուածաշաղարդ հովիտդ ղբրիստալը ղեկեղեցւոյդ ղմերուն Հայաստանեայց վերապատուելի վարդապետի.....

ԴԻՄԱՑԱԼԱԿԱՆՑԸ.

Ըստուած պահապան, կը խնդրեմ ծանօթի ըլլալ աս աղիւս պարոնին հետ (ցոյց տալով Նէրսէսեանցի վրայ)։

ՄԱԳԱՄԵԱՆՑԸ (ժպտելով).

Ա՛ռաջ դուք ևս համալսարանում աւարտել էք....

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Ո՛չ. ես կայսերական ճեմարանում....

ՄԱԳԱՄԵԱՆՑԸ (ընդունելով մի ինքնահաւան կերպարանք).

Հէնց է՞դ. քաս դուք ոչինչ չգիտէք։

ԴԻՄԱՑԱԼԱԿԱՆՑԸ

Դուք աս տեղս կտոր մը խօսք ըրէք ուսման վրայօք. ես ալ երթամ պապակեան ասպետի ընդունելու հոգ ընեմ. նա այժմ շուտ կուգայ. (դուրս է գնում)։

ՄԱԳԱՄԵԱՆՑԸ.

Այսպէս բան է, ես ուրիշ բանի վերայ մտածել ևս չգիտեմ, իմ խնդիրներս են փիլիսոփայական բաներ, որոնց վերայ երազում ևս դատողութիւնք եմ առնում....բայց իմ գլխաւոր նպատակը, մագամ չէք իմանում, Հայոց ազգի լուսաւորութիւնն է. ես գրուածիմ այժմ մի մեծ գիրք, որի մէջ պիտի ապացուցանեմ Հայոց լեզուի առաջնութիւնը և բոլոր աշխարհի լեզուների նրանից դուրս գալը։ Ես քննել եմ Եւրոպական լեզուքը և նոցա ամէն մի բառի մէջ գտել եմ Հայկական արմատը զոր օրինակ. Ապա, այսինքն անդամ ընութեան. Նոյ—և Հայ, որովհետև Հայ էր, Նոյ—Նոյն, այսինքն նոյնպէս Հայ ինչպէս և Ադամը, որովհետև ջրհեղեղից յետոյ նա էր առաջին մարդը։ Առնուինք Եւրոպական բառս Վէրսայլ—վեր գալ, այսինքն դեղեցիկ դահլեճ, Տրանզիտ—տրաբվիլ, կոպոիլ—կայտռալ։ Զարմայր բառը ևս քննել էի և գտել որ դուրս է գալիս զարմանալի այլ բառերից, բայց մի քանի Ասիադէտք ընդդիմացան ինձ, դուրս բերելով Պարսկի շատ մաք բառերից, ես բողքեցի։ Շնորհակալ եմ, Փարիզի Ակադեմիան իսկոյն մէջ մտաւ և հրատարակեց, որ ուսումնականք աշխատին մեծ ուշադրութեամբ քննել այդ բանը։ Խոստացաւ տալ գտնողին, և այդ մասին մի հիմնաւոր շարադրութիւն ներկայացնողին, Հարաւային Ֆրանսիայի այգինների բոլոր ծխերը, որ պիտի մնային հոկտեմբերին, այգեքաղից յետոյ։ Ես ևս գրուածիմ մի շարադրութիւն այդ մասին, ուր Աիկներոնի և Հիպոկրատեսի վկայութիւններով պիտի հաստատեմ իմ ասածը, այսինքն Զարմայր անունի, զարմանալի այր, բառերից դուրս եկածը....բայց ի սո-

բանից Հայոց լեզուի առաջնութիւնը հաստատելու մի հզօր ապացոյցը ևս է ալեվան բառը, որ նշանակումէ գերմանացի։ Այդ բառը առաջին անգամ արտաբերող գերմանային Հայ ծնած լինելով կամենումէր Արմէն ասել, բայց թլուատ լինելով և չէ տառը լեզ արտաբերելով, դուրս է եկել ալէն։ Մենք գիտենք լեզուագիտական կանոններից որ լեզուների կազմութիւնը որոնելու ժամանակ, բաղաձայն տառերը ունին մեծ կարևորութիւն, ձայնաւորքը շատ և շատ փոփոխվումեն, մանաւանդ եղբ դեպի ի այբ և ընդ հակառակը։

ՆԵՐՍԵՍԱՆՑԸ.

Բայց ես աւելի հաւանական եմ համարում երևելի եւրոպական լեզուաբանին ուսումնականների համաձայն պ. Նաղարեանցի կարծիքները, որ տպված են Հիւսիսափայլ օրագրի անգրանիկ ամսատետրակի մէջ։

ՄԱՓԱՄԵԱՆՑԸ.

Աիրելի, եղբայր, մադամ դու չգիտես այդ վարդապետին, նա ոչինչ Հայերէն չգիտէ, մէք ուսումնականքս աւելի հնար ունինք քննելու։

ՆԵՐՍԵՍԱՆՑԸ.

Եղբայր, ներողութիւն, բայց դուք կարծեմ որ նորա բուն աշակերտ ևս չէք կարող լինել, ընդելով որ ձեր ձայիը մոռանումէք և բերան էք բացում մի այնպիսի մարդու վերայ, որ վաղուց արդէն զանազան դրուածներով ցոյց է տուել աշխարհին իւր գիտութեան չափը և արժէքը։ Տարաբաղդութիւնը այն է, որ մեր ազգի մէջ ձեղ նման դատաւորք պիտի ունենայ այն աղնիւ և առաքինի պարոնը։ դուք ով, Նաղարեանց դատողը ով, գոնէ ամաչեցէք։

ՄԱՓԱՄԵԱՆՑԸ (կակղացած).

Հոգիս, դուք բոլորովին սխալ էք դատում։ Ո՛շմարիտ է, ես դեռ Հայերէն բան չեմ գրած, բայց եթէ գրեմ, նորանից լաւ կ՛ուսուցանեմ.... ես դեռ երեխայ էի, մինչ որպէս աշակերտ մի նահանգական գպրոցի, ռուսաց լեզուով ռուսաց օրագրի մէջ հրատարակեցի մի հիանալի յօդուած, անունով «о вліяніи поэзіи на нпщевареніе человѣка», այսինքն «թէ ինչպէս է բանաստեղծութեան աղդեցութիւնը մարդու մարսողութեան վրայ»։ Այս յօդուածի համար գպրոցի կառավարիչը կաշուի ճիւղերից մի սրակ դրեց ճակատիս վերայ։ Ես դեռ երիտասարդ եմ, ես կարող եմ շատ յառաջանալ և երևելի ուսումնական դառնալ։

ՆԵՐՍԵՍԵԱՆՑԸ.

Բայց այդ բոլորը ապագայ բաներ են, իսկ ներկայումս ինչ է ձեր Հայերէնագիտութեան ապացոյցը։

ՄԱԳԱՄԵԱՆՑԸ.

Մագամ. . . մագամ. . . մագամ. . .

ՆԵՐՍԻՍԵԱՆՑԸ.

Մագամը ապացոյց չէ, դուք խայտառակումիք ձեր անձը, միմիայն այդ բառը գործածելով, Թողունք ձեր առ հասարակ տգիտութիւնը Հայոց լեզուի մէջ։

ՄԱԳԱՄԵԱՆՑԸ։

Ընդդէմ դուք չէք խնամում և խօսումիք, ես շուտով մի օրագիր կամիմ հրատարակել «Թէքէ» անունով։

ՑՈՎՍԻՓԵԱՆՑԸ (ժէջ ընկնելով).

Հրամերէք, Աֆրիկայում կայ մի այդ անունով կանաչ կենդանի, որ պատկանում հաստատմրի անասուններին. այդ շատ լաւ կը լինի, պ. Մագամեանց։

ՄԱԳԱՄԵԱՆՑԸ (արհամարհելով).

Animall! *ընդդեմ, մի՛ կորէք մեր խօսքը։*

ՑՈՎՍԻՓԵԱՆՑԸ (գլուխ տալով).

Շնորհակալ եմ, բայց արժանի չեմ ես այդ պատուանունին. սակայն կաշխատիմ արժանանալ, որովհետև. . . . այնուհետև. . . . ըստ որում. . . . հրամայեցէք. . . . պատրաստ եմ ձեր կամքը կատարել։

ՄԱԳԱՄԵԱՆՑԸ (դէպ ի ներսէսեանցը).

Ինչ և իցէ, ես ուզումեմ մի ընկերութիւն կազմել, այն դիտաւորութեամբ, որ ինձ նախագահ դնեն, բայց տեսնենք, նախանձամութիւնը. . . . (նայելով ժամացոյցին) ընդդեմ ներողութիւն, ժամը երեքն է արդէն, հարկաւոր է յառաջ գնալ պ. պապակեան ասպետին. . . . (թեզմոմի ներսէսեանցի յետքը)։ Ցոյս ունիմ ձեր բարեկամութեան վերայ. ցկրկին տեսութիւն (դուրս է գնում)։

ՆԵՐՍԻՍԵԱՆՑԸ (մենակ).

Երանի աղբատաց խելօք, դէն նոցա է փառքն ճոռաքաղի։

(Ուղէր վերադառնալ մէն մի դուրս են գնում. մնում միայն Խաչատեանցը, որ մտքերում ներսէսեանցին)։

ԽԱՉԱԹԵԱՆՑԸ.

Ո՛նչպէս հաւանեցաք մեր Մագամեանցին. նա հիւր է այս տեղ և վարդապետը շատ սիրում նորան, և ինչպէս երևում մեծ աղդեցութիւն կարող է ունենալ մեր ազգի վերայ, այս պատճառով ևս կամենում ընդրել նորա պատկերը։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Ինչացո՞ւ,

ԽՎԱԹԵԱՆՑԸ.

Դուք գիտէք, որ ամէն մարդ աշխատումէ իւր վիճակը լաւացնել. ես ևս կը ցանկանայի. վարդապետը ինձ, շատ ժամանակ է, խոստացել է լաւ գործ տալ կամ քահանայ ձեռնադրել, ես հաճոյանալով Մագամեանցին կարող էի գրաւել մեր վարդապետի սիրտը։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Մեծ յառաջադիմութիւն կարող էք ստանալ այդ ճանապարհով։

ԽՎԱԹԵԱՆՑԸ.

Եթէ չհանեմ նպատակիս, ոտանաւորներով կը խայտառակեմ. ես շատ շուտ և հեշտ գրումեմ ոտանաւորներ....

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Հա՞ւատ էք գրել,

ԽՎԱԹԵԱՆՑԸ.

Մի՛ ահագին գիրք։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Ի՛նչ է այդ գրքի անունը,

ԽՎԱԹԵԱՆՑԸ.

Դեռ ևս յայտնի չէ։

(Լսվում հեռուից աշխերգնէրի յայնը, որ գոռումն կեցցե՛, կեցցե՛)

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ։

ԱՌԱՋԻՆՔԸ, ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ, ՊԱՊԱԿԵԱՆՑԸ ԵՒ ՄԱԳԱՄԵԱՆՑԸ։

ՊԱՊԱԿԵԱՆՑԸ.

(Դիմայլակեանցը նորա քամակից գլուխ տալով).

Հա՛ւատ աղէկ, շատ սրայով է վարժատուն դ, Հայր սուրբ։ Ես շատ բան տեսիլ էի, ֆապուիքներ, զալօտներ և վերջապէս....քանթօրը, ումմա ասպէս Թեմիզութիւն, տեսօքութիւն տեսած չէի։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Հա՛ւատ շնորհակալ եմ, աղա՛. ես միշտ պատրաստ եմ լուսաւորութեան և դաստիարակութեան համար։

ՊԱՊԱԿԵԱՆՑԸ.

Ո՛չ հապա, ուսուցմ ասածդ Թանգ բան է ամմա, Հայր սուրբ, իմ գիտցածս կայ նէ ալայ մնալայ խորունկները մտնելն ալ աղէկ բան չէ. ան ուսուցմին վերջը չի գայ, ինչ խատար երթաս, կերթաս. և էկէր ճամբէ տէյին մէջը իյնիս նէ, անոր տակը հիչ չիս հասնիլ։ Իմ գիտցածէս տղին շատ կարդալն ալ զարար է. (մատով համաքելով) մէկ մարդս գիտցաւ Հայնակ քերական, պզտի սաղմոս, մեծ սաղմոս, Կտակարան, վարժուԹիւն մանկանց և Նարեկ. ան է որ խալՀայ եղաւ գնաց։ Ռուսնակէն ալ դրել կարդալ, քիչ մը վարժվելու համար ալ Ֆռանցուզնակ, լաթիննակ կալաճի գիտնայ, փօլքայ և քատոլիք խաղալ, աս խատարն ալ մանչերու համար. չէ նէ աղջիկներուն հիչ պէտք չէ. գրել կարդալ գիտցածներովը, մէմալ նայիս տանք տէյին կելլեն դիր կը դրին մարդուն մէկին, բանն ալ պուրԹի կանին կը խալսին.... Ֆանա ես ալ ունէի մէկ հատ սուռուԹմայ.... երեսը սև ըլայ.... ամմա ասոնք ուրիշ բաներ են, իսա մեր տուշմաններուն վրան մէկ քրիԹիք պիտ՝ գրէիր, անկաճիդ վրան մի պառկիլ, երեսներս չերքէզի չառրև արին։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Ընշուշտ, ես օրագիր մը Հանեմ պիտի «Եօ[illegible]ֆեան» անունով, որուն մէջ սա մեր ուսուցմնականը (պառնալով պէկ և Մոփամեանցը) կրիտիկայով և ուսուցմնական առԹիքներով մանակից պիտի ըլլայ։

ՄԱԳԱՄԵԱՆՑԸ (Ցիծաղելով).

Ա՛ադամ դուք չգիտէք էստուր, որ ես էլ պատրաստ եմ իմ կողմանէ օգտակար լինել իմ ազգին։

ՊԱՊԱԿԵԱՆՑԸ.

Կաղաչեմ քեզի, պ. Մադամով, իդա Հիսուսսափայլին մէկ հատ անպէս քրիստիք գրէ որ մէմալ հիչ բան չ՝տպէ, սալԹը ճերմակ ԹուղԹ Թող ըլայ, ան վախտը ես ալ կառնում։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Կտոր մը ժամանակէն բոլորովին չերևնար ան օրագիրը, վասն զի պնասակար ըլլալով, իրաւամբ ընկաւ իմ դատապարտուԹեանս և նզովքիս տակ։

ՊԱՊԱԿԵԱՆՑԸ.

Ը՛էն կենաս, Աստուած կեանք տայ, Հայր սուրբ, շատ աղէկ արիլիս, էկէր չանէիր նէ, Աստուծու դիմաց պարտական կը մնայիր, (ցած յոյնով և ցոյց տալով ներսեսեանցի վէրքը) իսա զուռնային Հեռուցուր քիչ մը Հոսէն, որ մեր կալաճին չի լսէ։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ (դեպ ի ներսէսեանցը)։

Կը կամենաք, պարոն, անձամբ տեսնալ մեր վարժարանը, եթէ կամք ընէք, ահաւասիկ մեր Ցովհաննէսը կ'առաջնորդէ, հրամմեցէք (ջեռպ է խվշինեանցը)։ Գնա ամեն մէկ բանը տեղն ի տեղը պատմէ և ցոյց տուր մանրամասնաբար։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ.

Ա՛նծաւ ուրախութեամբ։ (Դուրս է ջեռպ սենեկից.)

ՏԸՄՆԵՐՈՐԴ ԵԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԵԻՈՑԹ։

ԱՌԱՋԻՆԸԸ ԵԻ ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ

(տհաճութեամբ ներս մտանելով Դիմայլակեանցի սենեակը).

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Ինչպէս է, պարոն, հաւնեցայք մեր վարժարանին, երբ միտք ունիք խաւրել ձեր եղբայրը։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ (հեգնութեամբ).

Ա՛ինչև այն աստիճան լաւ է, որ ես եղբօրս համար մի փոքր վատը պիտի որոնեմ, ըստ որում իմ եղբայրը արժանի չէ այդպիսի վարժարանի։

ԴԻՄԱՑԼԱԿԵԱՆՑԸ.

Փնտռեցէք, բայց հարկ չկայ փնտռելու, գիւրաւ կրնաք գտնալ, բայց լաւը ոչ երբէք։ Սակայն կը յանկանամ իմանալ ձեր տհաճութեան պատճառը։

ՆԵՐՍԷՍԵԱՆՑԸ (անբաւական կերպով).

Պատճառը.... դուք էք, ձեր ուղղութիւնը, ձեր դպրոցը, ձեր տուած դաստիարակութիւնը։ Ես ցաւելով այս տեղ տեսայ մի խաւարապաշտների դպրոց.... Աստուած իմ, ինչ էր որ տեսայ ես այս տեղ։ (ափերը պրպտելով) երազ էր թէ իրողութիւն։ Ո՞հ, որքան երջանիկ պիտի լինէի եթէ այս բոլոր տեսածներս երազ լինէին, բայց աւաղ — դառն ստուգութիւն.... կառավարիչը օր ու ցերեկ մտածումէ խաբէայութեան վերայ, օգտի և շահաստացութեան վերայ, շրջապատել է իւրեան յիմար մարդերով, որոնց վարժապետ է կարգել և որոնք ոչ միայն ուսումն, այլ գաղափար ևս չունին, թէ ինչ ասել է ուսումն։ Մարդ կամին խաբել, մինը քամիներ է փչում, միւսը բոլոր կօշկակարները, դերձակները, հացթուխները, լարախաղացները և գերասանուհիքը — իւր համար Եւրոպացի հեղինակ է շինել և անամօթաբար ստում թէ միշտ գրակցութիւն ունէր նոցա հետ։ Խարերարը, հիմնելով իւր

բոլոր գործերը խաբեբայութեան և յափշտակութեան վերայ, դպրոցը համեմատութեամբ գործարանների հետ, աշակերտքը չիմար և տգէտ, կառավարիչը կազմել է նոցանից մի լրտեսութեան ընկերութիւն, և առաքինի աշակերտը ծնծվուժ, նախանձավուժ և վերջապէս դուրս է ընկնում դպրոցից....

Ախայ մեր ազգին, նայելով նորա մեռելային անտրտութեանը, հարկաւոր չէ սորանից լաւ դպրոցներ. Հայերի համար հոգի չկայ, մարմին միայն: Այսպիսի դպրոց....հևռի ինձանից....ինչպէս կարողացայ ես այսքան ժամերով շնչել այս տեղի օդը, նա վարակված է ճիզվիթական մահաբեր թունով: Այս տեղ....մի կողմից, ճշմարիտ է սուտ բարերարի արած համեմատութիւնը դպրոցի և գործարանի մէջ. սա մի գործարան է, ուր անմեղ մանուկները ուսանում են կեղծաւորութիւն, խաբեբայութիւն, սուտ աղգասիրութիւն և ճիզվիթութիւն:

Այս դպրոցը իւր արտաքին կարգերով և ներքին ապականութեամբ նմանում է դերեզմանների, որ դուրսից գեղեցիկ, բայց ներսից լցուած ժահահոտ մեռելոտիներով: (Առնում է գլխարկը) Մնաք բարով, չեմ ցանկանում միւս անգամ տեսանել ոչ միայն ձեր դպրոցը այլև ձեր երեսը: (Դուրս է գնում շտապով)

ՊԱՊԱԿԵԱՆՑԸ.

Հայր սուրբ, գլուխս ցաւեցաւ, փորս ալ քաղցըցաւ, իտա կերակուր պիտի ուտէինք, ինչ պիտի անէինք, երթանք հայտա:

ՄԱԳԱՄԵԱՆՑԸ.

Հայր սուրբ, այդ ներսէսեանցը կապելու գիժ է:

ԴԻՄԱՅԱԿԵԱՆՑԸ (*ախուր մտածութեամբ*).

Աբրիկայ եթէ կաթողիկոսը իմանայ, ի՛նչ կըսէ....եպիսկոպոսութիւնս....

(*Վարագոյրը ցած է ընկնում.*)

Ա. Սոլիան-Ըմհ:

Ծան. Այս փոքրիկ գործի մէջ խօսող մի քանի մարդերի խօսակցութեան մէջ ուշը և յարմարադրութիւնը խորհրդով պահեցինք. յոյս ունինք, որ Հիւսիսափայլի ընթերցողքը կը հասկանան մեր իրաւունքը և ազատ կը կացուցանեն մեզ մեղադրանքից, որպէս թէ հոգաբարձու եղած էինք լեզուի մաքրութեանը:

Հեղինակը:

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ։

1. Խորին տրտմութիւն և դառն վիշտը
Ճնշումէ անձս և մաշումէ հոգիս.
Արիւն է պատում իմ ղգայուն սիրտը,
Տեսնելով թշուառ դրութիւնը ազգիս։
Ո՛վ իմ հայրենիք, խղճուկ Հայաստան,
Մինչև երբ արդեօք այդպես պիտի մնաս,
Եւ երգիչներիդ դու միշտ յաւիտեան
Միայն լաց և ողբ պիտի իմանաս։

2. Ընդ դու ազգ Հայոց, պաշտած ինձանից,
Երբ այն երջանիկ կը գայ ժամանակ,
Որ և դու զարթնես այդ քո խոր քընից,
Որ այսքան հարիւր տարիք շարունակ
Կապումէ աչքերդ, քեզանից ծածկում
Քո տկար մարմնի անթիւ վէրքերը,
Սուտ երազներով է վարագուրում
Նուաղած հոգուդ ծածուկ վշտերը։

3. Հերիք է, ազգ իմ, հերիք է, զարթի՛ր,
Թօթափիր քունը, աչքդ բաց և տես.
Նայիր չորս կողմդ, քո վերայ նայիր,
Ինչ էիր երբեմն և այժմ ինչ ես։
Կար ժամանակ երբ և դու ունէիր
Ազգերի շարքում անուն պատուական,
Հաւատով, ուսումով դու ծաղկումէիր,
Ունէիր քեզ գահ, լաւագ արքայական։

4. Ինչ այդ ազգային պարծանքն ու փառքը
Դու գնահատել սակաւ իմացար,
Հայկից, Արամից քեզ տուած աշխարհքը
Օտարի ձեռին եղել է աւար.

դորուսել ես քո աղնիւ բնութիւնը,
Երկպառակութեամբ կրօնդ խանգարվել,
Եւ խաւար, մռայլ տգիտութիւնը
Խելքիդ չորս կողմը ծանր քօղ ձգել։

5. Այլ քեզ չէ պիտոյ միշտ մնալ այդպէս,
Այդ թմրութեան մէջ, քեզ կորստաբեր։
Երկինքը նոր կեանք է վիճակել քեզ,
Ապագայումը և պայծառ օրեր։
Այժմ փոխվել են հանգամանքները,
Ունես դու բարի և հզօր պաշտպան։
Քանդի՛ր տգիտութեան թոյլ կապանքները,
Դիմիր դէպ ի լոյս ազատ, անխափան։

6. Եւ աստուածընտիր քո բարի Հայրը,
Քահանայապետ Տէր ՄԱՏԹԷՈՍԸ,
Նա քեզ ցոյց կը տայ այն ճանապարհը,
Որով պիտի գնաս դու դէպ ի լոյսը։
Յուսա՛ նորա վրայ։ լայն ինքդ նոյնպէս
Խնայիր մի՛ ոչինչ զոհաբերութիւնք։
Ալն ժամանակ դու երջանիկ կը լինիս,
Կը ծաղկին կրօնդ, արհեստք, գիտութիւնք։

Գեորգ Բարխուդարեանց։

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

—

Փարիզ, $^{4}/_{16}$ Սեպտեմբերի 1859 Թուականին.

ՊԱՏԳԱՄԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ.

Հաւատի եմ, որ ցանկալի կը լինէր Ձեզ իմանալ թէ այն Թողութեան հրովարտակը, որ Ֆրանսիացոց կայսր Լուդովիկոս Նապոլէոն Երրորդը արձակել է Վիլլաֆրանկեան խաղաղութենից յետոյ, անցեալ Օգոստոսի 16 ին, ի՛նչ ընդունելութիւն է գտել այն աքսորականների կամ տարագիր դնացածների կողմից, որոնց վերարերմամբ այդ Թողութեան հրովարտակը։

Ընդարձակ այդ հրովարտակը վկայութեամբ հաստատում այժմեան կառավարութեան անձնավստահութիւնը, այն ազդեցութիւնը որ նա իւր անուրանալի մեծ յաջողութիւններով ստացել է Ֆրանսիացոց սրտերի վերայ, այլև Նապոլէոնի ուղիղ հաշուարարութիւնը, արտաքին յաղթութենների պարծանքով ձնշել և անհետ կացուցանել ներքին աղտոտութեան ցանկութիւնը ֆրանսիական ազգի մէջ — բայց դորա փոխանակ, այն մերժողութիւնը որ կայսերական Թողութեան հրովարտակը գտել է համարեա թէ բոլոր փոքր ի շատե նշանաւոր քաղաքական աքսորականների կողմից, ապացուցանում թէ ի՛նչպէս ամուր և հաստատ էր դոցա սրտի վկայութիւնը քաղաքական բաների մասին, կամ թէ ի՛նչպէս խորարմատ էր նոցա ատելութիւնը դէպ ի 1851 Թուական։ Դեկտեմբերի 2 ին դաւաճանութեամբ և բռնակալութեամբ գործակատար առաջնորդը ֆրանսիական Հասարակապետութեան, այսինքն դէպ ի Նապոլէոն Երրորդը։ Երկաք անգամ արդէն Փարիզի մէջ կոնստիտուսիօնել անուանով օրագիրը համարձակվել է հրատարակել զանազան մերժողական նամակներ ֆրանսիական աքսորականների բերանից, որ լսել ևս չկամէին Նապոլէոն կայսրի Թողութեան հրովարտակը։ Այդ նամակները կարող չեն այսուհետև վնասել Նապոլէոնի յաղթութեանը։ Ինչ որ Նապոլէոնը խլել է ֆրանսիական ազգից, դորա փոխարէնը տուել է նա այն հատուցմամբը որ հատուցել է նոցա։ Այն հոգեպայծառ խնդութիւնը, որով Փարիզը անցեալ Օգոստոսի 15 ին ընդունեց իւր, Իտալիայից վերադարձած կայսրը, չէ Թողում այդ մա-

սին ոչինչ երկբայութեան տեղիք։ Դեկտեմբերի 2 ի քաղաքական դարանագործը ամենևին արժանի է այսօրեան Ֆրանսիացոյ աղդին։ Ձեզ յայտնի կը լինին Լուի-Բլան, Վիկտոր Հիւգօ և Եդգար Կինէ տարագիր եղած ֆրանսիական մատենագիրների պատասխանիքը ընդդէմ կայսերական թողութեան հրովարտակին։ Այժմ կամիմ Ձեզ հաղորդ կացուցանել մի այլ պատասխանական նամակի որ գրած է գնդապետ Շարրասը կայեննէից (Ֆրանսիական Գիւանային մէջ Հարաւային Ամերիկայում)։ Ահա դորա խօսքերը.

«Յայտնի լինի Լուդովիկոս Նօնապարտէից.»

«Դուք հրատարակումէք ընդհանուր թողութեան թուղթ. Դուք ներումէք այն հաղարաւոր քաղաքացիներին որ վաղուց ահա ձեռքով դուրս վարված դէպ ի օտար աշխարհ, Աֆրիկայի սատակիչ կլիմայի մէջ և կայեննէի ժանտախտային ճահիճների մէջ, անցուցանումեն մի ողբալի կեանք։ Սոքա պաշտպանումէին ձեր երեսից այն օրինադրութիւնը որ յառաջացել էր աղատ և ընդհանուր դատողութեան իրաւունքից (par le droit de suffrage universel), որ և դուք հանդիսաւոր երդմամբ յանձն առաք հաւատարմութեամբ պահպանել, բայց յետոյ դրժողապէս քակտեցիք։ Սորա համար հանդիպեցաւ նոցա ձեր վրէժխնդրութիւնը։ Այժմ ցուցանումէք նոցա շնորհ։ զարմանալի՞ բան։ Ցանցաւորը ներումէ նոցա, որ եղել են նորա ամբարշտութեան պճոյ։ Եւ այս յատկացուցիչ բնաւորութիւնը պէտք էր ձեզ փոխ առնուլ պլանդակված Հռոմի կեսարներից։ Հասարակաց դատաստանի և աշխարհի պատմագրութեան առաջև, չկամիմ երբէք յանձն առնուլ այդ խարդախ փոխանակութիւնը։ Այն մարդուն, որ լուծել է իրաւունքը, անպատշաճ է ողորմութիւն ցուցանել նոցա կողմից, որ պաշտպանել են այդ իրաւունքը։ Ձեր թողութիւնը կամենումէ անպատուել նորանց որոնց վերաբերվումէր նա։ Նա ծածկումէ իւր մէջ մի որոգայթ, մի դարանագործութիւն, ինչպէս ձեր բոլոր խօսքերը, ինչպէս ձեր ամեն մի երդումը։ Փոյթ չէ ինձ այդ։ Բայց ես որպէս փոխանորդ ժողովրդի որի բերանը խօսկել էք Դուք, որին փակել էք դուք բանտերի մէջ, տարագիր էք արել, ես որպէս պաշտօնակալ, որին ղրկել էք դուք իւր արժանաւորութիւններից, հալածելով նորան մինչև նորա աքսորանքի մէջ, ես հրատարակումեմ ձեզ, թէ կարող չեմ թողութիւն տալ ձեզ։ Ես չեմ ներումէ ձեզ այն 15,000 մարթածնների արիւնը Դեկտեմբերի ամսումը, այն ձեր բանտերի և աֆրիկական գետնափորների մէջ, աքսորանքից, չարչարանքից ու տանջանքից սպառված Ֆրանսիացոյ կորուստը։ Ես ներումէ չեմ ձեզ այն ամբարիշտ ուրացութիւնը որով ուրա-

ցաք դուք այն օրինադրութիւնը, որի անունով երդում էիք կերել, և այն հասարակապետութիւնը որ կրկին պայազեց ձեզ մի հայրենիք։ Վերջապես, ներում չեմ ձեզ այն յանցանքը, որ դուք, ընդհանուր դատողութեան իրաւունքը խարդախութեամբ և սպառնալիքով անարդեցիք, և իմ հայրենիքը ծառայութեան լծի տակ ձգեցիք և նորա բարոյականութիւնը (բարքուվարքը) աւերեցիք կամքով և դիտութեամբ։ Երդարև, հեռի իւր ընտանիքից, հեռի իւր հայրենական աշխարհից, ցուցանումէ կեանքը ինչ ինչ դառնութիւնք, բայց դա ստրկութեան մէջ պիտոյ է լիներ աւելի դառն։ Այն օրին, երբ ազատութիւնը, իրաւունքը և արդարութիւնը, այս վսեմական աքսորականները, կը վերադառնան դէպ ի Ֆրանսիա, որ պատժէն քեզ ամենադարդար պատուհասով, այնուհետև կը վերադառնամ և ես. այդ օրը թէպէտ երկարատևէ, բայց նա կը հասանի, և ես գիտեմ սպասել։»

Ձեզ յարգող

Հայրենակից Գաւուր Պօղոսեանց։

Թվլիզ, $^{9}/_{21}$ *մայիսի* 1859 *թուականի.*

ԱԶՆՈՒԱՒԻՏ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ՀԻՒՍԻՍԱՓԱՑԻ ՕՐԱԳՐԻ.

Խնդրեմ ներել բարեկամական համարձակութեանս, եթէ պրուսիայի մայրաքաղաքից ուղարկուեմ Ձեզ այն տխուր տպաւորութիւնը որով ղպած է հոգիս, այն տրտմութեան հանդիսի նկարագրութիւնը, որ կատարուեմ այժմ բոլոր Թերլինը, իւր հոյակապ քաղաքացու հողեղէն նշխարքը ուղարկաւորելով դէպ ի հանգիստ դերեզմանի։

Վխտամ և ամաչելով խոստովանութեամբ որպէս Հայ մարդ թէ մեր ասիայի եղբարքը (խօսքս մի քանի մանուածորների վերայ չէ) իւրեանց յատուկ ցաւի և տրտմութեան համար չունին արտասուք, իւրեանց ազգային անբաղդութեան համար չունին ղպծղող սիրտ և մտածող հոգի, ուր մնաց մի այնպիսի եւրոպական պատահարի, մի այնպիսի ականաւոր մարդու վախճանի համար, որի անունը ևս լսած չէին, թող թէ նորա դերապանծ ուսումնական վաստակներին տեղեակ էին։ Մեծ երկբայութեան մէջ իմ, թէ այդպէս հոգով ու սրտով ցամաքած, նիւթապաշտութեան մէջ կորած, իւր նեղ ասիական շրջանի մէջ փակած ու խեղդված ազգի վերայ կարող էր որ և իցէ ազդողութիւն գործել իմ նկարագրութիւնը, կամ նորա սիրտը շարժել այն խօսելիքը որի նիւթը է մի հոյակապ մարդու կեանք, որ ամենևին դուրս էր հայկական մարդկութեան աշխարհից, որ և միայն եւրոպական հողի վերայ կարող էր

աճել և զօրանալ, ըստ որում այդ տեղ միայն տուած էին աճելու և զօրանալու հարկաւոր պայմանքը։ Բայց, ի՛նչ պիտոյ է առնել, աղնուամիտ Հրատարակող, մեք Հայ ենք և մեր բարոյական կոչումն երկրի վերայ, ինչքան ևս տրտում լինէին այն հանգամանքը որի մէջ դրել է մեզ նախախնամութիւնը, չէ կարող մի այլ բան լինել, քան թէ քաջալերվիլ ինքն իւրեանով, Հոգի ստանալ ինքն իւր աչքիւ գիտակցութեամբ և գնալ որոնել մեր ազգի կորուսեալ ոչխարքը։ Եւրոպացիք կարօտ չեն մեզ, և ի՛նչ արժանի վաստակ կարող էինք մեք վաստակել նոցա համար։ մեր վաստակքը, մեր մնածուութիւնքը, մեր բոլոր կեանքի գործականութիւնը պիտոյ է նուիրվի մեր հայրենական ազգին։ գա է մեզ կարօտը։ դորա համար, որքան կենդանի ենք մեք, պարտական ենք մտածել և յուսալ, աշխատել, քրտնել և գործել մինչև օրը երեկոյացել չէ։ Թող այս ներկայ սերունդս ընտրված չլինի ականատես լինելու ազգի գալոց բաղդաւորութեանը, բայց Իսրայէլացոց պէս անապատի մէջ, որ չարժանացան տեսանել Աւետեաց երկիրը, կոչված ենք մեք պատրաստել ճանապարհը մեր զաւակների համար։ Թող միայն իւրաքանչիւր ոք մեզանից գործ կատարէ իւր կարողութեան չափ։ արդարև ամեն մի առանձնականի աշխատութիւնը էր մի կաթիլ ովկիանոսի մէջ, բայց և աշխարհածովերը էին միանգամ կաթիլներ։ Այսպէս ահա քննելով բանը, անյոյս չեմ, թէ մի քանի բանական մարդիկ ուրախութեամբ կարգալու էին այս նամակս և շնորհակալ կը լինէին թէ ինձ նամակագրիս և թէ Ձեզ, աղնուամիտ Հրատարակողիդ։

Ալէքսանդր Ֆօն Հումբոլդը չկայ այսուհետև։ Այս լուրը Եւրոպայի մէջ դղրդելու է բոլոր սիրտերը թէ խրճիթներուն և թէ տպարաններուն մէջ։ Նա տարածելու է տրտմութիւն այնքան հեռի, ինչքան որ ձգվումէր մարդկային հաղորդութեան թելը, ամենայն տեղ, ուր միայն որ և իցէ բարոյական կարգ և կրթութիւն գտել է իւր համար հայրենիք և օթևան։ Ցաւիտեան փակվել են այն աչքերը որ աւելի բան ճանաչել էին տիեզերքի հրաշներից, աւելի լոռ պինել ու հասկացել էին նորան, քան թէ երբ և իցէ մի մարդկեղէն իմացականութիւն։

Ա՛յն պտոյտ պտոյտ ալիքները որ նորա կարող ձեռքի ձգողութենից յառաջացան միտքերի ծովի մէջ, պիտոյ է խաղան և շարժողութիւն տարածեն գարաւոր ժամանակներով։ Կը գայ այն ժամանակը, երբ նորա անունով կը հաշուեն մի նոր գարձղլուխ իմացականութեան պատմութեան մէջ։ պատճառ, նա է եղած այն գիտնականը որ արել է առաջին փորձը, բովանդակ արարչագործութիւնը ըմբռնելու մտքով որպէս մի օրինապատշաճ ամբողջութիւն, բոլոր յայտնութիւնքը բնութեան մէջ բացատրելու մի դրական հիմքի վերայ։ Եւ այս անչափելի

գործը յաջողվեցաւ նորան. նա միաւորել է պետութեան բոլոր ճիւղերը, քննութեան բոլոր սահմանները, դորանց ապացուցել է որպէս շարակից մասներ որ փոխադարձաբար ձեռնտու են և լրացուցանումն միմեանց: Այն հատուկտոր շինութեան քարերը, որ նա գտել էր թողած մինչև իւր ժամանակը, կարգաւորել ու յարդարել է և յաւելացուցել է դոցա վերայ միւս նորեր: Բայց այս բոլորը մի երկրորդական գործ է, համեմատելով այն անմահ վաստակի հետ, որ նա վաստակել է, դոցանից հրաշակերտելով մի հատ մեծ շինուած, որին և բոլորովին իրաւացի անուն է տուել «Կոսմոս» այսինքն մարդկային հասողութեան տակ ընկած տիեզերական կարգը:

Վոլտոյ ազդերը կ'ունենան դորա մէջ ինչ ինչ թերութիւնք լցուցանելու, ինչ ինչ թուլութիւնք վերացնելու և փոխարինելու, այս և այն իրողութիւնը պիտոյ է նորա մէջ ուղղագործվի, այս և այն ենթադրութիւնը կը փոխվի: Այս մի ճակատագիր է, որին վիճակված է ամենայն ուսումնական գործ որ կառուցած է եղրակացութիւնների ճանապարհով, որ հիմնած է առանձին իրողութիւնների վերայ: Բայց մեծ, ամբողջ, նորա էութեան մէջ չկայ մի ուղղելի բան և չէ կարելի ուղղել ոչ առաջարկութեան և ոչ իրաւորութեան մէջ, քանի որ մարդկային խնացականութիւնը չէ փոխել իւր բնաւորութիւնը: Նորա ընտրած ճանապարհը էր միայն ուղիղը, նորա նպատակը էր միայն պատշաճը:

Այդ նպատակին հասանելու համար հարկաւոր էր Հումբոլդի հաւասարապէս սրատես հայեացքը թէ ամենափոքր, խոշորացուցով միայն տեսանելի առանձին բաների, և թէ մեծ, տիեզերական օրէնքների խորհրդաւորութեան համար. հարկաւոր էր նորա հաւասարապէս անվաստակելի ջանքը թէ բնութեան բոլոր յայտնութիւնքը ժողովելու և թէ ստորակարգելու նորանց ընդհանուր աեսողական կէտերի տակ: Հարկաւոր էր մի կատարեալ մտաւոր ըմբռնողութիւն, մի կշտամնդութիւն իրողութեամբք և նոյնքան ևս ղօրութիւն կատարելապէս դուրս թաւիելու նորանց իւր հոգու միջից: Մասնաւոր բաների վերայ պիտոյ չէր մտանալ ամբողջը, ամբողջի վերայ պիտոյ չէր մոռանալ ամենամասնաւորը:

Ալէքսանդր ֆօն Հումբոլդը ծնած է 1769 թուակ. Սեպտեմբերի 14 ին: Իննսուն տարի, կարելի ասել, այդ մեծ իմաստունը ջննել ու ժողովել է, աշխարհի վերայ ծայրից ծայր շրջել է և քննել է թէ միկրոսկոպեան սահմանը, երկրի երեսի վերայ և թէ ամենախորին հանքափոսերի յատակումը: Այնու ամենայնիւ հազիւ բաւականացել է այս ժամանակը, նորա կեանքի մեծ վաստակը լցուցանելու համար:

Վերջին կռանաղարկը այդ գործի վերայ, էր և նորա վերջին աշխատութիւնը։ Երբ որ ահա կատարվել էր դա, նա հրաժարվեցաւ մեղանից։ Նորա գործը աւարտված էր, նորա կեանքի խնդիրը լրացած էր։ Նա փոխվել է այս աշխարհից, դուրս թէ չիմանալով թէ որպիսի անչափելի առատ օրհնութիւն տարածել է թէ ներկայ և թէ գալոց սերունդների վերայ։ Արդեօք նորա մտածողական՞ն ղօրութիւնը առաւել մեծ էր թէ ընդունակութիւնը։ ընդունակո՞ն ղօրութիւնը աւելի մեծ թէ նորա սրտի դութը որպէս մարդ։ Մենք չգիտենք։ Մենք կարող չենք ասել թէ ինչ բան նորա մէջ աւելի արժանի էր մեր զարմացքին ու մեծարանքին։ Այն աշխարհաքարող առաքեալների նմանատիպ մարդ էր նա, որ իւրեանց մէջ տնկած ձգտողութեան ղօրութեամբ սահմանած ու ստիպուած էին մի նոր կերպարանք տալ կրթութեանը և բարոյական կարգերին, և մարդկային ազգը վեր քարշել մի աստիճան աւելի բարձր։ Արդեօք նորա գործականութեան խորհուրդը էր միայն օգտել մարդկութեանը։ Այո՛։ Նորա հոյակապ ժամանակակից բնախօսի առածը կարող էր լինել և Հումբօլդինը։ «Դու, բնութիւն, իմ աստուածուհիւն ես։ քո պաշտօնին նուիրած են իմ բոլոր ղօրութիւնքը։» Բայց բնութիւնը Հումբօլդի համար, փակուած իւր մէջ և մարդկութիւնը։ դորա համար, և դորան օգտելու համար ապրած ու աշխատած է նա։ դորա յառաջադիմութեան և կատարելութեան համար էր նորա տնկելը և սերմանելը։ դորան էին նուիրած նորա աշխատութիւնքը։ «Ճշմարտութիւնը ինքն իւր համար նպատակ է» ասել է նա միանգամ։ «բայց նա ունի միայն խորհուրդ, պիտանութեամբ դէպ ի մարդկութիւնը։»

Ալէքսանդր ֆօն Հումբօլդը գերմանացի էր։ և գերմանական ազգը կարող է ասել թէ լոկ պատահմամբ վիճակված չէր Հումբօլդը գերմանական ազգին։ Նորա շրջահայեաց իմացական կերպարանագործութեան մէջ, նորա բարոյական բարձրութեան մէջ, նորա սրտի խորութեան մէջ, այն սիրալից հոգու մէջ, որով նա գրկախառնուէր բոլոր մարդկութիւնը, նորա անշահասիրութեան և անվաստակելի աշխատասիրութեան մէջ, նորա աշխարհատարած գործականութեան մէջ պատկերանուէր գերմանական հոգին, գերմանացոց ազգային ընաւորութիւնը իւր ամենաընիւ կերպարանքով, իւր ամենասանձալի ճոխութեամբ։ Այո՛ պարծանք է գերմանացոց անունին, որ Հումբօլդը գերմանացի էր ազգով։ պատճառ, նոքա իրաւունք ունին ասելու։ մի գերմանացի միայն կարող էր լինել Հումբօլդը։ Բայց, ինչքան ևս վերապատուելի և սրբազան բան էր գերմանացոց համար իւրեանց ազգային հարազատութիւնը, ինչքան ևս ղօրաւոր էր նոցա սրտի վկայութիւնը թէ գերմանական ազգը է պահապանը և միայնակ սկզբնաղբիւրը ընդհանուր լու-

սաւորութեան, եթէ առնուէք այս խօսքը իւր ամենաւերին մտքով, ինչքան ևս խորին սրտով խոստովանէին նոքա, թէ սոյն այս կոչումը ազգի կրթութեան ընթացքի մէջ անձնաւորվել է Ալէքսանդր ֆօն Հումբօլդի գէմքով և նորա մէջ գտել է իւր սեփական արտայայտութիւնը. այնու ամենայնիւ պիտոյ է ասել, որ այս սահմանաւորութիւնը անչափ նեղ է Ալէքսանդր ֆօն Հումբօլդի համար, այս շրջանակը մի այդպիսի ակա- նաւոր մարդու համար շատ փոքրապարունակ է։ Ոչ. գերմանական ազգը հատուցանելով իւր արտասուքի հարկը այն պատահարի վերայ, որ և այս անղուգական տղամարդը վերջապէս խոնարհեցաւ ժամանակի հրամանին, այս, ոչ ոքի լայ ի իւրեանից, պատկանեալ իրաւունքը արտասուելու այդ կորուստը յետ է դարձուցանում աշխարհին։ Նա, Ալէքսանդր ֆօն Հումբօլդը երկրագնդի բոլոր ազգերի համար ընկնել, մնացել ու աշխատել է. Թող ամենեքեան դոքա սուգ առնեն նորա վերայ. ամենեքեան դոքա կորուսել են նորան. նա պատուամեծար էակ էր այս բոլոր երկրի։

Այժմ Թոյլ տուեցէք ինձ, պատուական Հրատարակող, մի քանի խօսք ասել Ձեզ Հումբօլդի Թաղման հանդիսի վերայ, որ կատարվեցաւ ամսոյս 10 Թուականին։ Մի մեղմ, գարնանային առաւօտ շատ ձեռնտու էր այն մեռելահանդէսին որ այսօր Բերլինի բոլոր բնակիչքը տօնախմբումն իւրեանց մեծ քաղաքակցի պատուի համար։ Երկինքը վարագուրված էր և ոչ մի կարմրագոյն ճառագայթ արեգակի դուրս չէր արձակվում։ Ննջեցելոյ տան առաջև, առաւօտու 8 ժամուն հաւաքվեցան բազմութիւնք սգաւորներու։ Երբ որ Համալսարանի հասարակութիւնը երկար ու ձիգ հանդիսաւոր շարակարգով, ուսանողքը յառաջ ձգած և նոցա պարագլուխքը արմատնի ճիւղեր ձեռներումը, երևեցաւ էր Օրանիենբուրգեան փողոցումը, ուր պատուհանների միջից դուրս էին կախված բազմաթիւ թխապատ գրօշակներ, այնուհետև կարգաւորվեցաւ անչափելի բազմամարդ ուղարկաւորութիւնը պալատական հանդիսապետի, պարոն ֆօն Սիլչբրիդ Բաթոնիյի հրամանի տակ։ Դուք ստոյած կը լինիք ուղարկաւորութեան յաւյակը։ Համալսարանի աշակերտքը յառաջընթաց էին. մեծ բազմութեամբ ներկայ էին ժողովրդի փոխանորդքը. երկու ազգային խորհրդարանքն ևս յետ էին գրել իւրեանց գործողութիւնքը. երեկ, խորհրդակցութեան միջոցին, տեղիք տալով կոմս Յիսկովսկին և առաջարկելով նախաթոռ անդամ կոմս Շվերինը, ժողովրդի բոլոր պատգամաւորքը վեր կացան իւրեանց տեղերից յայտնելու իւրեանց ցաւակցութիւնը և հնչակաւոր ննջեցելոյն հատուցանելու իւրեանց մեծարանքի հարկը բոլոր Պրուսսիայի անուանով. ուրեմն այսօր լցուցանումէին դէպ ի նա իւրեանց վերջին յար-

գուլեան պարտքը։ Բայց ոչ միայն ազգային խորհրդարանը, համալսարանը, ճեմարանը, ուսումնարանները, բոլոր գործակալքը տէրութեան, վիճուորական և քաղաքական կարդերի գլխաւորքը, ոչ միայն դատարանքը, հոգևորների դասը, քաղաքի մագիստրատը և պատգամաւորքը, այլև Բերլինի արուեստաւորքը ուղարկել էին իւրեանց փոխանորդքը։ Եւ տիրապէս համոզեն Բերլինը։ Բոլոր փողոցներուն, որոնց միջից անցանուսեր ուղարկաւոր բազմութիւնը, օրանիենբուրգեան փողոցը, ֆրիդրիխեան փողոցը, Լինդեն անուն ծառաստանքը մինչև ամրոցը և մայր եկեղեցին, ժողովրդով խիտ լցուած էին պատուհանները, այո և տանիքների լուսամուտքը։ Ցած տների ծածկոցների վերայ կանգնած էն նայեցողք. բայց ի սորանից մի խիտ բազմութիւն ժողովրդի ըստ մեծի մասին հանդիսական հագուստով, լուռ և անխռով հանդարտութեամբ մնալով իւր տեղումը, ձևացնումեր մի շարունակ յանկ սգաւորների, տանից մինչև մայր եկեղեցին։ Սորա դարպասի առաջև կանգնած կառավարող թագաւորը արքայազն աթոռաժառանգի հետ, ընդունեց ուղարկաւորքը։ Դագաղը պարզ և անզարդ, բայց թխագոյն, կաղնի փայտից, արմաւենի ճիւղերով ծածկած, պալատական սպասաւորքը թագաւորի ակնարկութեամբ առան տարան եկեղեցու մէջ և դրեցին սև քօղարկած աշտանակների մէջ տեղում, սեղանի առաջև։ Նորան շրջապատեցին արքայական սենեկապետքը։ Ընծաժողով բազմութիւնը, պալատական հանդիսապետի անդադար շրջանկատ աշխատութեամբ լունեց իւր որոշեալ տեղերը։ Եկեղեցու միջնավայրումը, սեղանի հանդէպ լցուեցաւ կառավարող թագաւորը և առաւել ընտանի սգաւորքը։ Ապա արքայազունքը, տէրութեան գործակալքը, ազգի փոխանորդքը, բարձրապատիւ պաշտօնակալքը կանգնած էին շրջապատելով դագաղը։ Այս հանդիսակատարութեան միջոցին երգուժչին մայր եկեղեցու երաժիշտքը։ Գեներալ Սուպերինթենդենտ Հօֆմանը ասաց յիշատակի քարոզ, ամենևին արժանի իւր մեծ նիւթին։ այս քարոզի միջից կամէի այս բանս առաւելապէս յայտնի կացուցանել, որ այն նուրբ խնդիրը թէ ինչպես էր եղած յաւերժացած Հուսիոլդի յարակցութիւնը դէպ ի գրական քրիստոնէութիւնը, երբէք լռութեան մէջ չթաղվեցաւ, այլ ծանր, նուիրական և ճշմարտութեանը համեմատ կերպով խօսքի տակ ընկաւ։ Խնդրեմ, պատուական Հրատարակող, ասել Ձեր և իմ ազգին, որ Հուսիոլդի պէս մարդը ևս չկարողացաւ դուրս մնալ անաչառ արդարութեան դատաստանի տակից նոյն իսկ դագաղն մօտ. ապա ուր կը մնան Հայոց կէս ու քառորդաչափ, դուզէ և ութերորդաչափ մարգիկը, որոնց վերայ խօսք բանալով Հայոց կրիտիկան, շատ անգամ գայթակղութեան քար է լինում իւր ազգի համար։

Ես պիտ բանը կարող եմ մեկնաբանել ինձ նորանով միայն, որ Հայք ասիական երկարատև բռնակալութեան տակ ստացել են մի այնպիսի ծառայութեան հոգի, մի այնպիսի բթամտութիւն, որ ոչինչ զգալիար չունենալով մարդկային արժանաւորութեան մասին, կարող էին միայն գովել և գովասանել իւրեանց չնչին, շատ անգամ և վատթար մարդիկը որոնցից աւելի լաւերը ոչ տեսած և ոչ լսած էին։ Ասիական ժողովրդի գովածքը, արժանի էին գովասանութեան, միայն թէ թագաւորք էին, իշխանք ու մեծատունք և հարստականք· բայց թէ դոքա ի՛նչ արդիւնք բերել էին մարդկութեանը, ի՛նչ արդար վաստակ վաստակել էին աղգի թէ նիւթական և թէ իմացական բարեբաղդութեան համար, և թէ քանի արժէին դոքա բարոյականութեան տրամաքարի վերայ, եթէ հեռացնէիր դոցա գլխի խաբէական լուսակամարը կամ թէ հանէիր դոցա վերայից իւրեանց պատուհական արտաքին պատուի զարդարանքը — այդ մասին չկայ Ասիացոց մէջ ոչինչ հարցուխնդիր, որովհետև անկրթութեան մէջ կորուսել են ամենայն չափ և կշիռ, որով պիտոյ էր դատել մարդկային արժանաւորութիւնը։ Բայց Հումբօլդի մասին ասեմ Ձեզ աւելի բան· աստուածաբանական ֆակուլտետի դործակալ պրոֆեսսոր Հենդստենբերդը հրաժարվել էր մանակից դտանվել ննջեցելու թաղման հանդիսին։ Հօֆմանի ճառը տարակոյս չկայ, որ տպվելու է· միայն կամիմ Ձեր ուշադրութիւնը դարձուցանել այն տեղի վերայ, ուր խօսք է լինում այն լուռ երկիւղոտութեան մասին, որով Հումբօլդը հեռի էր պահում իւր անձը կրօնական խնդիրներից։ Աղօթքից ու երգից յետոյ կառավարող թագաւորը բարձրացաւ տեղից, աջը տուեց հանդուցեալու աղգականներին, ծանրութեամբ ողջունեց դէպ ի ամենայն կողմ և հեռացաւ արքայազն Ֆրիդրիկոս Վիլհելմոսի և արքայական տան միւս իշխանների հետ։ Նորա քամակից գնացին տէրութեան գործակալքը և բոլոր միւս ժողովը։ Եկեղեցուց դուրս, երեսլուսին ժողովրդի բաղմութիւնը։ Ձէ կարելի այլապէս խօսել, եթէ ոչ, թէ Բերլինը, որ այնքան սիրելի էր եղած յաւերժացածին, իւր պարտականութիւնը բոլոր բարեշէն աշխարհի անունով հատուցանել վերջին մեծարանքը այն մեծ ննջեցելուն, լցուցել է շատ արժանաւոր կերպով, անկեղծ սրտի ցաւակցութեամբ, ճշմարիտ սիրով դէպ ի նորա յիշատակը։

Արդարև աւելի փառաւոր դիաղարդութիւնք եղած են արդէն շատ անգամ և Բերլինի մէջ· շատ դիպուածներում եղել է ցաւակցութիւնը և աւելի ողբական և արտասուալից· բայց շատ սակաւ է պատահել, որ մի նմանապիսի պէսպէսում յայտնված լինի ժողովրդի վանակցութիւնը այդպէս առ ի սրտէ, կամիմ ասել, այդպէս բուռն մարքիչեն, ինչ-

պէս այսօրեան, Հռոմըոլդի Թաղման ժամուն, որին ձեռնտու էր մի շատ պատուական եղանակ։ Ըսես թէ ընութիւնը կամեցած էր ծիծաղդէմ ներս նայել իւր անձնանուէր որդու մինչև մուխ գերեզմանի մէջ եւս։ Չափազանց խօսք չէ, եթէ ասէի ձեզ, թէ ոչ մի քաղաք Եւրոպայի մէջ կարող չէր այնքան յարմարաւոր լինել մի այդպիսի ուղարկաւորութեան, ինչպէս Բերլինը, հանգուցեալու օթեւանից, որ Օրանիենբուրգեան փողոցումն է, Ֆրիդրիկեան փողոցի և Լինդեն ծառաստանի երկայնութեամբ մինչև մայր եկեղեցին։ Ի՛նչ ճոխ և փառաւոր պարագայք ցոյց է տալիս այժմեան 19 դարու աշխարհաշինութիւնը, ղօր օրինակ մայրաքաղաքայի կեցուածքն, գետային հաղորդակցութիւնն, ճարտարութեան և դիտութեան տաճարները, եկեղեցական շինուածք, թագաւորական ապարանքներ — այս բոլորը դրած էր այն վերջին ճանապարհի վերայ, որից պիտոյ է անց կենար մեծ ննջեցեալը· և նորա պարզ դագաղն վերայ — այնպէս պարզ, ինչպէս որ ամիրութեամբ իւր մէջ Բերլինի ամենապարզ քաղաքացու հողեղէն նշխարքը — սիրուեմբ զմայլեցուցիչ դարունը իւր գալար, դուրս բողբոջած տերևների ու ծաղիկների բարութիւնը։ Երանի՛ նորան, որ և մահու մէջ առատապէս վայելումէ այն բանը, որ կենդանութեան միջոցին էր նորա մի հատիկ պարծանքը, նորա ամենավերին ուրախութիւնը։

Ես անց եմ կենում այն պարզ և սրտաշարժ խօսքերի վերայից որ պալատական քարոզիչ Հօֆմանը, հանգուցեալու ճշմարիտ մեծարողներից մինը, դագաղն դեմուդէմ և ժողովի առաջև ասաց, որ պարունակումէր իւր մէջ առաւել երևելի դործակալքը դիտութեան և ճարտարութեան, ղօրապետներ և պաշտօնակալներ։ Ես կամէի միայն մի խնդիր առաջարկել այս տեղ· արդեօք ի՛նչ բան տիրապէս հաւաքել էր այս տեղ այն հարիւր հազարները, մի այդպիսի մարդու և խորազդաց ցաւակցութեամբ ցուցանելու Հռոմըոլդին վերջին մեծարանքը։ Բայց այն աշխարհահռչակ ուսումնականը, առաջին քաղաքացին Բերլինի չէր նա, որին վերաբերվումէր այդ մեծարական պատիւը — դա էր նոյն ինքն մարդը, իւր ժամանակի աշխատակից ու պատերազմակից մարդը, այն արդարամիտ սիրտը և ամենամտածող գլուխը մեր ժամանակի, որին վերաբերվումէր այդ նախապատիւ մեծարանքը։ Ոչինչ բան աւելի հեշտ չէ, քան թէ թուլութիւնք դտանել Հռոմըոլդի դոյութեան մէջ· այդ պակասութիւնքը էին հարկաւոր դարձակողմը գերօրինակ առաքինութեանների, և այդ պատճառով բուն մարդկօրէն։ Աշխարհի պատմագրութիւնը յիշումէ գուցէ թէ միայն երեք մարդկերի անուններ, որոնց մէջ մեր ընութեան տիեզերականութիւնը կատարեալապէս կերպարանք է ստացել· Արիստոտելէս, Լեյբնից և Հումբոլդ։ Արիստոտելէսը ցուցանում

փիլիսոփայական, Էֆլքնիցը պատմական, Հումբօլդը ամենիւ մարդկեղէն բովանդակութիւնը առանձին կերպարանագործական միջոցների, Հնութեան, Միջին դարերի, Նոր ժամանակներիս։ Բոլորեցուն դոցա հասարակաց է այն ոճը որ առանձին իրողութենների շարակարգից եղբակացութիւն է գործում։ այնու ամենայնիւ ի՛նչպես արմատովին տարբեր է կերպարանվում ամեն միտի մէջ իւր սեփական մտահայեցութիւնը աշխարհի վերայ։ Արիստոտելի մէջ լուսաւիայլ մտածողական կեանքը, Էֆլքնիցի մէջ պատմական հասկացողութիւնը, Հումբօլդի մէջ տիեզերքի ըմբռնապատշաճութեան գաղափարը որպէս մաքուր մարդկութեան պատուանդան։ Հումբօլդի մեծութիւնը նորա մէջ չէ, որ նա անչափ շատ տեսակ բաներ գիտէր և իւր բազմագիտութենը ընծայումէր յարգ, որ կարելի էր համարել անձնական ունայնասիրութիւն։ Ոչ։ շատ ու շատ առաւել ըղձալի էր նորա տիեզերական հոգու մէջ այն ընդդեմ հայեացքը թէ մարդկեղէն ընդհանրութիւնը ունի իւր մէջ մի վերին միութիւն։ Արդարև, որովհետև նա գիտէր անպատմելի շատ բան, այդ պատճառով ևս ունէր մի անօրինակ նուրբ ըմբռնողութիւն մարդկեղէն գիտութեան սահմանի մասին։ Թէպետև գիտակից էր նա իւր ահագին գիտնական սեփականութեանը, բայց և այնպէս էր նա ոչ թէ միայն առաւել սիրարժան, այլև առաւել համեստ ուսումնականը, և ոչինչ կարծիք այնքան անհիմն չէ, որպէս այն, իբրև թէ Հումբօլդը անտիառութեան պատճառով սիրած էր ուսումնական հետաքննութիւնք, որոնց ճշմարտութեանը և մեծակշռութեանը չէ հաւատացել ինքն ևս։ Ոչ։ նա արել է այդ հետաքննութիւնքը, որովհետև նորա դատողական իմացութեան ամեն մի յառաջադիմութիւնը, և ամեն մի յայտնագործութիւնը ընութեան սահմանի մէջ նոյնքան ևս ըղձայնութեամբ նորա սրտի վկայութիւնը թէ յայտնութեան և նորա տիեզերական ամբողջութեան միւս կողմումը դրած էր մի բան որին միտքական ճանապարհով միայն կարելի չէր վերահասու լինել, ուր մեզ թէ կատարելապէս բովանդակել նորան։ Ինչքան սխալվելու են նոքա, որ ոչինչ, բայց միայն հաշուարարութիւն, մի միտքառու պալատական մարդու կոկութիւնք կամքին տեսանել այն բանի մէջ, որ նա ցուցել է իւր մանանկցութիւնը ոչ թէ միայն բարոյապէս ընկերական խնդիրներին, այլև մանաւանդ թէ կրօնապաշտականներին։ Որովհետև նա մարդկային ընկերութեան ամենավերին և առաւել արժանաւոր խնդիրը համարումէր, սահմանի տակ չվիակել քննողականութիւնը, թոյլ տալ ներգործել դատողական հետաքննութենանը թէ պատմաբանական և թէ բնապատում գիտութեան մէջ, այս պատճառով ահա մի արդարախոհ գործ էր նորա համար ցուցանել իւր հոգու մանանկցութիւնը և նոցա, որ

զգալի բաների յետքումը որոնումէին մի անզգալի, մի իմանալի բան։ Ճշմարիտ է, որ Հումբօլդը խղճմտութեամբ և արդարապէս պատերազմած է նիւթականութեան անյապաւելի իրաւունքի համար. բայց թող վէր կենայ միևը և ապացուցանէ թէ նա խոստովանած չէ Աստուծոյ գոյութեան ստուգութիւնը բանաւոր պատճառների հիման վերայ։ Կարճատես մարդիկ պիտոյ է թերութիւն համարեն այն ներողական թոյլտուութիւնը գիտութեան մէջ. բայց դորա հակառակ, ճշմարիտ ուրեմն և անշահախնդիր բարեկամը գիտութեան, դորա մէջ խոստովանութիւն ուսումնական հետազօտութեան նպատակն ու խնդիրը։

Այսպէս ահա Հումբօլդը է մի հարազատ մարդկութեան օրինակ, և սորանով իսկապէս այնքան ևս արժանի նմանողութեան, ինչքան որ երկիւղ կայ այժմ, մի՛ գուցէ ներկայ ժամանակիս գիտութիւնը դառնայ միայնապաշտ, չներող և փանատիկոս։ Զուր չէր, որ նորա մանկութիւնը պատահեցաւ այն մտածութիւնների ահագին հեղեղի միջոցին, երբ Քանթի և Փիխթէի հետ միասին գերմանական փիլիսոփայութիւնը, իսկ Գեօթէի և Շիլլերի հետ գեղեցիկ մատենագրութիւնը առաջնորդվելով իդէաներից, ոտք կոխեց ուղիղ ճանապարհի վերայ և հոգևորվեցաւ աւելի վերին գաղափարներով։ Ինչ քաղցր սիրով միշտ և հանապազ վերուղղումեր նա իւր հայեացքը դէպ ի իւր մեծ եղբայր Վիլհելմոսը. և այս սիրու պատճառը էր մանաւանդ այն հոգեպայծառ մեծարանքը դէպ ի իդէայքը, որոնց անձնատուր էր եղել աւագ եղբայրը այնպիսի եռանդով որպէս մի գաղտնաստուրբ պաշտօնի նուիրած սպասաւոր։ Թող այս գաղափարականութիւնը եղած լինի երբեմն մի կնդանի ղգացողութիւն մանաւանդ, քան թէ մի պայծառ տեսութիւն — բայց դա պարծանք է այդ երկու հոյակապ մարդերի նոյնքան ևս սրտին, ինչքան որ խելքին։ Արդարև, դոքա էին հարազատ և արդար Գերմանացիք, որ իւրեանց քրտնաջան աշխատութեան մէջ երբէք բաց չեն թողած ձեռքից բարոյական ղգացողութիւնքը։ Թէև նոցա վաստակները մի մանով պատկանութիւն բաժան բաժան սահմանների, այնու ամենայնիւ նոցա առաջև դրած էր մի և նոյն նպատակը — այսինքն գաղափարը մարդկային աղատութեան և աղատ մարդկութեան, այն գաղափարը որի համար գերմանական աղգը միշտ պարտական է պատրաստ լինել ղոհ բերելու իւր սրտի արիւնը։ Ամն անղարդ դագաղի մեծ, թէև դա շրջապատած էր անթիւ պատուանշաններով, պիտոյ է ամեն մարդու սիրտ վկայէր, որ գերմանական գիտութիւնը կորուսել է իւր մեծ քահանան, և այս պատճառով իսկապէս պիտոյ է կրկնապատիկ և երեքպատիկ պարտականութիւն համարէր իւր վերայ անհատատարիմ չլինել այն մեծ հանգուցեալու հոգուն։ Մանաւանդ որ գիտնական ֆանա-

տիկոսութիւնը սկսել է արդէն ծանանօթել իւր հանդիսները, և երբ որ ահա մի քանիքը սատանայի որդի են համարում նորանց որ ինդրում էին ճշմարտութիւնը մի այլ տեղում, քան թէ Աստուածաշնչի մէջ, միւսերը հերձուածող են համարում նորանց որ չկամէին իդէան փակել և ամփոփել խորշիկների (ցեղլուլաների), և յունական լեզուի արմատների մէջ։ Եթէ միտ դնենք բանի իսկութեանը, ոչինչ գանազանութիւն չկայ, արդեօք մի մարդ անձնատուր էր անհաւատութեան, թէ անհաւատութեան ֆանատիկոսութեանը։ բայց առաւել գարշելի է այն մարդերի ընթացքը, որ Հումբօլդի անունով կարծումեն թէ կարող էին ծածկել իւրեանց բարոյական չքաւորութիւնը և ազատամիտ խեղաթիւրող խաբեբայութիւնը։ Ոչ ոք այնքան փոքր ծառայել չէ մեղէն մարմնին, ինչպէս Հումբօլդը։ երբէք ձանձրացել չէ Հումբօլդը որոնելով ճշմարտութիւնը և ոչինչ, բայց միայն ճշմարտութիւն։ Ա՛յն աշխարհատարած նամակագրութիւնը որ ոչ մի ադամորդի սորա և նորա հետ այնպիսի չափով ունեցած չէ, ինչպէս Հումբօլդը, որի խորհուրդը երբէք եղած չէ իւր յատուկ հոչակաւորութեանը երկրպագութիւն մատուցանել, էր մի իսկական ղոհաբերութիւն գիտութեան օգտին։ և դժուար թէ կարող էր աշխարհը միանգամ տեղեկանալ այն բանին թէ որքան՝ ղրկանք արդարև յանձն է առել դորա համար այս անմոռանալի տղամարդը, թէ ինչ անկշռելի յառաջադիմութիւն հասուցել է նա գերմանական ուսումնականութեանը։ Նորան էր միայն տուած, անհամար մարդերի շնորհ ցուցանել (լաւութիւն առնել) և յառաջ տանելով այս և այն անձը, ծառայել նոյն իսկ գիտութեան օգտին։ քանի՛ մարդիկ և նոյանից, որ անձնաբար մեծ են եղած նորան, այնու ամենայնիւ կարող չէին աւազվիլ այն մոլար կարծիքից որպէս թէ իւրեանց հայեցողութիւնը միայն կարող էր երանութիւն բերել, և թէ պիտոյ էր արհամարհել ամենայն մարդ որ չկամէր կուրօրէն հպատակվիլ նոցա իմացականութեանը։ Հումբօլդը չէր պատկանում ոչ մի մասնաւոր ընկերութեան ոչ կեանքի և ոչ գիտութեան մէջ. և եթէ նա բարեացակամ է գտանվել անչափ շատ մարդերի, մի մարդ ևս չալածել չէ, և ոչ այն պատճառով երբէք, որ այս կամ այն մարդը որոնել է ճշմարտութիւնը մի այլ շաւղի վերայ, քան թէ ինքը։

Ա՛սարտումեմ նամակս, պատուական Հրատարակող, ամենայն սրտից յանկացող լինելով, որ մեր եղբայրակից հայ երիտասարդքը, որ ունէին կարողութիւն նուիրել իւրեանց անձը ուսումնականութեան չհերիքանալով այն մի պատառ ուսմամբ որ ստանում էին Ռուսաց համալսարաններում մէջ, մի փոքրիկ պաշտօն, մի կտոր հայ ձեռք բերելու համար, օրինակ առնուին իւրեանց համար Հումբօլդի առաքինի կեանքը, նորա

անհնարանձ և անհալածասեր հոգին ուսումնականութեան հանդէպ մէջ, նորա անդուլ և անդադար ճշմարտախնդրութիւնը թէ բնութեան և թէ բարոյականութեան մէջ, և մանաւանդ թէ նորա աղնիւ և ականաւոր մարդկութիւնը։

Ա. յսպիսի մաղթանքով մնամ

Աղնուամիտ Հրատարակողիդ

մեծարող Հայրենակից

Մաքսիմոս Սարաֆեանց։

ԳԵՕԹԻ ԵՒ ՇԻԼԼԵՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՂՆԵՐՒ

ԶՈՒԳԱԿԻՑ ԸՐՋԱՆՔԸ ՁԵՑՄԱՐԻ ՄԷՋ։

Ներկայ 1859 տարուս նոյեմբերի 10 ին լրանում էր Հարիւր տարին սկսեալ Շիլլերի ծնունդից որ եղած է 1759 թուակ. նոյեմբերի 10 ին, և Հարիւր տասն տարին սկսեալ Գեօթէի ծնունդից 1749 թուականին։ Այն ազգային տօնակատարութիւնը որ ներկայ տարում բոլոր Գերմանիան և բոլոր Գերմանացիք Եւրոպայի զանազան աշխարհներում պատրաստվում են կատարելու ի պատիւ իւրեանց ականաւոր բանաստեղծին, յառաջացուցել է և Ռուսաստանում գտանված Գերմանացոց մէջ մի գեղեցիկ խորհուրդ հիմնարկելու մի Շիլլերեան ստիպենդիում (թոշակ) որով պիտոյ է պահպանվէր մի ռուսահայ ուսանող գերմանական ազգից Մոսկվայի համալսարանում և ապա ճանապարհորդեր Եւրոպայի մէջ իւր դիտութիւնքը կատարելագործելու համար։ Հաճելաւ դայ նոյնպէս, որ Ռուսաստանի Գերմանացիք կամէին մի ղանգակ շինել տալ Իվան Վելիկիյ զանգակի նմանութեամբ և ուղարկել պարգև Գերմանիային, որպէս մեծարանք դէպ ի յիշատակը Շիլլերի որ բանաստեղծել է նոյնպէս մի հրաշալի գրուած Զանգակ անունով· որ գուցէ մի օր մեր ընթերցողքը կարդան Հայկական թարգմանութեամբ [1]։

---

[1] Ինչպէս երևում է Ս. Պետերբուրգեան լրագրից, Մոսկվայի հոգաբարձու ընկերութիւնը Շիլլերեան հարիւրամեայ յոբելեանի մասին, դաղափարը վերոյիշեալ զանգակի որ ձուլել է տալիս Շիլլերի հայրենական քաղաքի, Մարբախի համար, արդէն ուղարկել է այն տեղ ընծայաբերութեան յիշատակարանի հետ միասին։ Ընծայաբերութեան յիշատակարանը տպած է բրիտաօլեան թղթի վերայ, ևս գունով, պարզ բայց արժանաւոր կերպով և այսպիսի բովանդակութեամբ.

Գեօղմէի և Շիլլերի արձանները միասնարար կառուցած են Վէյմար քաղաքի մէջ, որ և բացվեցան 1857 թուակ. Սեպտ. 4 ին։ Գեօղմէն լռնած ուսի ձեռքումը մի դարնեայ պսակ սորա մէջ կցել է ձեռքը Շիլլերը, որի ուսի վերայ դրել է Գեօղմէն միւս ձեռքը։ Մի այլ ժամանակի թողունք այս երկու հոյակապ մարդերի վարքագրութիւնը. այժմ դարձուցանենք մեր ուշադրութիւնը այդ նազելի բարեկամութեան պսակի վերայ որ ղուգաւորել է միմեանց հետ երկու ամենամեծ գերմանացի քանաստեղծները, որ ինչպէս միասին կանգնած են յիշատակարձանի մէջ, նոյնպէս միասին կանգնած են նաև իւրեանց կեանքի ու ներգոր-

---

«Հասցէ Մարբախ քաղաքի հոգևոր և մարմնաւոր առաջնորդներին։ Բարեր արժանապատիւ, վերապատուելի պարոններ։ Եթէ Գերմանացին հեռանում դեպ ի հեռաւոր աշխարհ, նա, հին Հելլադայի զաղթականների պէս, վեր է կալնում իւր հայրենական կրակարանից հայրենի կրթութեան և աշխարհաշինութեան կրակը իւր հետ, և իրրև իւր ամենամեռնագին ստացուածը ժառանգութեամբ թողում նորան իւր զաւակներին և թոռներին, հոգացողութեամբ անուշանալու և պահպանելու։ Այսպէս, Գերմանացին, ուր և չկնար նա իւր օթևանը, կատարում և տարածում իւր ազգի ականաւոր մարդերի նուիրական յիշատակը, որ իրրև Դիոսկուրք (երկու լուսաւոր եղբայրակից աստղեր) փայլում նորա համար և օտարութեան երկնակամարի վերայ։ Հարիւր տարի անցել է աշխարհի վերայով սկսեալ այն օրից, երբ այս երկու լուսատուներից ամենափայլուն աստղը ծագել է Գերմանիայի վերայ, այսինքն, առաւել ազգայինը մեր բանաստեղծներից, Փրիդրիխոս Շիլլերը, տաղերգուներով ճոխ Շվաբիայի մէջ ծնել է։ Այն յոբելեանը, որի առնախմբութեամբ այս տարու Նոյեմբերի 10 ին թնդում են գերմանիայի քաղաքները և գիւղերը, ձայնարկում և հին Ցարերի աթոռանիստ Մոսկվայի գերմանական լինակիչների սրտումը։ Իւրեանց ցեղական աշխարհին մի սիրուն առհաւատեայ մատուցանելու համար, նորա միաբան հոգով որոշել են, այն զանգակը, որ երգել է բանաստեղծը և կնքել է Կոնկորդիա (միաբանութիւն) անունով, հնութեան կերպարանքով ձևացնել և այս նշանով իւրեանց վճարանքի ղարդարել այն քաղաքի եկեղեցին, որի մէջ գտանվում Շիլլերի օրորոցը։ Այդ զանգակը դեռ ևս պատրաստ չլինելով ձուլածութեան ձէջ, կարող չէ դեռ ևս լրուցանել իւր սկզբնական խորհուրդը, որ էր այս ընդհանուր ազգային ուսանախմբութիւնը հնչեցնելով հրատարակել։ Թէև դա տեղ կը հասանի յետոյ, երբ որ արդէն վերջացել էր ուսանախմբութեան հնչղղութիւնը, այնու ամենայնիւ խընդրում ենք ձեզանից, վերապատուելի պարոններ, այս առիթը մեր սիրուն ընդունել քաղցրութեամբ, քանզի այժմ ուղարկում ենք ձեզ նորա պատկերը, որ նորան որպէս մի ուխտադրութեան ցուցակ հեռաւոր առհմակիցների կողմից կախ տայիք այն տաճարի ձէջ, որ պիտոյ է զարդարել նա։ Այնուհետև լծո՛ղ նա հայրենի օրհնեալ դաշտերի վերայ բացարձակ հնչելով քարոզէ, թէ Մարբախի ամենազնիւ որդու, Գերմանիայի ամենազնիւ տաղերդուի համար չկայ սիրով զարկումն բոլոր սիրտերը և ցուրտ օտարութեան ձէջ. թող այդ զանգակը ձայն տալով յիշեցնէ, թէ ինչ էր Հայրենիքի կարիքը — թող տեւէ միշտ ազազայումը, շատ մարդերի ականջներում ծնդալով։ Թո՛ղ նա սրտմաձնների հետ ողբայ և ձայնակից լինի ջերմեռանդ պարերգութեանը։ Դեպ ի միաբանութիւն, դեպ ի սրտակից միաւորութիւն թող ժողովէ նա աստուածասէր և ընկերասէր հասարակութիւնը։

Մեր քաղցր երկրացիներին Շիլլերի հայրենիքումը առ ի սրտէ ողջոյն և շնորհաւորութիւն։»

ծականութեան ասպարէզի մէջ։ Եւ այսպէս միայն, ձեռք ձեռքի տուած, սիրտ սրտի հետ կապած կարողացել են դոքա վաստակել այն չնաշխարհիկ վաստակը գերմանական ազգի համար, որ միշտ մեծարելի պիտի մնայ մարդկութեան մէջ, որքան ժամանակ մարդիկ ղգալու և մտածելու էին որպէս վայել է մարդուս։ Ահա, սիրելի հայազն պատանիք, դրած է ձեր աչքի առաջև մի կենդանի օրինակ, մի յայտնաբարբառ խրատ, թէ ի՛նչ ճանապարհով կարող էր մի ազգ հասանել իմացական և բարոյական մեծութեան, անխարդախ այրական բարեկամութեամբ ազգի ականաւոր մարդերի մէջ, մեծարական յարգութեամբ դէպ ի միմեանց արժանաւորութիւնը, վեհանձնութեամբ տալով և ստանալով միմեանցից և այդպէս միտը միւսով աւելի բարձր կրթելով իւր անձը, միտը միւսի թերութիւնը լցուցանելով աղնիւ փոխանակութեամբ, աննախանձաբար բաժանելով իւրեանց մէջ իմացական և բարոյական կատարելութեան արծաթապլուխը։ Գեօթէն երբէք լինելու չէր Գեօթէ առանց Շիլլերի, և ոչ Շիլլերը Շիլլեր առանց Գեօթէի։

Այս ի սրտէ բարեկամութիւնը Գեօթէի և Շիլլերի մէջ իւր տևողականութեամբ տալիս է մեզ մի այնպիսի հոյակապ վկայութիւն երկուքի համար, որ կարօտ չէ ոչինչ գովասանական ճառի։ Այդ բարեկամութիւնը այնքան հաւաստի է, որքան անօրինակ է Եւրոպական ազգերի դպրութեան մէջ։

Գեօթէն հնձումբը արդէն իւր փառքի գալնիքը, երբ որ Շիլլերը սկսել էր միայն սերմանել իւրքը գերմանական ժողովրդի մէջ։ Այնքան ևս արժանի է մեծարանքի որ նա, այսինքն Գեօթէն, ոչ թէ չկամեցաւ հակառակ դուրս գալ աւելի մանուկ, հոգևից երիտասարդ Շիլլերին, տեղ տալով նորան իւր կողքումը, այլ մանաւանդ թէ բարեկամական մտերմութեամբ յառաջադիմութիւն տուեց նորան, որպէս և ինքն գարձեալ յառաջադիմութիւն ստանալով նորանից, ընթացակից եղաւ նորան, առաւել վերին նպատակների հասանելու համար։ Այսպէս, Շիլլերը արդէն 1787 թուակ. կարող էր գրել իւր բարեկամ Մօղերին այս խօսքերս. «Էյմարեան դքսուհու, Ամալիայի հետ (դու ևս ի հարկէ ճանաչումես սորան, այս շնորհալարդ տիկինը և այն մի ժամանակ կառավարող թագուհին) ես ստացայ համարձակութիւն խօսակից լինել, և կարող ես դու գուշակել թէ ով էր այն անձը որ ինձ ճանապարհ բացեց մտնենալու դքսուհի Ամալիային — այդ անձը Գեօթէն էր։ Դու պիտոյ է հիացած շարժես գլուխդ, և ես արդարացնումբ քո զարմացքը։ պատճառ, դա ինձ ուսուցանումբ թէ պիտոյ չէր միւսանդամ կշռել մարդիկ շտապով. և կանխակալ դատողութիւններէի հիման վերայ։ Գեօթէն արդարև մի բարի մարդ է, թէև մի քանի բան

կարելի էր ասել նորա ընդդէմ, բայց այդ բղխում չէ ուղղակի նորա սրտից իսկապէս։

Ընդ կացան մի քանի տարիք, մինչև փոխադարձ մաստուն ձգտողութեան դէպ ի անեղծական վաստակներ, անեղծական գարձաւ և այն երկու կարող հոգիների բարեկամութիւնը։ 1798 ին, անկեղծօրէն գրուեր Շիլլերը Գեօթէին այսպէս։ Ցայտնապէս զգուեմ ես, որ ինքս իմ կարողութեան սահմանից դուրս յառաջ եմ գնացել, և այս բանը է մեր հաղորդակցութեան պատուղը։ պատճառ, այդ յաճախ և տևողական մօտակցութիւնը մի այդպիսի առարկայաբար ինձ հանդիպակաց բնաւորութեան հետ, իմ առ ի սրտէ ձգտողութիւնը և մեր միաբան չանադրութիւնը քննել և մտածել դորան, կարող էր միայն ընդունակ կացուցանել ինձ իմ անձնական տեսութեան սահմանքը լայնելու և ընդարձակելու։ Ես գտանումեմ, որ իմ հոգու այժմեան պայծառութիւնը և զգաստամտութիւնը, որ աւելի յետին ժամանակների պտուղ է, ոչինչ կորուսել չէ իւր առաջին ժամանակի ջերմութենից։

Գեօթէն, ինչպէս որ նորա բնաւորութիւնը և սեփական դարձած անձնաւորութիւնը էր, ցոյց չէ տուել իսկոյն մի արագ մօտաւորութիւն դէպ ի Շիլլերը։ բայց առ փոքր փոքր ցոյց է տուել նա իւր անձը աւելի բարեացակամ։ Թող ինքը Գեօթէն խօսէ այս տեղ իւր առաջին կոշտ սառնութեան միջոցից։ Նա ասումէ այսպէս։ «յետ իմ վերադարձիս Իտալիայից (1788ին) ուր ես աշխատել էի կրթելով իմ անձը ստանալ աւելի ճիշդ և սահմանաւոր դատողութիւն ճարտարութեան գործերի մասին, Գերմանիայի մէջ գտայ ես նոր և հին բանաստեղծական գրուածներ մեծ փառքի մէջ և շատ տարածված, բայց ցաւելի է ասել, այնպիսի գրուածներ, որ շատ ղղուելի էին ինձ, զոր օրինակ էէյնղէի «Արթինգհելն» և Շիլլերի «Ա-ալպինեը»։ Առաջինը տելի էր ինձ, որովհետև էէյնղէն յանձն էր առել զգայական հնչուածքով և պղտոր մտածողութիւնք այնուացնել և զարդարել կերպարանող ճարտարութեան արուեստովը, իսկ յետինս ունելով մի զօրաւոր, բայց դեռ ևս խակ և անմշակ քանքար, մի առատ և օրընթաց հոսանքով թափել էր Գերմանիայի վերայ իսկապէս այն բարոյական և թատրոնական պարագաքսերը (նորահնար, անկարծելի մտածութիւնք) որոնցից աշխատել էի ես յատակել իմ անձը։ Այդ երկու քանքարաւոր մարդիկը չեմ գատապարտում ես այն գործի համար, ինչ որ յանձն էին առել և լցուցել էին։ պատճառ, մարդս կարող չէ հրաժարվիլ կամենալուց մի բան յառաջացնել ըստ իւր հասկացողութեան։ բայց այն շատախօս ղղոյցը որ դորանով բարձրացած էր, այն հաւանութիւնը որ ցոյց էին տուած այդ օտարամիտ ծնունդներին թէ վայրենարարոյ ստուե-

դենտք և թէ կրթած պալատական տիկնայք· այդ բանը զարհուրեցրեց ինձ· պատճառ ես կարծումէի տեսանել իմ բոլոր ջանքը զուր և կորած· այն առարկայքը, որոնց համար կրթել էի իմ անձը, այն կերպը և եղանակը, որով պարապել էի դոցա, երևումէին ինձ հալածուած ու զօսացած: Ես աշխատումէի բաղդացնել ամենամաքուր հայեցողութիւնքը կեանքի վերայ և մանաւորել դորանց միւսերին, բայց այժմ գտայ իմ անձը ներս խրված այն կեղտոտ Արդինդհնլօյի և Փրանց Մօրի մէջ: Ես ֆոխլ-ծէլ Շիլլերից որ բնակելով վէմարուսը, դրացի էր ինձ: Դօն Կարլոս դրուածի յայտնութիւնը չեղաւ այն կամուրջը որ կարող էր ինձ ճանապարհ տալ դէպ ի Շիլլերը: Բոլոր փորձերը որ թէ իմ և թէ նորա բարեկամքը արեցին, մեզ մօտեցնելու միմեանց, մերժեցի ես:»

Նայց ինչպէս շուտով, սոյն իսկ սկզբնական նկատողութեան թելը պահելով ձեռքին, սկսաւ ապա գեօթէն առ փոքր փոքր փոխանակելով իւր մտքերը Շիլլերի հետ, այլապէս գատել սորա վերայ գալոց տարիներուն: «Իմ յարակցութիւնը Շիլլերի հետ — ասումէ գեօթէն — էր մի անօրինակ բան, որովհետև մէք գտանք մի ամենագեղեցիկ զուգաւորութեան հնար մեր հասարակաց ձգտողութիւնների մէջ, և հարկաւոր չէր մեր համար ոչինչ, բարեկամութիւն ասած մի առանձին բան: Իմ ծանօթանալս Շիլլերի հետ եղաւ մի ամենևին հրաշալի կերպով· մէք կարող էինք աւելի յառաջ կամ յետոյ մօտենալ միմեանց, բայց որ այդ բանը պատահից դէպ ուղղիղ այն միջոցին, երբ որ ես իմ իտալական ճանապարհորդութիւնը կատարել էի, և Շիլլերը սկսանուէմէր վաստակիլ իւր փիլիսոփայական մտահայեցուածներից· որ Շիլլերը այնքան ես մանուկ էր և գտանվումէր մի շատ ղուարթ ձգտողութեան մէջ, երբ ահա ես սկսած էի ձանձրանալ աշխարհիյ — այդ իրողութիւնը ահա շատ խորհրդաւոր եղաւ և մեր երկուքի համար անչափ շատ պտղաբեր, բայց իմ համար անկշռելի շահաւէտ:» — «Որքան ես տարբեր էին մեր երկուքի բնաւորութիւնքը, պնու ամենայնիւ մեր հայեացքը զարձուցած էին մի բանի վերայ, որ և մեր յարակցութեանը տուեց այնպիսի մօտ սրտակցութիւն, որ տիրապէս ոչ մինը մեզանից կարող չէր ապրել առանց միւսին:» — «Շիլլերը մի ղարմանալի մեծ մարդ էր· ամեն ուղիղ մարդ, աւելի կատարեալ մարդ· ամեն անգամ, երբ վերստին տեսանումէի նորան, երևումէր ինձ աւելի կարգացած, աւելի յառաջադէմ գարձած ուսումնականութեան ու գաղտողութեան մէջ: Նորա նամակները են ամենագեղեցիկ յիշատակը, որ ունիմ ես նորանից, և դոքա պատկանումեն միասին այն ամենընտիր գրուածներին որ բղխել են նորա հոգուց: Նորա վերջին նամակը պահումեմ ես իբրև մի սրբութիւն իմ դանձերի մէջ:» — «Շիլլերը միշտ

բացարձակ տէր և իշխան է իւր վսեմ ընաւորութեան վերայ. ոչ մի բան արգելք չէ նորան, ոչ մի բան չէ սահմանափակում նորան, ոչ մի բան դէպ ի ցած չէ քարշում նորա մտածութիւնները: Ի՛նչ մեծ և հոյակապ տեսողութիւնք կենդանի են նորա մէջ, միշտ դուրս են ըղխում նորանից, առանց յետ ու յառաջ նայելու: Սա մի ստոյգ մարդ էր, և այսպէս արժան է լինել ամենեցուն: » — Արդարև, այդպէս ևս արժան է լինել ամենեցուն: — Մեք այս փոքրիկ ճառի մէջ ակնարկեցինք դէպ ի այն կողմ, որ գերմանացիք իւրեանց Գեօթէի և Շիլլերի մէջ ունին ոչ թէ միայն վսեմ բանաստեղծներ, այլև ականաւոր մարդիկ, որ ճըշմարտապէս զուգաւորված են միմեանց հետ, և ի՛նչ հոգեպայծառ ուրախութեամբ պիտոյ է գերմանական ազգին խոստովանել այս բանը, տեսանելով որ ճարտարապետ Րիչելը և յիշատակարձանի մէջ անբաժանելի միմեանցից պատկերացուցել է նորանց գալոց ազգերի համար: Այդ բարեբանված գերմանացի մարդերի հոգին առաւել պայծառ պատկերացնելու համար, թող այս տեղ յառաջ բերենք նոցա խօսքերից մի քանիքը, որ նոցա գրուածների մէջ տպած չկան: Այս խօսքերը թէև սակաւատող, բայց նոցանից դուրս է փայլում մի ընդարձակ հոգու լիութիւն:

Իէալիստը [1]) կարող չէ ամենևին արդար հատուցումն առնել Իդէալիստին [2]), որովհետև նա երբէք կարող չէ հասկանալ սորան: Շիլլեր:

Իմ գրուածների ներքին ընաւորութեան վերայ կարող չէ բաղմութեան դատողութիւնը, ինչպէս յոյս ունիմ, ոչինչ ազդեցութիւն գործել: Շիլլեր.

Խարոյականութիւնը պայմանաւորում ամենապարզ օրպիսութիւնք, և միշտ հայեցնում դէպ ի պարզութիւն. այդ պատճառով վտանգի մէջ է նա այնպիսի դրութեններում որ խառնաշփոթվում և իւրեանց պաշտպանութեան համար կարօտ են երկմիտ բաների և արտաքին երևութի: Շիլլեր:

Ոսկի գարը գտանվում այն տեղ, ուր մարդիկ կարող չէին դուրս գալ իւրեանց տղայութեան միջից: Շիլլեր:

Քրիստոնէութիւնը բարձրացուցել է գոյութեան հոգեղինութիւնը, և գրոշմել է մարդկութեան վերայ մի նոր կնիք, բանալով հոգուն աւելի վերին յոյսերի աշխարհ: Շիլլեր:

---

[1]) Այն փիլիսոփայքը որ վերացական դատողութիւնը համարում ստոյգ էակներ:

[2]) Իդէալիստը ասվում նորա որ բոլոր բաների էութիւնը մարդուց դուրս, համարում տարակուսական և անապացուցանելի, կամ թէ ամենևին անհնար, և այդպէս ընդհայում ստուգութիւն այն գաղափարներին որ ունէր մարդս բաների մասին, բայց ոչ սոյն այս բաներին. այս ուսումը ասվում Իդէալիսմ:

Ա՛յ վեմ՝ ղգացողութիւն տալիս է մեր կեանքին մեծութիւն, և ոչ թէ այդ մեծութիւնը որոնուած նորա մէջ։ Շիլլեր։

Ընութիւնը է պատմաբանութեան հիմնայատակը. ով որ կարող էր ամենայն տեղ հասկանալ նորան, նա ստանալու էր աւելի լուսաւորութիւն, քան թէ կարող է տալ մարդկութեան պատմագրութիւնը։ Բայց ընութիւնը տալիս է մեզ այնքան յայտնութիւն միայն, որով կարելի է գուշակել, թէ նա աստուածեղէնի մէջ ամփոփուած առաւել աստուածեղէնը մի աւելի հոգեղէն աշխարհի համար։ Գեօթէ։

Ա՛րտարութեան գործերի մէջ կայ շատ աւանդութիւն, բայց ընութեան գործերը են Աստուծոյ թարմ ու ղուարթ խօսուածքը։ Գեօթէ։

Ա՛յն անընդունակ մարդ է նա, որի վերայ ընութեան միշտ ջենաւոր օրէնքը թէ փոքրիկ և թէ մեծ բաների մէջ հիացք չեն բերում, և նորա հոգին չեն զարթեցնում դէպ ի հետաքննութիւն և վերահասութիւն նոցա ներքին պատճառներին։ Բայց ճշմարիտ իմաստունը և ճշմարիտ մարդը վերջացնում իւր հետաքննութիւնը չզարմանալով։ Պատճառ, սոյն իսկ ամենավսեմ, այլև անեղծաբար արարչագործողը անհասանելի է որ և իցէ խօսքի համար։ Մեք վերջումը ղգումենք դորան երկիւղածութեամբ և լուռ ահուդողութեամբ սրտի։ Գեօթէ։

Ա՛ռաջին բանը որ մեղ մնա է քարշում դէպ ի մի մարդ, է նորա արտաքին անձնաւորութիւնը և ներքին բնաւորութիւնը, ինչքան որ դա ընդհանրապէս դրոշմած էր մարմնի կերպարանքի վերայ։ բայց իսկական ներքինը ճանաչումենք յետոյ միայն, կամ թէ երբէք ոչ։ Մարդուս ներքինը ոչ մի ժամանակ դուրս չէ երևում ամբողջապէս. դա երևումէ միշտ որպէս մի լոկ մասնական յայտնութիւն մի աստուծոյ, որ ինքը երբէք տեսանելի չէ լինում, որ և ծանօթ է կացուցանում իւր անձը, երբ որ գտանումէ դորա համար յարմարաւոր միջոց։ Այս պատճառով մարդիկը դժուար լուծանելի խնդիրը են, և այնքան առաւել, որքան ճոխ էին նոցա բնական ձիրքը, և որքան բազմօրինակ ներդործել էր կեանքը նոցա կերպարանագործութեան համար։ — Եթէ մարդիկ ցանկանումն հիմնաւորապէս ծանօթանալ միմեանց, այդ լսանը յառաջուց պահանջումէ մի կշռաւոր պատճառ, որպիսի կարող է միայն պատահել այն մարդերի մէջ, որ միմեանցից ունին կամ օգտի, կամ վնասի ակնկալութիւն։ Ինչ լսան որ ոչ երկիւղալի է և ոչ սիրելի, անկշիռ է մեր համար։ — Ասած են, թէ մի մարդու սիրտ ճանաչելու համար, պիտոյ էր սիրել նորան։ Այո՛, ուղիղ է այդ խօսքը, եթէ կաւ ենք ծանօթանալ մի մարդու պատուական յատկութիւններին. բայց

ինչ որ վերաբերվում է բնաւորութեան թերութեններին կամ անուղղութիւնք ասած բանին, դորանց ճանաչելու համար, արդեօք է սէրը ուրեմն այս կողմից մի մարդ ճանաչելու համար, պարտ է մանաւանդ, ամենևին սառն սրտով նայել նորա վերայ։ Բայց սէրը մի արարչագործ տրամադրութիւն է սրտի, որ ոչ թէ միայն ստեղծում մի կատարեալ էակ, այլև կարողութիւն ունի այդ էակը վերստին նորոգել, եթէ դորան ապականել է և տգեղայուցել մի յամբասանք։ Գեօթէ։

Կրթութիւնը շեղվում դէպ ի վտանգաւոր արտուղութիւնք (ճանապարհից դուրս գնացք)։ Մարդիկ սիրումն տարապայմանը. ճշմարիտը բաւական չէ նոցա, և ուր որ դա արդարացի մէջ էր մնանում, անախորժ է, որովհետև պատժում։ Ներկայ րոպէս կամի ինքը իւր միջից դուրս վազել, ոտքը դուրս պարկելով բարոյականութեամբ կապված իսկութեան սահմանից, և շատերը արդարև պատճառ ունին նեղանալու իւրեանց մէջ և իւրեանց ներկայ դրութեան մէջ, որովհետև ճշմարտութիւնը տհաճեցուցիչ էր նոցա։ Գեօթէ։

Ա՛սեմականը օթևան է պատրաստում իւր համար աղնիւ բանի մօտ· ուր պատուելի չէ աղնիւ բանը, այն տեղ կարող չէ նա տևողական լինել· պատճառ, այդ անպատուութիւնը դէպ ի աղնիւ բանը, պիտոյ է միայն օթևան տալ իւր մօտ անարգ և վատթար բանին։ Գեօթէ։

Ո՛արդուս Հոգու մոռացվիլը և լուսաւորվիլը կացուցանումն նորա ճակատագիրը։ Հարկաւոր էր, որ մի Հոգաբարձու հրեշտակ միշտ առաջնորդեր մեզ որպես տկար մանուկների, որ միշտ ասէր մեզ թէ ինչ պիտոյ էր առնել և ինչ պիտոյ էր թողուլ, և միշտ ղրդեր մեզ դէպ ի մեր պարտավճարութիւնը։ Այդ Հոգաբարձու հրեշտակը մեք ինքներս կարող ենք լինել մեր համար· պիտոյ է միայն, որ մեք չթուլանայինք, ղգուշանայինք այն բանից, ուր չկայ լոյս, ուր մեք խաւարի մէջ պաշարված, պղտոր մտայածութեան մէջ խարխափումնք (մեծի մէջ այս ու այն բանը շօշափելով շրջումնք)։

Ս. Նալբեանց։

ՏՆԿԱԲԱՆԱԿԱՆՔ

ԴԱՀՎԷՒ ԾԱՌԸ.

Դահվէի ծառը լաղմաճիւղ, բրգաձև ծայրով, սովորաբար հասնում 15 ից մինչև 20 ոտնաչափ բարձրութեան, և ծառի բունը 4 մինչև 8 ճկութաչափ հաստութեան։ Այդ ծառը իւր միշտականաչ, փայլուն տերևներով որ նման են դաքնի ծառի տերևներին, ձիւնի պես սպիտակ, խնկահոտ ծաղիկներով որ տերևների անկիւններից, կարճ

կարճ կոթերի վերայ դուրս լողլողելով նման են յասմինի ծաղիկներին, և մյգ մանուշակագոյն պտուղներով որ աւելի երկայնաձև էին քան թէ բոլորակ, յուշանումէ մի շատ ախորժելի տեսարան, մանաւանդ որ դորա վերայ ուրէմն ամիս տևողապես գտանվումեն ծաղիկներ, խակ, կիսահաս և հասուն պտուղներ, պէսպէս գունաւորված, մինը միւսի մօտ։ Այն պտուղները որ հասուցանումեն առուտուրքի մէջ սովորական ղահվէն, բաղկանումեն մաղասային զզուահամ մնանիւթից և երկու կիսաձուաձև հատիկներից, որ իւրեանց ակօսաւոր կողմերով դրած են միմեանց մօտ։ Նորա շրջապատած են մի առանձին, մագաղաթի պէս սերմնածածկոյից, որ յաճախ տեսանելի է և առուտուրքի մէջ ներս ըերած ղահվէի վերայ։ Մանիւթից և սերմնածածկոցից աղատված սերմնահատիկները ասվումեն սովորաբար ղահվէի լուբիայք, թէպէտ անպատշաճաբար ամենևին։ Ցնկաբանաբար քննելով այս ծառը, պատկանումէ դա Ցինխօնայի ազգատոհմին(խինայի ծառի տեսակներին)։ Ղահվէծառի սկզբնական հայրենիքը է Հաբեշստանի լեռնադաշտակը, ուստի տեղափոխված է դէպ ի Արաբիա։ Այս տեղ աճումէ նա Եմենի դաւառումը, մանաւանդ թէ Մոկկա քաղաքի մօտակայքում, այնպիսի պատուականութեամբ, որ սովորաբար Արաբիան ասվումէ ղահվէի իսկական հայրենիքը։ Այս տեղից փոխադրած է դէպ ի արևելեան Հնդկաստան, դէպ ի Եավա, դէպ ի մի քանի կղզիքը Աֆրիկայի և մանաւանդ թէ դէպ ի արևմտեան Հնդկաստան։ Եւ Հարաւային Եւրոպայի մէջ փորձել են տնկարկել ղահվէի ծառը, բայց բոլոր փորձերը եղած են մինչև այժմ անյաջող։ Միայն Սպանիայի կադիքս քաղաքի մօտ ունեցել է այդ տնկարկութիւնը մի փոքր պողպերութիւն։ Ղահվէի ծառը կարօտ է ընդհանրապէս մի քարուտ սարայատակի և բաւականաչափ անձրևի։ Արաբիայում Թողումեն ծառերին աճելով չափ և հասակ առնուլ բոլորովին, և հետ պչետե կտրատումեն յածի ճիւղերը, բայց արևմտեան Հնդկաստանում և այլ տեղերում չեն Թողում նորա 4 մինչև 6 ճկութաչափից աւելի բարձրանալ, որ այդպէս աւելի յարմար լիներ ժողովել պտուղքը։ Որովհետև ղահվէի ծառը միշտ ծաղկումէ, և միշտ գտանվումեն նորա վերայ հասուն և խակ պտուղներ, այդ պատճառով, տարին երեք անգամ լինումէ ղահվէի կութք (ժողովումն)։ Առաջինը գարնան միջոցին, է ամենառատը։ քաղած կամ թէ յած թափ տուած պտուղները ամիսներումեն պարկերի մէջ, ապա պրտուեայ փսխաթների կամ թէ քարեղէն տափարակների վերայ չորացնվումեն արևումը, կամ թէ ցամաք սենեակների մէջ, որով վերայի մանիւթը այնպէս կոշտանումէ, որ դորան իւր Թաղանթային սերմնածածկոյն հետ միասին հեշտ կարելի է լսայ տրորել, գլորելով պտուղների վերայ

փայտեայ կամ քարեայ գլանակներ։ Սորանից յետոյ, մի քանի ժամանակ ևս ղգուշութեամբ չորացնումեն սերմնահատիկները ստուերի տակ, խարբալով ստակումեն նորանց կեղևի կտորներից և ցանցառ պարկերի մէջ դրած պահումեն օդաւոր տեղերում։ — Առաւել շատ ղահվէ հասուցանումէ այժմ եւրոպական առուտուրքին արևմտեան Հնդկաստանը, ապա Հարաւային Ամերիկան, յետոյ Եավա կղզին, առաւել փոքր Արաբիան։ Ղահվէի հատիկների պատուականութիւնը կախ է ոչ այնքան այդ տունկի սպասաւորութենից և նորա պտուղների պատրաստութենից, ինչքան կլիմայից և հողից։ Այս պատճառով վաճառականութեան մէջ որոշվումեն ղահվէի տեսակները, միտ դնելով աշխարհին, ուստի եկած են, և դատումեն նոցա արժանաւորութիւնը, ուշադիր լինելով հատիկների մեծութեանը, գունին, հոտին և համին։ Առաւել ընտիր տեսակները, կարգաւորած, միտ դնելով նոցա պատուականութեանը, սոքա են.

1։ Մոկկայի ղահվէ. սա բաղկանումէ մեծ մեծ բոլորակային հատիկներից մոյգ դեղին գունով, որ բովելուց յետոյ ունին մի պատուական, ղօրեղ, ախորժելի հոտ և սաստիկ համ։ Սա բուսանումէ Եմենի (երջանիկ Արաբիայի) սարերի մէջ և ըստ մեծի մասին գործ է ածվում աշխարհի մէջ մեծատուններին վայելքի համար, այնպես որ շատ փոքր մտանումէր եւրոպական առուտուրքի մէջ։

2։ Լէվանդեան (փոքր Ասիայի) ղահվէ. սա ունի փոքրիկ բոլորակային հատիկներ գունատ կամ թէ կանաչային դեղին գունով. նոցա համը և հոտը նոյնպէս պատուական են։

3։ Իոբբանեան ղահվէ. սա ունի միջակ մեծութեամբ, երկայնաձև, մի ծայրումը փոքր ինչ սրացած հատիկներ գունատ դեղին գունով և բովելուց յառաջ չունի ոչինչ հոտ։

4։ Եավայի ղահվէ, որ գալիս է արևելեան Հնդկաստանից, ունի շատ մեծ երկայնաձև հատիկներ դեղին կամ թէ գունատ գունով։

5։ Մոբինայի ղահվէ, որ գալիս է արևմտեան Հնդկաստանից, բաղկանումէ մեծ մեծ բոլորակ, մոյգ կանաչային հատիկներից, որ գեռ ևս մի մասնով շրջապատած են իւրեանց սերմնածածկոցով և նշանաւոր են իւրեանց սաստիկ, առանձնական հոտով, բայց ունին մաքուր և լաւ համ։

6։ Մ. Դոմինիկոյի ղահվէ, որ առաւել գործածական տեսակներից մինն է, ունի երկայնաձև բոլորակ, դեղին կամ թխագոյն, շատ անգամ մի կարմիր թաղանթիկով պատած հատիկներ յստակ և ղօրաւոր համով։

Ղահվէի առուտուրքը իւր շահաւէտութեամբ գերազանց է գրեթէ բոլոր միւսներից, ըստ որում 258 $^1/_2$ միլիոն ֆունտ Եւրոպայի մէջ միայն

գործ է ածվում։ Որովհետև ղահվին շատ հնշտ վեր է կալնում ուրիշ բաների համը, այս պատճառով նորա փաթաթելու և նաւի մէջ դնելու ժամանակին շատ զգուշութեամբ պիտոյ է նայել, թէ ինչ նիւթեր դրվում էին նորա մօտ· որովհետև սոցանից ստանում ղահվէն մի այնպիսի յատկութիւն, որ մի և նոյն տեսակի մէջ գոյանում մեծ զանազանութիւն։

Ղահվէծառի պտուղները առաւելապէս գործ են ածվում այն ընդհանրապէս յայտնի ըմպելին պատրաստելու, որ թէ Եւրոպացու և թէ Ասիացու համար դարձել է մի անհրաժարելի կարիք, որ թէև ամենաղքատ մարդը քանի մի անգամ խմում է օրը։ Եւրոպացիք պատրաստում են այս ըմպելին, ղահվէի հատիկները սաստիկ լուվելով կամ մանաւանդ թէ այրելով առանձին պատրաստութեամբ, նորում և շրջիների գործադրութեամբ, բայց Արաբացիք պէտք են ածում չբուված հատիկները, շատ անգամ և չորացուցած մնանիւթը որով պատած են նոքա· սա ասվում նոցա Սուլթանական ղահվէն (café à la Sultane) որ և առաւել նախապատիւ է համարված քան թէ ղահվէի հատիկներից պատրաստածը։ Այնպէս լուվելով, ինչպէս սովորական է Եւրոպայում, ղահվէի հատիկները ստանում են միայն այն առանձին ախորժելի համը· շատ զգուշութեամբ պիտոյ է նայել, որ պատշաճաւոր չափով լուվվեին հատիկները· սոքա պիտի այնքան երկար մնային լուվի վերայ, մինչև նոցա իւղային նիւթը բաժանվի նոցանից, և այդ բանը կարելի է նկատել հատիկների մակերևութի փայլողութենից, մի առանձին հոտից և ախորժելի դառնագոյն համից։ Զատից դուրս այրելով, ստանում ղահվէն մանաւանդ թէ մի ածխային համ։ Ղահվէի ըմպելին ներգործում սաստիկ դրգռելով մարսողական գործարանները և ջիղերի գործականութիւնը։ Նա ձեռնտու է մարսողութեանը, տալիս է զգաստութիւն, պահում արթուն և հասուցանում անտարակոյս օգնութիւն թեթև հիւանդութենների մէջ, զոր օրինակ գլխացաւութեան, թուլացած մարսողութեան, մորթի արտաշնչութեան ծուլանալու մէջ, մանաւանդ այն մարդերի համար, որ սովորած չէին նորա ամենօրեայ գործածութեանը։ Բայց դիւրագրդիռ մարդերի մէջ յառաջացնում նա արիւնի խռովութիւն և պատճառ է տալիս հեմորրոյիդեան ցաւի և կծկողական փորախտութեան։ Թանձր պատրաստութեամբ կարող է ղահվէն յառաջացնել դօսութիւն և զարկուած։ Երեխաներին առհասարակ վնասակար է նա, և չափահասների մէջ առաւել օգտակար է մաղաստ բնաւորութեամբ մարդերին։

Ջուր ղահվէն շատ օգտակարութեամբ պէտք են ածում որպէս բժշկական դեղ փոխոխական տենդերի, անդամացաւութեան համար,

Բայց Հոմէոպաթեան բժիշկները համարումեն զահվէն մի այնպիսի ճար, որ շատ բժշկական դեղերի ներդործութիւնը վերացնումէ, և այս պատճառով արգելումեն նորա պիտանութիւնը որպէս ըմպելի, բայց գործ են ածում նորան որպէս բժշկական դեղ։

Նորութիւն, որպէս մի պատուական հնար փարատելու զանազան վարակիչ հիւանդութեան նիւթեր, յայտնվել է զահվէի հատիկները։

Զահվէի հատիկների գործադրութիւնը որպէս ըմպելի, շառաւիղումէ Արաբիայից։ Ձրոյց կայ, թէ անասունները առիթ են տուել այդ գիւտին։ Մի հովիւ Արաբիայում սարերի մէջ արածեցնումէր ուղտեր, կամ թէ, ինչպէս միւսները ասումեն, այծեր, և նկատեց մի գիշեր, որ անասունքը ախոռի մէջ արթուն մնացին և ոստոստումէին այս կողմ ու այն կողմ։ Նա գանգատեց այս բանի վերայ իւր տիրոջը, մի արաբական վանքի մեծաւորին։ Սա գուշակելով, որ անասունների զուարթութիւնը պիտոյ է յառաջացած լինի նոցա կերակուրից, քննեց արօտատեղին և գտաւ այն տեղ զահվէծառի վայր թափած սերմերը։ Սոյանից մի քանիսը վեր կալաւ նա և տարաւ տուն, եփեց նորանց, խմեց նոցա ջուրը և զգայ իւր վերայ ևս մի մեծ զուարթութիւն։ Այս պատճառով պատուիրեց նա իւր դարվիշներին գործ գնել այդ նոր ըմպելին, արթուն մնալու համար, երբ որ պիտոյ էր նոցա բոլոր գիշերը աղօթք կատարելով անցուցանել մզկիթի մէջ։ Անտարակոյս ստուգվեցաւ զահվէի զօրութիւնը։ Արաբիայից, ուր զահվէըմպութիւնը սովորական է դարձել մօտ 15 րդ դարու կէսից միայն, սկսեալ 17 րդ դարու կէսից հետզհետէ տարածվեցաւ և բոլոր Եւրոպայի մէջ։ Սկզբումը որպէս Տաճկաստանը նոյնպէս և միւս տէրութիւնք Եւրոպայի սաստիկ ընդդիմացան զահվէխմութեան ներս բերելուն։ Զոր օրինակ Հանովրիայի մէջ գիւղական դատաւորքը, խլումէին զահվէի պատրաստութեան անօթը, և մինչև այժմ ևս, գիւղական մանրավաճառքը այն տեղ չուներն համարձակութիւն զահվէ վաճառելու, եթէ չկամին կորուսանել իւրեանց վաստակարարութեան իրաւունքը։ Այնու ամենայնիւ զահվէխմութիւնը զարմանալի կարճ միջոցում դարձել է մի ընդհանուր կարիք բոլոր ժողովրդակարգերի մէջ, և դորանով մի շատ մեծակշիռ առարկայ նոր ժամանակի քաղաքագործութեան և վաճառականութեան պատմագրութեան մէջ։

Մկրտիչ Լազեբեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԼԵՋՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԿԱՐԾԻՔՆԵՐ Ե.ՉԵՐՆԻՑ

Ի Ս. Պետերբուրգ.

Վհատելով Հայոց ազգի այժմեան դրութիւնը, զարմանում մարդ նորա կեանքի ողբալի հանգամանաց վերայ. այն հանգամանաց, որ հարկաւ պիտի շատ մեասակար ներգործութիւն ունենան նորա ապագայի վերայ եւս: Ամենայն տեղ յայտնապէս երեւում, որ օտար նիւթերը բռնութեամբ մտանում են մեր ազգի մէջ և նորա բնական և բարոյական զօրութեանը հասուցանում են ծանր և անբուժելի վէրքեր. Հայք ոչինչ տեղ մի աւելոր արգելք դէմ չդրեցին այդ օտար ազդեցութեանը և մինչև յայժմ ոչինչ հնարք չգտատրաստեցին իւրեանց ազգայնութիւնը պահպանելու համար. սորա պատճառը ոչ թէ այն էր, որ նոցա մէջ չկար ազգասիրական հոգի. ո՛չ, այլ ինձ թուի՝ թէ նոքա պարզ տեղեկութիւն չունէին՝ թէ ինչ է ազգայնութիւնը, որ հարկ էր պաշտպանել իբրև մի սուրբ բան, իւրեանց նախնիքից աւանդած: Այդ տեղեկութեան պակասութիւնը գլխաւորապէս կարելի է պատճառ համարել, որ մի ժամանակ հզօր և մի տեղ կենտրոնացած ազգը՝ որոյ թիւը երբեմն հասանում էր մինչ ՚ի 25 միլիոն հոգի,— այժմ ցանուցիր է եղել աշխարհի մէջ և թուով հազիւ հասանում մինչ ՚ի 4 միլիոն:

Այսպէս վաղուց արդէն ունէին մեծ իղձ դէպ ՚ի կրթութիւնը և լուսաւորութիւնը, ուստի և այժմ, մինչ մարդկային ընկերութիւնը յառաջխաղաց է դէպ ՚ի առաւել զարգացումը,— կրթութեան հարկաւորութիւնը առաւել շօշափելի է լինում: Ծնողաց գլխաւոր հոգսը այժմ ևս այն է՝ որ իւրեանց զաւակաց հարկաւոր ուսումնական անունդ և կրթութիւն տան. բայց ո՛ւր և ո՛րպէս, դի ահա տեսանում ենք, որ ազգային ուսումնարաններ չկան և հնար իսկ չկայ, գոնէ օտարազգի վարժարաններին մէջ, բայց իւրեանց աչաց առաջև, կրթութիւն տալ զաւակաց, ուստի հարկը ստիպում յուզարկել իւրեանց զաւակունքը հեռաւոր մայրաքաղաքներ և կրթել այն տեղ եղած օտար ուսումնարաններում. սոցա մէջ երեխայք իւրեանց մատաղ հասակում, իւրեանց

ժիր ընդունակութեան տարիքում, երբ ստացած տպաւորութիւնը պահպանվում մինչ ի գերեզմանի դուռը, — սկսումն, հրաժարված իւրեանց ծնողներից, բաց թողնել ընտանի սովորութիւնները և վարքերը, մոռանալ իւրեանց լեզուն, օտարանալ ընտանի եկեղեցուց և այսպէս, մինչ վերջացրած իւրեանց ուսումը, վարժարաններից դուրս կը գան, — նոքա հաղիւ թէ միտքերում պահումն իւրեանց հայկական ծնունդը և դառնումն ըստ ամենայնի օտարացած։ Ընդհանուվ ասկ կարելի է բացատրել այն յայտնութիւնը՝ թէ վասն որ լուսաւորութիւնը Հայոց մէջ այդքան ծանր է տարածվում, թէև հայկական ծնողք յամենայն ջանադիր են կրթել իւրեանց զաւակունքը։ Ըստ ասկ ակնարկ է՝ թէ նոքա, որք ստացել են Եւրոպական կրթութիւն, փոխանակ կրկին մտանելոյ իւրեանց ազգի ծոցը, փոխանակ իւրեանց գիտութեամբ գործակից լինելոյ Եւրոպական ուսմանց տարածութեան իւրեանց հայրենակցաց մէջ, փոխանակ նոցա ազգայնութիւնը զջրացուցանելոյ, ոչ միայն օտարանումն նոցանից, այլև յաճախ, աւաղ ասհաթոյս, իրրև ուրացողք իւրեանց ազգի, անարգումն և հայհոյում այն ամենայն, որ ինչ իւրեանց ազգային է, և այսպէս լուսաւորութիւնը փոխանակ ձեռնտու լինելոյ մտաւոր և բարոյական վերածնելութեան Հայոց, միայն նուաղեցնումէ նոցա նիւթական զօրութիւնը։

Շատ անգամ մտածելով իմ հայրենակցաց այդ ողբալի հանգամանաց վերայ, միտք արեցի վերջապէս օգնել այդ տխուր վիճակից ազատելոյն, այսինքն հնարք հասուցանել հայկական պատանեկաց, ստանալով Եւրոպական կրթութիւնը, արմատացուցանել իւրեանց մէջ եռանդուն սիրոյ զգացմունք առ իւրեանց եկեղեցին և ազգը, պարզ տեղեկութիւններ տալ նոցա իւրեանց հայրենեաց անցելոյ մասին, հասկացնել նոցա այժմեան դրութիւնը և պահպանել նոցա հաւատարմութիւնը ընտանի լեզուին, որ վէմ անկեան կարէ համարվիլ ազգայնութեան և միակ գանձ հասարակաց։

Որպէս Ռուսսիոյ բոլոր զօրութիւնը և գործունէութիւնը կենտրոնացած են պետերբուրգի մէջ և այս տեղ են միայն բովանդակվում մեծամեծ միջոցները կրթութեան համար, ուստի և Հայոց պատանեկաց թիւը, որք վաղումն այս քաղաք կրթութիւն ստանալ և բաղդ որոնել հասարակաց գործունէութեան ասպարիզում, — օր քան զօր յաւելանումէ, այս տեղ է նմանապէս, որ մասնաւոր կերպիւ հասանումէ վերոյիշեալ թշուառ վիճակը օտարութեան իւրեանց ընտանի ստացուածներից։ Ասան այսորիկ իմ վաղեմի սիրած խորհուրդս էր պետերբուրգի մէջ հաստատել մի այնպիսի վարժարան այս տեղ յուղարկված հայկական երեխայից համար, ուր կարող լինէին սոքա, ոչ թէ

իւրեանց ազգայնութիւնը ղՀել, այլ՝ Հայկական գերդաստանի մէջ, զօրացնելով և արմատացնելով իւրեանց ընտանի և ազգային յատկութիւնները, ստանալ նմանապէս այն կրթութիւնը՝ որ Հարկաւոր է Համալսարան և այլ առանձին ուսմանց վարժարաններ (спеціальныя заведенія) *մտանելոյ Համար* [1]: *Որպէս ոչ միայն մարդկային Հակմունքը և կալմուածքը զանազան են, այլև ոչ ամենայն մարդիկ մի չափ ժամանակի մէջ զարգացումն կ'ստանան, ուստի կրթուելոյ յաջողութեան Համար անշուշտ Հարկաւոր է, որ դաստատուութիւնը յարմարվի իւրաքանչիւր երեխայի զարգացման, ընդունակութեան և կազմուածքի Հետ. Նոյնպէս և գլխաւոր նպատակը կրթութեան, այսինքն մարդոյ բարոյականութիւնը պահանջումէ, որ վարժապետի ուշադրութիւնը կենդրոնաւորվի, որքան կարելի է, մօտրաթիւ աշակերտների վերայ:*

Ուրեմն ես չեմ կարող Համաձնել նպատակիս, եթէ իմ գործունէութիւնս տարածէի բազմաթիւ ուսանողների վերայ, ուստի և կ'նշանակեմ սոցա թիւը, ոչ աւելի քան քսան:

Հասկացած լինելով ըստ ամենայնի այդ ձեռնարկութեան ծանրութիւնը և պատասխանատուութիւնը, նախ քան զամենայն պարտաւոր Համարեցի ղիս մի քանի տարի շարունակաբար գործ ածել իմ անձնական պատրաստութեանը Համար, որպէս ղի արդար խղճմտանօք կարենամ կատարել այդ սրբազան պարտականութիւնը, որոյ Համար Հմրկ է ինձ Հաշիւ տալ առաջի Աստուծոյ և իմ ազգիս: Ահա այդ պատրաստութիւնքը, այդ ջանքը վերջացան 1859 Յունուարի մէջ. իմ վարժարանիս դուռները սիրով բացվումեն իմ մատաղ և սիրելի Հայրենակիցների Համար. իմ լոլոր Հոգևոր և մարմնաւոր կարողութիւնս ընծայումեմ իմ ազգիս: Տէր օգնեսցէ ինձ այս գժուարին գործի մէջ, մաղթանօք և բարեխօսութեամբ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, բազմաչարչար նահատակին:

Կարապետ Եզեանց.

Ուսումնարանի Հասցէն այս է. Герасиму Артемьевичу Эзову. Въ С. Петербургѣ у Владимірской церкви, въ Гребецкой улицѣ въ домѣ Туляковыхъ, квар. № 31.

Գրեանք, աշխարհացոյցներ, գործիներ և այլ ուսումնական նիւթեր աշակերտները կստանան Ուսումնարանիս. տարեկան գինն է 800 մանէթ:

---

[1]) Ցանկացողներ կարող են ուսանիլ արեւելեան լեզուներ. արաբերէն, պարսկերէն, տաճկերէն, Թուրքերէն և վրացերէն, նմանապէս և երաժշտութիւն:

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Կենդանական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, հասարակաւոր Ատեղաբաշխութեան, քիմիայի, Հանքաբանութեան և Փիզիօլօգիայի վերայ· այլև բանաւոր տունկերի, գիտութեան արժանի լոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Կարդալական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւններից· այլև կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը սոյնակ այս օրագիրը կարող են հաւաքցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. *կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցեով.* въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 *տետրակների գինը է* 8 *մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար* $9\frac{1}{2}$ *մանէթ:*

Печатать позволяется. С. Петербургъ, Августа 19-го, 1859 года.

Цензоръ В. Бекетовъ.